

2401

9(47.925)

9-47

1939

12012



ԳԵՈՐԳ ՄԵՍՐՈՊ

ՀԱՅՈՑ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԻՋԻՆ Բ. ՏԱԻԻ

Կ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



2004

ՏՊԱՐԱՆ «ՄԵՍՐՈՊ»

ԲԱԿՈՎՕ ՍՈՖԻԱ

1934

9(47.925)
Գ-47

(47. 925)

~~47~~

ԳԵՐԳ. ՄԵՍՐՈՊ

45

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



ՄԻՋԻՆ Բ. ՏԱՐԻ

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ՏՊԱՐԱՆ «ՄԵՍՐՈՊ»
ԲԱՆԿՈՎՈ ՍՈՑԻԱ.

1 9 3 4

12.6.36

26534-Ա.Զ.

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(ՄԻՋԻՆ Բ.)

ՄԱՐԶՊԱՆՆԵՐ ԵՒ ՈՍՏԻԿԱՆՆԵՐ

Ա. ԴԱՍ

ՅԱԶԿԵՐՏ Բ. ԵՒ ՎԱՍԱԿ ՍԻՒՆԻ

ՎԵՂՄԻՆԻՇՆԱԳՈՒՂ ՄԱՐԶՊԱՆ . — Պարսից թագաւորը , Արշակունեաց թագաւորութիւնը ջնջելէն ետքը , Հայաստան զրկեց Վեհմիհրշապուհ անունով մարդպանը՝ իբրև կառավարիչ : Ան խաղաղասէր մէկըն ըլլալով ուղեց Հայոց մէջ միաբանութիւն հաստատել : Քանի մը տարի ետք իրեն յաջորդեց Վասակ :

ՎԱՍԱԿ ՍԻՒՆԵԱՅ ԻՇԽԱՆԸ . — Վասակ նշանաւոր մէկն էր . Սիւնեաց նախարարութեան իշխանն էր : Ան սկիզբնէրը բաւական բարի գործեր ըրաւ . Ս. Մեսրոպի օգնեց , զպրօցներ բացաւ և եկեղեցիներ շինել առաւ , բայց յետոյ իր կրօնքն ուրացաւ և շատ չարիք հասցուց իր ազգին :

ՅԱԶԿԵՐՏ Բ. Ի ԿՈՒՒՆԵՐԸ . — Այդ ժամանակ Պարսից թագաւորն էր Յազկերտ Բ. , որ հզարա ու փառասէր մէկն էր . ան կ'ուզէր իր երկիրն ընդարձակել : Կուզէր նաև որ Հայաստանը միշտ իր ձեռքին տակ մնայ , Հայերը չապստամբին : Ան կը խոր-



575056. 9

հէր թէ Հայերը չեն ապստամբիր եթէ կրօնքով քը-
րիստոնեայ չըլլան ու Պարսիկներու նման կրակը
պաշտեն: Ուստի ուղեց Հայերն ուրացման ստիպել:

Ասկէ զատ Յազկերտ գիտէր որ Հոռոմները քը-
րիստոնեայ ըլլալով կ'օգնէին Հայերուն՝ որպէսզի
Պարսիկներու չհպատակին, օր մը իրենց հպատակեցը-
նելու համար: Այդ պատճառաւ նախ ուղեց Հոռոմ-
ներուն հետ կռուիլ ու յաղթել: Բազմաթիւ զօրք
ժողովեց և արշաւեց Հոռոմներու երկիրը . հասա-
մինչև Մծբին (Նիսիպիս) քաղաքը , շատ գաւառներ
աւերեց . Հոռոմներուն յաղթեց:

Հոռոմներու կամ Յոյներու թագաւորը՝ Թեոդոս
Բ. վախնալով , իր զօրապետը ընծաներով զրկեց
Յազկերտի . հաշտութիւն կնքեց և Յազկերտի պա-
հանջներն ընդունեց:

Այս յաղթութենէն ետք Յազկերտ պատրաստը-
ուեցաւ Հոնաց ղէմ կռուելու: Հոները բարբարոս ժո-
ղովուրդ մըն էին , որ միշտ կ'արշաւէին Պարսից
վրայ: Յազկերտ նամակներ գրեց Հայաստան և ու-
րիշ իրեն հպատակ երկիրներ . հրամայեց որ բոլոր
մեծամեծներն իրենց զինուորներն առնեն և Պարս-
կաստան երթան՝ Հոնաց ղէմ կռուելու համար: Հայ
մեծամեծներն ստիպուեցան երթալ:

Այսպիսի պատրաստութիւններ տեսնելէ ետք ,
Յազկերտ արշաւեց Հոնաց վրայ : Թէև սկիզբները
յաջողութիւն չունեցաւ , բայց վերջապէս յաղթեց:
Այս պատերազմը տևեց 7 տարի: Պատերազմի միջո-
ցին Յազկերտ հրամայեց որ իր բանակին մէջ և իր
հպատակութեան սակ գանձուող երկիրներու քրիս-
տոնեաներն իրենց կրօնը թողուն և կրակը պաշտեն:

ԴԵՆՃԱՊՈՒՆ ԵՒ ՄԻՀՐԵՆԲՐՍԵՂ . — Այդ ատեն
Հայաստան զրկեց նաև Դենջապուռի անուն իշխան մը
աշխարհագիր ընելու համար: Դենջապուռ տաւրք զը-

րտ. բոլոր մարդոց, եկեղեցականներուն և վանքերուն
վրայ և սկսաւ հաւաքել: Ասկէ զատ Վահան Ամա-
տունի հազարապետը պաշտօնէն հեռացնելով , անոր
տեղ պարսիկ մը զրաւ :

Միհրենբուսի անուն պարսիկ հազարապետը կամ
նախարարը , որ Յազկերտի խորուրդ սուած էր բո-
լոր քրիստոնեաներն ուրացնել , մտպետին և Յազ-
կերտին խորհուրդով նամակ մը գրեց Հայոց կաթո-
ղիկոսին և նախարարներուն: Այդ նամակին մէջ կը
ըսէր թէ քրիստոնէութիւնը սուտ ու սխալ կրօնք
մըն է և պէտք է հեռանալ անկէ: Միհրենբուսն այդ
նամակին պատասխան ուղեց:

Այն ժամանակ Ս. Մեսրոպի տեղ կաթողիկոս
եղած էր անոր աշակերտներէն մէկը՝ Ս. Յովսէփ ,
որ նամակն առնելուն պէս Արտաշատի մէջ ժողովի
հրաւիրեց բոլոր եկեղեցականներն ու նախարարու-
թիւնը: Անոնք գրեցին պատասխան մը , ապացու-
ցանելով թէ քրիստոնէութիւնը սխալ կրօնք մը չէ:
Ամէնէն ետքն ալ գրեցին. «Այս հաւատքէն ոչ ոք
կրնայ մեղ հեռացնել, ո՛չ մարդիկ, ո՛չ հուր, ո՛չ սուր:
Մեր մարմինը քու առջև է . ըրէ ի՛նչ որ կ'ուզես .
բեզմե տանջանք եւ մեզմե համբերութիւն, բու սուրդ եւ
մեք պարանցները: »

ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ՈՒՐԱՑՈՒԹԻՒՆԸ . — Թագա-
ւորը բարկացաւ: Հրամայեց որ Հայաստան գտնուող
նախարարները իրեն ներկայանան: Անոնք ստիպ-
ուեցան երթալ . բայց խօսք սուրին կաթողիկոսին որ
իրենց հաւատքին վրայ հաստատ պիտի մնան:

Յազկերտ խստութեամբ ընդունեց պանոնք և հը-
րամայեց որ հաւատքնին ուրանան . սպառնաց որ եթէ
չուրանան, պիտի չարչարէ: Հայաստան զօրք պիտի
զրկէ, իրենց կիներն ու աղաքը պիտի ջարդէ:

Նախարարներուն մէջ կային վասակը , վար-

դան Մամիկոնեանը և ուրիշներ: Անոնք սկսան մրտածել և վերջապէս որոշեցին երեսանց ուրանալ քրիստոնէութիւնը և երթալ Հայաստան: Յազկերտ շատ ուրախացաւ. առատ պարգևներ տուաւ. միայն Վասակի երկու որդիները պատանդ առաւ: Անոնց հետ գուշոյ մը զօրք դրաւ և 700 մող, որոնք պատուէր ստացան բոլոր եկեղեցիները քանդել և ատուշաններ կանգնել:

ԱՆՔՂ ԳԻԻՂԻ ԳԻՄԱԴԻՐՈՒԹԻՒՆԸ. — Նախարարներուն ուրանալը և մողերով դառնալը լսեցին Հայերը և շատ յուզուեցան: Անոնք ուխտ ըրին դիմադրել, հօր ու եղբոր, ամուսինի և բարեկամի չընայիլ: Նախարարներն ու մողերն եկան Հայաստանի սահմանազուտիւր՝ Անգղ գիւղին մօտ: Մոգպեան աւելելով փորձ մ'ընել, կիբակի օր մը մողերուն հետ գնաց եկեղեցին կործանելու: Հոն էր Ղեւոնդ Սրէյը, որ բոցաշուռն ձառ մը խօսելով, յորդորեց ամէնը թող չտալ ու դէմ դնել: Անոնք ալ բիրերով յարձակեցան մողերուն վրայ, ջախջախեցին անոնց գըլախները և ետ քշեցին: Մոգպետը տրտմեցաւ և վառակին ըսաւ.

— Թաղաւորին պիտի գրեմ որ ետ կենայ իւր դիտաւորութենէն, որովհետեւ անկարելի է մողութիւնը մացնել Հայոց մէջ. անգէնները որ այսպէս դիմադրեցին, հապա եթէ զինուածներն ալ միարանին, քի կրնայ անոնց դէմ դնել:

Վասակ հանդարտեցուց, քաջալերեց գոյն:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Արշակունեաց կործանումէն ետք մարգարան կըլլան նախ Վենմիհրապուռն, ապա Վասակ Սիւնի, Յազկերտ Բ. կը յաղթէ Յունաց եւ Քուշանաց (Հոնաց), կ'ուզէ Հայաստանը ամուր կապերով միացնել պարսիկ կառավարութեան: Դեն-

շապուհ կուգայ աշխարհագիր ընելու Հայոց երկիրը: Ծանր տուրքեր կը դնէ նաեւ եկեղեցիներու եւ վանքերու վրայ, Վահան Ամատունին պաշտօնազուրկ կ'ընէ: Միհրնեքսեհ եւս նամակ կը գրէ եւ կոչ կ'ընէ՝ մագղեզական կրօնըն ընդունելու: Հայերը կորովի կերպով կը պատասխանեն: Հայ նախարարներ կը բռնադատուին ուրանալու, երբ Հայաստանէն դուրս կը գտնուէին: Երեսանց կ'ուրանան. մողերով կը դառնան: Ղեւոնդ երէց Անգղ զիւղը՝ ուժեղ պաշտպանութիւն մը կը կազմակերպէ:

Բ. ԴԱՍ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՇԱՀԱՊԻՎԱՆԻ ԺՈՂՈՎԸ. — Մոգերու կոտորածէն ետք, բոլոր առ երեսու ուրացող նախարարները և նշանաւոր եկեղեցականները ժողով դումարեցին Շահապիվան քաղաքը: Անոնք երդում ըրին պաշտպանել իրենց կրօնը: Անոնցմէ մէկը չուզեց միարանիլ: գոյն բռնեցին և քարկոծեցին. անոր անունն էր Զանդազան: Այդ ժողովին մէջ չկար Վասակ. անոր ալ լուր զրկեցին և խնդրեցին որ իր միտքը յայտնէ: Վասակ միաբանեցաւ և ինքն ալ իր մտտանիով կնքեց ուխտագիրը:

Անոնք նամակներ զրկեցին Հոռոմներու Թեոդոս Բ. կայսեր և ուրիշ իշխաններու, որպէսզի իրենց օգնեն: Միւս կողմէ իրենք ալ յարձակեցան

Հայաստան մնացած մոզերուէն և պարսիկներուէն վրայ, սպաննեցին ու փախցուցին զանոնք:

ԱՂՈՒԱՆՐՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ . — Յազկերտ Հայաստանէն զատ կ'ուզէր Վրացիներն ու Աղուաններն ալ կռապաշտ դարձնել, ուստի արդէն անոնց երկիրը զինուոր զրկած էր: Հայերը, Վրացիներն ու Աղուանները դաշինք մը կնքած էին իրարու օգնելու համար: Աղուաններէն գուժկաններ եկան և յայտնեցին թէ պարսիկ զօրքերն սկսած են իրենց



Վարդան Մամիկոնեան

կրօնը ջնջել:

Վարդան Մամիկոնեան, Հայոց Սպարապետը, երբ լսեց այդ լուրը, անմիջապէս հայ բանակը երեք խումբի բաժնեց. առաջինը յանձնեց Ներշապուհ Արծրունիին և զրկեց պարսիկ սահմանադրուիւրը, որ հսկէ և պաշտպանէ, երկրորդը յանձնեց Վասակին, որ Հայաստանի պաշտպանութեան հոգ տանի. իսկ երրորդը ինք՝ Վարդան առաւ և գնաց Աղուաններու

օգնութեան:

Պարսիկ և հայ բանակներն իրարու ճակատեցան կուրբի եզերքները: Վարդան չուսով կարգի դրաւ իր զօրքը, սրտնք յարձակեցան Պարսիկներուն վրայ, յաղթեցին անոնց. կռաւրեցին, ատրուչանները կտրձանեցին. գրաւեցին բոլոր բերդերը: Վարդան հասաւ մինչև Հոնաց երկրին մօտերը և դեսպան զրկելով դաշինք կապեց անոնց հետ:

ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒՆ ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԻՒՆԸ . — Այս յաջողութիւններու ատեն յանկարծ Հայաստանէն դեսպան հասաւ և յայտնեց թէ Վասակ երդումը զերժեց, չատ նախարարներ իր կողմը չահեցաւ և սկըսաւ ատրուչաններ կանգնել:

Վարդան աճապարեց, անմիջապէս դարձաւ Հայաստան: Որովհետև ձմեռը վրայ հասած էր, զօրքին մեծ մասը իրենց տեղերը ցրուեց, պատուիրելով որ զարուենին հոբէն հաւաքուին:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ . — Միւս կողմէ Յազկերտ լսելով այս անյաջողութիւնները, ըսկաւ պատերազմի պատրաստութիւն տեսնել: Գարունը գալուն պէս չատ զօրք հաւաքեց և Մուշկան Նիւսալաուրա զորավարին յանձնելով զրկեց Հայոց վրայ: Հայերը չատ նեղ դրութեան մէջ էին. Հոռոմներու Թէոդոս կայսրը մեռած ըլլալով, անոր յաջորդը կարևորութիւն չտուաւ Հայերու խնդրանքին: Հայերն անօղնական մնացին. չատ նախարարներ Վասակի հետ սկսան Պարսիկներու կողմը բռնել:

Չասկի օրերը նոր անցած էին, երբ լուր եկաւ թէ Պարսից բանակը հասած է Հեր Էւ Ջարեւանդ դաւառը պարսկական սահմանադրուիւրին վրայ: Վարդան անմիջապէս հրամայեց որ բոլոր զօրքը հաւաքուին: Ժողովուեցան բոլոր Ուխտապաններ և

իրենց զինուորները, որոնց թիւն էր 60,000 հոգի : Անոնց գլուխն անցաւ Վարդան և շուտով գնաց Պարսից բանակին առջև, Արտազ գաւառը, Տղմուտ գետին եզերքը և բանակ դրաւ Աւարայրի դաշտը :

ԱՒԱՐԱՅՐԻ ԶԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Պատերազմին նախընթաց օրը բանակը սգեւորութեան մէջ էր. ամէնն ուրախ էին : Հոն էին Յովսէփ կաթողիկոսը, Վեռնիկ Երեցը և ուրիշ աչքառու եկեղեցականներ : Լուսադէմին պատարագ մատուցուեցաւ. ամէնքն ալ հաղորդուեցան. ճառեր խօսեցան : Վարդան խանդավառեց, հրաւիրեց բոլոր զինուորները և զօրազուխները որ քաջաբար կռուին, ինչպէս միշտ քաջ եղած են :

Վարդան իր զօրքը 4 գունդի բաժնեց . առաջինը յանձնեց Ներշապուհ Արծրունիին, երկրորդը՝ Խորէն Խորխոռունիի, երրորդը՝ Թաթուլ Վանանդեցիին, իսկ չորրորդ գունդը պահեց իրեն :

Պատերազմն սկսաւ գետին երկու կողմերէն նետաձգութեամբ : Հայերը խրախուսուելով իրենց սպարապետի ձայնէն առաջ անցան, գետին միւս կողմը ելան և սկսան ջարդել Պարսիկները : Վարդան ջախջախեց թշնամիին աջ թևը, մինչև անգամ մատեան գունդին մէջ շփոթութիւն ձգեց : Պարսիկներն ըսկսան փախչիլ : Այդ միջոցներուն Հայոց զօրքին մէկ մասը թուլցաւ և ետ քաշուեցաւ : Պարսիկները սիրտ առին ու ետ դարձան, փիղերով շրջապատեցին Վարդանը և իր ընկերները : Դիւցազնը ինկաւ և կռիւր վերջացաւ, երբ արդէն գրեթէ երեկոյ էր :

Վարդանի հետ այս պատերազմին մէջ հերոսի պէս մեռան Խորէն Խորխոռունի, Արշակ Պալուսի, Հմայեակ Դիմաքսեան, Դարեգին Սրուանձտեանց,

Վանան Գնտունի, և ուրիշ իշխաններ ու զինուորներ, ընդամէնը 1036 հոգի, իսկ Պարսիկներէն ինկան 3544 մարդ. որոնցմէ 9ը զրաւար էին : Պատերազմը տեղի ունեցաւ 451 Մայիս 26 ին :



Վարդանի գերեզմանը Խոյի մէջ

ՊՍՏԵՐԱԶՄԻՆ ՀԵՏԵՒԱՆԻՐԸ . — Հայերը թէև յաղթուեցան, բայց բարոյապէս յաղթեցին : Սպարապետին մահէն ետքը, Ուխտապահները չարունակեցին կռիւր . լեռները քաշուեցան ու երբեմն երբեմն կը յարձակէին Պարսիկներուն վրայ :

Հոները, որոնք զաշնակից էին Հայոց, յարձակեցան Պարսից միւս բանակներուն վրայ և սկսան կռտարել : Յազկերտ, տեսնելով այդ դժբախտութիւնները, հրաման ըրաւ Մուշկան Նիւսալաւոսի որ պատերազմը դադարեցնէ և Հոնաց վրայ երթայ : Վասակի սեղ մարզպան կարգուեցաւ նաև Ատրորմիլդ անուն Պարսիկը, որ հրաման ըրաւ եկեղեցիները բանալ և կրօնը պաշտել : Ան խոտաացաւ նաև

երկրին տուրքերը թեթեցնել : Միայն թէ իբրև ապրտամբուլեան պեա բռնեց Ս . Յովսէփը , Ս . Ղեւոնդը և ուրիշ եկեղեցականներ ու նախարարներ և զրկեց Պարսկաստան :

ՎԱՍՍԿԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ . — Վասակ փառաւոր ըզգեսաներով գնաց Պարսից արքունիքը :

Իսլոր հայ նախարարները , մտքերը և Պարսիկները պախարակեցին և ամբաստանեցին զայն թագաւորին առջև : Յազկերտ Վասակին երեսը աւու իր բալոր խարդախութիւնները և հրամայեց բանտարկել զայն : Վասակ կը կարծէր թէ թագաւորը պիտի պատուէ զինքը իր գործած արարքներուն համար , բայց բալորովին հակառակը գտաւ : Հանեցին անոր փառաւոր հագուստները և մահապարտի զգեստ հագցուցին : Վասակ բանտին մէջ թշուառութեամբ մեռաւ , մաքմինը սրղնոսեցաւ :

ՂԵՒՈՆԻԵԱՆՅ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ . — Յազկերտ հրաման ըրաւ նաև որ հայ նախարարները բանտարկեն : Իսկ հայ նշանաւոր եկեղեցականները , որոնք կապուած Պարսկաստան բերուած էին , հրամայեց սպաննել : Ամայի աեղ մը տարին զանոնք նախ յորդորեցին որ ուրանան քրիստոնէութիւնը , բայց անոնք հաստատուն մնացին իրենց հաւատքին վրայ : Այն ատեն չարաչար մահով սպաննուեցան : Այդ սպաննուող եկեղեցականներուն մէջ էին Ղեւոնդ երէց , Յովսէփ Կարողիկոս , այդ պատճառով ալ եկեղեցականներուն այդ խումբը կոչուեցան Ղեւոնդեանք , որոնք ինը հոգի էին :

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Մոզերու կոտորածէն ետք առերես ուրացողները ճա-

հապիվանի մէջ ժողով կը գումարեն եւ կ'երդնուն կռուիլ թշնամիին դէմ : Վարդան կ'ստիպուի Աղուանից օգնութեան երթալ գունդ մը առնելով , ուրիշ գունդ մը Պարսից կը ղըրկէ , երրորդ մը Վասակին կուտայ , Կուր գետին մօտ Պարսիկները կը յաղթուին : Վասակ երդումը կը դրժէ . պարսիկ բանակը կը հասնի շեր եւ Զարեանդ գաւառը : Վարդանանք կը դիմեն անոնց դէմ : Կուր տեղի կ'ուեննայ Տղմուտի մօտ . Աւարայրի դաշտը : Վարդան չորս մասի կը բաժնէ բանակը , որ կ'սլիսի խիզախել : Քաջ դիւցսգնը կ'իյայ 1036 քաջերու հետ , իսկ Պարսիկները կը կորսնցնեն 3544 մարդ , որոնցմէ ինը զօրավար էին : Հոներն ալ կ'ապստամբին : Ատորով իզտ կը կապէ եկեղեցականներն ու նախարարները եւ կը զրկէ Պարսկաստան : Վասակ ալ կ'երթայ վարձատրուելու , բայց աստիճանագուրկ կ'ըլլայ եւ բանտի մէջ կը մեռնի : Նախարարները կը բանտարկուին , քահանաները կը նահատակուին :



Գ . ԴԱՍ

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ . — Վարդանանց պատերազմէն ետքը Հայերը թէև հաստատուն մնացին իրենց կրօնին վրայ , բայց սոսկալի նեղութիւններ կրեցին : Հայ մեծամեծ նախարարները Պարսկաստան բանտարկուած էին : Անոնց կիներն ու զաւակները թշուառութեան մէջ էին : Բայց դարձեալ գոհ էին իրենց վիճակէն : Միշտ աղօթքի ետեւէ էին . ամբողջ 12 տարի նախարարները բանտը մնացին , մինչև որ Պարսից Պերոզ թագաւորին օրով դարձան Հայաստան : Քիչ մը ատեն խաղաղ ապրեցան . բայց Պարսիկները շարունակեցին իրենց հալածանքը : Ստո-

րին և անարժան մարդոց պատիւ կուտային հաւատ-
քը ուրացած ըլլալնուն համար . իսկ արժանաւոր
մարդիկը կ'անարգուէին :

Հայաստան շուտով սկսաւ վատթարանալ . Հա-
յոց զօրքը , որ ամէնէն քաջն էր և անուանի , ամէն-
քին ծաղր կ'ըլլար : Պերոզ թագաւորն անգամ կը
լսէր . « Իմ տէրութեանս ամէնէն անպիտան զօրքը
Ասորին է , բայց Ասորիներէն ալ յետինը Հայն է » :

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ . — Այդ միջոցներուն
քաջ իշխան մը ելաւ : անոր անունն էր Վահան



Վահան Մամիկոնեան

Մամիկոնեան , որ Վարդան Մամիկոնեանի Հմայեակ
եղբօր որդին էր : Վահան իր եղբայրներուն հետ գե-
րի էր Պարսկաստան : Սակայն յետոյ ազատ արձակ-
ուած էր ու հոն մեծցած : Երիտասարդ էր տակաւին
երբ Պարսիկները պաշտօն մը տուին անոր . Ոսկեհա-
տի գործին հսկողութիւնը : Վահան մեծ անուէն հա-
նեց . բայց հակառակորդները և նախանձոտներն իր
մասին քսութիւններ կ'ընէին :

Պարսից թագաւորին ըսին անոնք թէ՛ . « Վահան զը-
րամներն իր քով կը աւաքէ որ ապստամբի և խը-
ռովութիւններ հանէ » : Վահան երբ լսեց , անմի-
ջապէս իր մօտ գտնուած սակիները առաւ և Պարս-
կաստան՝ թագաւորին գնաց : Թագաւորը զարմացաւ :
Երբ Վահանի ըսուեցաւ թէ իր մասին ամբաստանու-
թիւն եղած է , պատասխանեց . « Ապստամբութիւն
խորհող մարդը իր քովի սակիները ձեզի չի բերեր » :
Թագաւորը զոչ մնաց : Վահան ստիպուեցաւ իրեն
հաւատքը ուրանալ առերես :

ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ . — Վահան
Մամիկոնեան թէև ուրացած էր իր կրօնը և դար-
ձած էր Հայաստան , բայց սոսկալի մտատանջութեան
մէջ էր . միջոց մը կը փնտռէր որ նորէն իր կրօնքին
գտնուայ : Հայ նախարարները լաւ գիտէին աս . և
որովհետև Վահան քաջ և խելացի էր , գիշեր մը
անոր մօտ հաւաքուեցան և յայտնեցին թէ միաբա-
նած են և կը խնդրեն որ Վահան իրենց գլուխն ան-
ցընի՝ իրբեւ զօրապետ :

Սորազէտ Վահան բաց ի բաց մերժեց . « Դուք
բան մը չէք կարող ընել , ըսաւ անոնց . դուք խա-
բերայ մարդիկ էք , լաւ է որ ձեր դատարկ խոր-
հորդներուն համար ինձի նեղութիւն չտաք » : Այս
կծու խոսքերը Վահանի սպասած արդիւնքը տուին .
բոլորն ալ ոտքի ելան և միաբերան գոչեցին .

— Լաւ է որ մեռնինք քան թէ ամէն օր եկե-
ղեցիին ու ծողովուրդին անպատուութիւնը շտե-
նենք : Այն ժամանակ ամէնքն ալ Աւետարանի վրայ
երդում ըրին և միացան : Բայց ներկաներէն մէկը՝
Վարազ-Շապուհ Ամատունի , գնաց գիշերով Պարսիկ
մարզպանին լուր տուաւ : Մարզպանը չիտեցաւ և
առտուն կանուխ ինքը , իր ընտանիքը և Պարսից
կռուակից նախարարները փախան դէպի Ասրպատա-

կան: Հայերը փախչողներուն ետեէն ինկան, ձեռք
անցուցին անոնց բեռնաւորուած ձիերը. գրաւեցին
Դուին քաղաքը, Սահակ Բագրատունի իշխանը մարդ-
պան դրին. Վահան Մամիկոնեանն ալ Սպարապետ
եղաւ:

ՍԿՈՒԻԻ ԿՈՒԻԻԸ . — Պարսիկ մարդպանը չու-
տով զօրք ժողովեց և դարձաւ Հայաստան, որպէս զի
Հայերը ժամանակ չունենան պատրաստուելու: Վա-



Մասիս լեռան վրայ Ակոռիի պատուուածքը
(Ակոռիի կոիւր տեղի ունեցած է Մասիսի այս կող-
մերը, երբ տակաւին կործանած չէր այն շէն գիւղը:)
հան և իրենց քաջերը հազիւ 400 հոգի էին, իսկ
Պարսիկները 7000 հոգի: Հայերը քաջուած էին Մա-
սիս լեռան կողին վրայ, Ակոռի գիւղին մօտ:

Պարսիկները տեսնելով Հայոց սակաւութիւնը,
յարձակեցան անոնց վրայ: Կռուի միջոցին Հայերէն
մէկ մասը անցաւ Պարսից կողմը: Բայց հայ քաջե-
րը ա՛յնչափ կորովի կերպով կռուեցան, որ Պարսից

մարդպանն սպանուեցաւ, զինուորները ջարդուե-
ցան ու ցիր ու ցան եղան: Այս կռուին մէջ մեծ ա-
նուսն հանեց Ներսէն Կամսարականը:

57556



Ներսէն Կամսարական
ՆԵՐՍԵՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ. — Վարդան Մամիկոնե-
ան երկու աղջիկ ունէր. ա) Շուշանիկ կամ Վար-
դենի և բ) Վարդանոյշ: Շուշանիկ ամուսնացած էր
Վրաց Վազգէն բղէշին հետ, իսկ Վարդանոյշ՝ Ար-
շաւիր Կամսարական հայ իշխանին հետ: Շուշանիկ
ունեցաւ երեք մանչ և մէկ աղջիկ գաւակներ, իսկ
Վարդանոյշ՝ երեք մանչեր. Ներսէն, Հրահատ և Սա-
հակ Կամսարականները: Ներսէն Կամսարական յոյժ
քաջ էր, Վահան Մամիկոնեանի աջ բողոքը:
Ազգ. Պատմ. Միջին Բ.



ՆԵՐՍԵ ՀԱՊԱՏԻ ԿՈՒԻՒԸ . — Պարսից թագաւորը լսելով իր զօրքերուն կոտորածը , նոր պատրաստութիւն տեսաւ և զրկեց Հայաստան : Հայերը դարձեալ քիչուոր էին : Կռիւը տեղի ունեցաւ Ներսեհապատս գիւղին մօտ : Պատերազմի միջոցին Հայերէն մաս մը սկսան ետ փախչիլ , որովհետեւ թշնամին թիւով շատ և հզօր էր : Վահան տեսնելով որ իր խօսքերը լսող չկայ խաչ հանեց և Կամսարական եղբայրներուն հետ նետուեցաւ թշնամիներուն մէջ : Պարսիկները շրփոթեցան և սկսան փախչիլ : Փախչող Հայերը ետ դարձան և յաղթանակը մնաց Հայերուն կողմը :

ՎԱԽԹԱՆԳԻ ԽՍՐՊԱՆՈՒԹԻՒՆԸ . — Վրացիներուն քրիստոնէայ թագաւորն էր Վախթանգ , որ դաշնակից էր Վահանի : Հայոց զօրքը հազիւ պիտի հանգստանար , լուր եկաւ թէ Պարսիկները վերադաստանար , լուր եկաւ թէ Պարսիկները վերադաստանար արշաւած են և Վախթանգ օգնութիւն կ'ուզէ , Վահան առաւ իր քաջերը և գնաց Վրաստան : Վախթանգ համոզեց իր որ Հոններն ալ իրենց օգնութեան պիտի դան : Պարսիկները ահագին բազմութիւնով յարձակեցան ափ մը Հայերուն վրայ . Վախթանգ խափած էր և Հոնները չէին եկած , հայ ու վրացի զինուորներէն մաս մը դարձեալ սկսան փախչիլ և սրտալ . « Հայերը փախան , գլուխնիդ աղատեցէք » : Վահան կրկին խաչակնքեց և ահ ու սարսափ ձգեց Պարսից բանակին մէջ : Այս պատերազմը դժբախտ եղաւ Հայերուն համար , որովհետեւ հոն մեռան Սահակ Բագրատունի Մարզպանը և Վասակ Մամիկոնեանը , իսկ Հրահատ Կամսարական , Ներսեհին եղբայրը , գերի ենկաւ : Հայերը դարձան Հայաստան . սկսան միշտ փոքր թիւերով կռուիլ ու յաղթել :

ՆՈՒԱՐՍՍԿԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ . — Այդ միջոցներուն Պերոզ գահազուրկ եղաւ և անոր տեղ թագաւոր եղաւ եղբայրը Վաղարշ : Վաղարշի հասկացիցին

Հայոց քաջութիւնը և կրօնափոխ դարձնելու անկարելիութիւնը , սուտի ան Նիխուր անուն զօրավարը զրկեց զօրքով Հայաստան , որ Վահանի հետ բարեկամական դաշինք հաստատէ : Նիխուր եկաւ Հեր և Զարեանդ գաւառը և պատգամաւոր զրկեց Վահանի իր գալուստին նպատակը յայտնելով : Վահան ժողով ըրաւ և որոշեցին երեք պայման առաջարկել . 1 . Կրօնի կատարեալ ազատութիւն , 2 . անպիտան մարդոց պաշտօն եւ պատիւ չտալ , 3 . Զրպարտութիւններուն հաւատ չընծայել , այլ բնեւ եւ յետոյ վրնիւ տալ : Նիխուր սիրով ընդունեց այս պայմանները և հրաւիրեց Վահանը , որ իր մօտ երթայ : Վահան մեծ հանդէսով , զինուորներով գնաց Նիխուրի բանակը , նախ պատերազմի փոդերը գարնել տուաւ ,



Վահան Մամիկոնեան կը պատուրուի Պարսից արեւայեկ

Նիխուրի բանակը չփոթեցաւ : Երբ Վահան ներս մտաւ Նիխուր դիտել տուաւ թէ հպատակ իշխան մը այդ

պէս չէր կրնար բանակ մանել . վաճան պատասխանեց . « Դուն նախ զիս հպատակ ըրէ Արեաց արքայիչ, յետոյ ես լաւ զիտեմ ձեք կարգն ու կանոնը » : Ապա սիրալիր կերպով տեսնուեցան և հաշտութիւն կընքեցին , 484 ին : Պարսիկ մը Անդեկան անուն մարդպան կարգուեցաւ և զօրապետութիւնը յանձնուեցաւ . վաճանի : Սակայն քիչ ետքը տեսնելով վաճանի կարգութիւնը մարդպանութիւնն ալ անոր յանձնուեցաւ , 485 ին :

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Վարդանանց պատերազմէն ետք Հայաստան թշուառ վիճակի մը կը մատնուի . Հայը Ասորիէն աւելի ստորին կը նկատուէր : վահան կ'ուզէ հասկցնել թէ Հայը վատ չէ, վահան վարդանի եղբօր որդին էր , ոսկեհատի գործին հսկողն էր : Ան կ'ստիպուի հաւատքն առերես ուրանալ , Հայ նախարարներէն մէկ մասը կը միաբանի , վահանի առաջնորդութեամբ կ'պատամբի . Ակոռիի կռուին մէջ 400 հոգիով 7000 ի դէմ կը կռուին ու կը յաղթեն : Ներսէսի կամսարական վահանի աջ քաղուկը կ'ըլլայ : Ներսէսապատ եւ կուր գետին մօտ կռիւներ կը մղուին . վահան կը խաչակնքէ եւ յաղթանակ կը տանի . Պերոպի յաջորդը Վաղարշ Նիխոր զօրապետը կը զրկէ հաշտուելու հատար : Հայերը 3 պայման կ'առաջարկեն , որոնք կ'ընդունուին . Անդեկանէն ետքը վահան կ'ըլլայ մարզպան :

ՉԱՐԴԱՅՄԱՆ ԲՍԺԻՆ . — Կարելի է վրաց Աշուշա բղեշխին, վաղգէնի եւ վախթանգի մասին, ինչպէս չոնաց, պարսիկ կրօնին վրայ . քիչ շատ ծանօթութիւններ տալ աշակերաններուն . բսել նաեւ թէ ո՛վ է վահանի պատմիչը՝ Վազար փարպեցի :



Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ

ՎԱՐԴ, ՄԺԷԺ ԳՆՈՒՆԻ ԵՒ ՎԱՐԴԱՆ Բ.

ՎԱՀԱՆԻ ՎԵՐՁԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ . — Պարսից Վաղարշ թագաւորին օրով Հայաստան խաղաղ վիճակ մ'անցուց : Բայց երբ անոր յաջորդեց արիւնարբու Պերոպի որդին Կուստ , նորէն վրդովուեցաւ անոր խաղաղութիւնը : Կաւատ ջրեց իր նախորդներուն տուած արտօնութիւնները եւ հրաման ըրաւ որ դարձեալ հալածեն Հայերը : 493 թուականին Հայաստան կրկին լեցուեցաւ մոգերով . վահան Մամիկոնեան ղեռ ողջ էր : Թէեւ ծերունի էր , նորէն սեռ բաւալ գէնքը եւ նախարարներուն հետ միաբանած կոռորեց Պարսից զօրքն ու մոգերը : Կաւատ զայրացաւ . կը պատրաստուէր բազմաթիւ զօրքով դիմել Հայաստան , բայց իր հակառակորդները զինքը գահագուրկ ըրին : Նորէն թագաւոր եղաւ թէեւ , բայց հաշտուեցաւ Հայոց հետ : Անկէ ետք վահան խաղաղօրէն կռուարեց եւ մեռաւ 25 տարի իշխելէ ետք :

ՎԱՐԴ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ . — Անոր տեղ մարզպան եղաւ իր Վաղ եղբայրը : Վարդ քաջ էր վահանի նման . անոր հետ պատանդ տարուած էր Պարսկաստան . վահան երբ կը պատերազմէր , օր մը յանկարծ մէջտեղ ելաւ Վարդ . ան փախուտ տուեր էր Պարսից երկրէն : Կաւատ , Պարսից թագաւորը չէր ուզեր որ Վարդ մարզպան մնայ . այդ պատճառով ամբաստանութիւններ ըրաւ անոր վրայ , իշխանութիւնէ հանեց եւ անոր տեղ պարսիկ մարզպան մը զրկեց :

ՄԺԷԺ ԳՆՈՒՆԻ ԵՒ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ . — Կաւատ տեսնելով որ Հայերը նորէն սաք պիտի ելնեն , ետ կանչեց Պարսից մարզպանը և անոր տեղ դրաւ Մժեժ Գնուլի քաջ իշխանը : Ան քաջութեամբ դիմադրեք էր Հոնկերուն , երբ այս գերջինները Հայաստան կ'ուզէին արշաւել : Մժեժ 30 տարի կռուվարեց երկիրը : Մժեժէն ետքը դարձեալ Գեեշապուհ պարսիկը իբրեւ մարզպան զրկուեցաւ : Այս պարսիկը և անոր յաջորդող ուրիշ մէկ քանի պարսիկ մարդպաններ սկսան դարձեալ հալածել Հայերը : Իսկ

Սուբէն մարդպանը չափն անցուց : Ուստի Հայերը դարձեալ սաքի ելան . անոնց առաջնորդն էր Վարդան Բ. Մամիկոնեան , որ Հոռոմներու Յուստինոս կայսրէն օգնութիւն խնդրեց : Յուստինոս խոստացաւ : Վարդան յարձակեցաւ Սուբէնի վրայ , ըսպաննեց զայն և զօրքն ու մոգերը կոտորեց , ցրուեց : Պարսից թագաւորն էր այն ժամանակ Խոսրով , որ երկու անգամ զօրք զրկեց Վարդանի վրայ : Առաջին բանակը բոլորովին փճացաւ : Բայց երկրորդ բանակին առջև , Վարդան անսնելով Հայոց անմիաբանութիւնը , զնաց Պոլիս Յուստինոսէն օգնութիւն առնելու : Կայսրը զօրք զրկեց , սակայն երբ անոնք Հայաստան եկան , Պարսիկները արդէն տիրեր էին անոր : Խոսրով Հայոց վրայ մարդպան դրաւ Վլդոն—ձիւրը պարսիկը և պատուիրեց որ Հայերուն հետ սիրով վարուի : Անիկա Հայաստանի վերջին պարսիկ մարդպանը եղաւ :

ՄԲԲՍ ԲԱԶՄԱՅԱՂԹ . — Պարսից Խոսրով թագաւորը Հայոց վրայ մարդպան կարգեց Սմբատ Բագրատունի իշխանը , որ իր բազմաթիւ յաղթանակներուն համար կոչուեցաւ Բագմալաղք : Սմբատ խաղաղ կերպով թագաւորեց երկիրը 8 տարի և մեռաւ :

ԳԱՅԼ ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ . — Մինչդեռ Վերին Հայաստանի վրայ կ'իշխէին Սմբատ Բագմալաղքի նման հայ մարդպաններ , Տարօնի (Սասուն) մէջ կ'իշխէր Մամիկոնեաններու քաջ նախարարը , որուն անունն էր Մուշեղ : Ան մեծ քաջութիւններ ըրած էր և չատերը սքանչացուցած էր իր վրայ : Պարսից թագաւորը զիսէր անոր քաջութիւնը : Ուստի երբ անգամ մը 140,000 զօրքով Հոռոմներու Փոկաս թագա-

ւորին դէմ պատերազմի կ'երթար (603 թուականին) ուղեց Մուշեղն ալ իրեն հետ առնել և յանձնարարեց որ առնէ իր զինուորները և իրեն հետ երթայ : Մուշեղ ձերացած էր արդէն : Ան չուղեց Պարսից Խոսրով թագաւորին օգնել , որովհետև չէր ուզեր Հոռոմներու թագաւորին հետ թշնամանալ , քանի որ իր երկիրը աւելի մօտիկ էր Հոռոմներու երկրին : Խոսրով պատերազմի դնաց , բայց միաքը դրաւ Մուշեղը պատժել : Երբ կը դառնար և Կարին քաղաքը կը գտնուէր , իր քեռորդի Միհրանին 30,000 զօրք յանձնելով Մուշեղի դէմ զրկեց :

ԳԱՅԼ ՎԱՀԱՆ ԵՒ ԻՐ ՀՆԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ . — Մուշեղ քաջ և խելացի ազգական մը ունէր , Վահան անունով , որ իր խորագիտութեան համար կոչուեցաւ Գալլ : Մուշեղ երբ իմացաւ Միհրանի դաւաճաւոր , իր բանակը յանձնեց խորամանկ Վահանի : Գալլ Վահան , իր զինուորները մէկ երկու տեղ դարանի դնելէ ետք , զնաց Միհրանի մօտ , որ Մուշաւանը բանակ դրած էր : Վահան այնպէս ցոյց տուաւ իբրև թէ ինքը թշնամացեր է Մուշեղի դէմ և եկեր է Միհրանին օգնելու , ճամբայ ցուցնելու և Մուշեղը սպաննելու համար : Միհրան ուրախացաւ և իր ամէնէն քաջ զինուորները Վահանին յանձնեց , անոնցմէ 50 հոգի մօտ զիւր մը ձգեց և պատուիրեց որ երբ իրենց լուր զրկէ , փութան Միհրանին և ուրիշ 2000 զօրք ալ բերեն : Իսկ մնացեալ զինուորները , գըրեթէ 4000 հոգի , տարաւ Օձ քաղաքը , պարսիկները գտնելու սուտ և նշան ընելուն պէս իր պահուած քաջերը յարձակեցան Պարսիկներուն վրայ և կոտորեցին : Անկէ ետք լուր զրկեց գիւղը գտնուող 50 զինուորներու , որոնք գացին 2000 զօրք ևս բերին : Այն ատեն մեռած պարսիկներուն զգեստները

Հայերուն հազցնելով Օձ քաղաքին առջև կեցուց և պատուիրեց որ երբ Պարսիկ զօրքին զալը տեսնեն յաղթութեան փողը հնչեցնելով քաղաք մանեն : Այդպէս ըրին , որով 2000 զինուորներն ալ կհատրուեցան : Այդպիսի խորամանկութիւններով Գայլ Վահան գրեթէ փճացուց Պարսից բանակը , առանց իմացաւ Միհրանի զլիսուն եկած զժբախտութիւնը նոր բանակ մը զրկեց Տարօն : Այդ ժամանակ Մուշեղ անդաւակ մեռնելով անոր յաջորդեց Գայլ Վահան , որ 28,000 ընտիր զօրքով պատրաստ կեցաւ : Խորամանկութեամբ հանգիստ մը նստեցաւ Մուշի մէջ , իրբեւ թէ բնաւ ոյժ և կոռուելու միտք չունի : Պարսից զօրապետը Վախրանգ Վահանի անշարժութիւնը երկիւղի տեղ դնելով , 4,000 մարդ զրկեց անոր վերայ : Դուրս եկաւ Վահան իր Սմբատ սրդիին հետ . զանոնք ջարդեց . 50 հոգի հազիւ փախան : Ուրիշ 5,000 հոգի եկան . անոնք ալ ջարդուեցան :



Գայլ Վահան Մամիկոնեան

ցընելու Միհրանին : Ապա , քանի մը օրէն աւետիս զրկեց Միհրանին թէ յաղթած են Մուշեղի զինուորներուն : Քիչ մը ետքը 100 հաւատարիմ քաջերով ինքն ալ գնաց Միհրանին մօտ : Խնջոյքի միջոցին սպաննեց Պարսից զօրապետը՝ իրեններուն հետ : Յարձակեցաւ մնացեալ զօրքին վրայ և կոտորեց :

ՈՒՐԻՇ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ , — Երբ Խոսրով իմացաւ Միհրանի զլիսուն եկած զժբախտութիւնը նոր բանակ մը զրկեց Տարօն : Այդ ժամանակ Մուշեղ անդաւակ մեռնելով անոր յաջորդեց Գայլ Վահան , որ 28,000 ընտիր զօրքով պատրաստ կեցաւ : Խորամանկութեամբ հանգիստ մը նստեցաւ Մուշի մէջ , իրբեւ թէ բնաւ ոյժ և կոռուելու միտք չունի : Պարսից զօրապետը Վախրանգ Վահանի անշարժութիւնը երկիւղի տեղ դնելով , 4,000 մարդ զրկեց անոր վերայ : Դուրս եկաւ Վահան իր Սմբատ սրդիին հետ . զանոնք ջարդեց . 50 հոգի հազիւ փախան : Ուրիշ 5,000 հոգի եկան . անոնք ալ ջարդուեցան :

ՍՄԲԱՏ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ . — Այդ միջոցին Վահան ծերացած ըլլալով մեռաւ , անոր յաջորդեց Սմբատ Վախրանգ այլեւս վախ չունենալով , յարձակեցաւ Սմբատի վրայ , որ 10,000 զօրքով յաղթեց անոր Վախրանգն ալ սպաննեց , անոր կիներ ու զաւակները գերի տարաւ . 20 տարի ետքը Վախրանգի եղբայրը Սաբէն եկաւ զօրքով , բայց ինքն ալ սպաննուեցաւ :

ԴԱԻԹ ՍԱՀՍՈՌԻՆԻ . — Երբ Տարօն այսպիսի կռիւներու մէջ էր , Վերին Հայաստանի մէջ Սմբատ Բագմայաղթի տեղ մարզպան եղաւ Դաւիթ Սահառունի (600 թուականին) , որ 23 տարի խաղաղ կառավարելէ ետքը անցաւ Յունաց երկիրը . Հռոմներու Հերակլ կայսրը Դաւիթը սիրով ընդունեց եւ Հայաստանի կիւսապաղատ (կուսակալ) կարգեց : Դաւիթէն ետքը Վարազփրոց եւ Թեոդորոս Ռոսուկի իշխաններն ալ կառավարեցին Հայաստանը :



Գ. ԴԱՍ

ԱՐԱԲ ՈՍՏԻԿԱՆՆԵՐ

ԱՐԱԲՆԵՐԸ ԵՒ ՄՈՒՀԱՄՄԷՏ . — Արաբները նշանաւոր ցեղ մըն են , որ կը բնակէին Արաբիայի մէջ : Անոնք կոպալաչտ էին և կը պաշտէին բազմաթիւ աստուածներ , իւրաքանչիւր ընտանիք իրեն աստուածն ունէր : Անոնք ընդհանրապէս կը բրնակէին վրաններու տակ և թափառիկ էին : Անոնք կը պաշտէին նաև Արևը , Կուսինը , աստղերը և այլն : Ամէն տարի ուխտի կ'երթային մեծ և նշանաւոր աստուածներուն : Մուհամմէտ արաբ մըն էր , որուն հայրը մեռած էր երբ մանուկը զեռ ծնած չէր . մայրը մեռած էր Մուհամմէտի 6 տարեկան եղած ատեն : Մուհամմէտ հիմնեց իսլամական կրօնը եւ միացուց բոլոր արաբ ցեղին տոհմերը : Հրաման ըրաւ նաև իր կրօնը տարածել աշխարհի ամէն կողմը : Մուհամմէտ մեռաւ 632 ին և անոր յաջորդը կամ իսլամական եղաւ Ապուպիքիմ , որմէ ետքը՝ էօմէր : Էմիրի օրով արաբական զինուորները յարձակեցան Պարսկաստան . Պարսից վերջին թագաւորը փախաւ դէպի Կեդրոնական Ասիա , երկիրը մնաց Արաբներուն ձեռքը 636 թուականին :

ԱՐԱԲԱՅԻՈՅ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱԽԱՆԻՔԸ . — Պարսկաստանի վերջնականապէս տէր ըլլալէն ետքը , Արաբները 640 թուականին յարձակեցան Հայաստան : Անոնց Ապախարահման զօրապետը 18,000 զօրքով մտաւ Տարօն , ուր կ'իշխէր այն ժամանակ Գայլ Վահանի թոռնորդին , Տիրան Մամիկոնեան : Տիրան լուր զրկեց բոլոր հայ նախարարներուն որ զօն և

իրեն միանան , վանելու համար թշնամին : Բայց ոչ ոք լսեց անոր : Տիրան 8,000 զօրքով քաջութեամբ դէմ ելաւ Ապախարահմանի : Կռուի միջոցին Սահուռ Անձեւացի հայ նախարարը թշնամիին կողմն անցաւ : Տիրան յաղթուեցաւ : Արաբները մտան Հայաստան , գրաւեցին Դուին մայրաքաղաքը , 12,000 հոգի կոտորեցին և 35,000 զէրի տարին :

ԱՐԱԲՆԵՐՈՒ ԵՒ ՅՈՅՆԵՐՈՒ ՄՐՅԱԿՅՈՒԹԻՒՆԸ .

— Արաբները այս առաջին արշաւանքէն ետքը ետ քաշուեցան : Յոսեպ կամ Հոռոմներու կայսրը Հայոց վրայ Կիւրապաղատ կարգեց Վարապիրոց Բագրատունիին և որդին Սմբատը : Արաբացիները երբ լըսեցին այս բանը մեծ բանակով մտան Հայաստան : Հայերը չկրնալով դէմ դնել և տեսնելով որ Յոյներըն ալ օգնութիւն չեն զրկեր , Արաբներուն հըպատակեցան , 647 ին : Կոստանդ կայսրը լսեց և բարկանալով՝ զօրքով եկաւ Հայաստան . Հայերուն ներկեց և Դուինի մէջ պահապան զօրք թողելով մեկնեցաւ : Արաբացիք անմիջապէս եկան և Յոյները քչեցին Հայոց երկրէն , ժողովուրդին վրայ ալ ծանր հարկեր դրին : Ահա այսպէս բաւական երկար ժամանակ Հայաստանը խաղալիկ եղաւ երկու թշնամի բանակներու սաքին տակ :

ՈՍՏԻԿԱՆՆԵՐ . — Երբ Յոյները կը զրաւէին Հայաստանը , հայ կիւրապաղատներ կը դնէին , իսկ երբ Արաբները գրաւէին , իրենց կողմէ՝ հայ կամ արաբ ոստիկաններ կը կարգէին : Ոստիկանները ամիրայ ալ կը կոչուէին և պարտաւոր էին Հայաստանը կառավարել և տուրքերը հաւաքել : Հայերը վերջնականապէս Արաբներու տիրապետութեան տակ ինկան 693 ին :



Բ Ն Ք Ն Ր Յ ՈՒ Մ

ԱՐԱՐ ՈՍՏԻԿԱՆՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԷՆ

ԱՊՏՈՒԼԼԱՀ . — Առաջին ստաիկանն եղաւ Ապտուլլահ , որ 694ին արար զօրքով եկաւ Դուին քաղաքը հաստատուեցաւ : Առաջին գործը եղաւ նախարարները նենդութեամբ բռնել և կալուածները անոնց ձեռքէն խլել : Բոննց նաև Սահակ կաթողիկոսը և Սմբատ Բիւրատեան Բագրատունի իշխանը և չըզթայակապ Դամասկոս զրկեց : Սմբատ հնարքով ազատեցաւ և Յուստինեանոսի օգնութեամբ , վարդանակերտի մօտ , պատերազմեցաւ և աջնպէս ջարդ մը տուաւ որ Ապտուլլահ հաղիւ կրցաւ իր զլուխն ազատել :

ՄԷՀՄԷՏ . — Երկրորդ ստաիկանը եղաւ Մեհմետ կամ Մոհմատ , որ բազմաթիւ զօրքով եկաւ Հայաստան : Ներսէս կամսարական Սմբատ բազրատունիի հետ յարձակեցաւ անոր վրայ , զօրքը ջարդեց և Մէհմէտը փախցուց : Մոհմատ զարձաւ աւելի մեծ բազմութեամբ իր պարտութեան վրէժը լուծելու համար : Սահակ Զորափորեցի կաթողիկոսը տեսնելով որ Մոհմատ սոսկալի չարիք պիտի հասցնէ Հայաստանի , անոր առջև ելլելու համար ձամբայ ելաւ : Ծամբան կաթողիկոսը մեռաւ . բայց մեռնելէ առաջ նամակ մը գրեց Մոհմատի և պատուիրեց որ մեռած վիճակին մէջ ձեռքը դնեն : Երբ Մոհմատ իմացաւ կաթողիկոսին մահը , գնաց անոր մօտ . աւանդութիւնը կ'ըսէ թէ կաթողիկոսին ձեռքը ինքնիրեն երկարեց նամակը Մոհմատի , որ կարգաց և որոշեց

չվնասել Հայոց երկրին :

ԿԱՇՄ , ՄՐՈՒԱՆ . — Մոհմատի յաջորդեց Կաշմ ստաիկանը , որ Հայերն ընկձեղաւ համար բոլոր նախարարները խաբէութեամբ ժողովեց և Նախիջևանի եկեղեցիին մէջ այրեց . անոնց մէկ մասը գերի զըրկեց Դամասկոս : Կաշմէն ետքը ուրիշ բազմաթիւ ստաիկաններ ալ եկան , որոնք նոյնպէս մէյմէկ չարիք կը հասցնէին . անոնց մէջէն երբեմն բարի և խաղաղասէր մարդիկ ալ կ'ելլէին : Աստուծոյ մէկն էր Մոււան ստաիկանը , որ քաղցրութեամբ վարուեցաւ Հայոց հետ և Աշոտ Բագրատունիին « Իշխանաց Իշխան » կոչեց և ապա ստաիկանութիւնը Աշոտին յանձնեց :


ՊԷՔԻՐ , ՀԱՍԱՆ , ԱՓՇԻՆ ԵՒ ԱՊՈՒՍԷԹ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ . — Չար և խարդախ ստաիկաններ եղան Պեֆիր և Հասան , որոնց օրով Հայ նախարարները ստիպուեցան ապստամբել Մուշեղ Մամիկոնեանի առաջնորդութեամբ և ջարդեցին անոնց զօրքերը : Արարները 30,000 զօրքով մտան Հայաստան , Հայերը իրենցմէ 6 անգամ աւելի թիւով զօրքին առջև խոնարհեցան : Բաւական տարի ետքը Բագրատ Բագրատունի դաշնակցեցաւ Բաբան պարսիկին հետ և զարձեալ ապստամբեցաւ : Ավշին անոնց դէմ գնաց , Բաբանը բռնեց : Բազրատի դէմ եկաւ Ապուսեթ ստաիկանը , որ Տարօնի մէջ բռնեց զայն և ամիրապետին զրկեց : Մասունցիք լսելով իրենց սիրելի իշխանին գերութիւնը , Յոնան անուռ լեռնցի մը առաջնորդութեամբ Մուշի զաշտին մէջ սպաննեցին Արուսէթը և զօրքն ալ ջարդեցին : Ահա այս կռիւներն են որոնց վրայ մեր պապերը շինած են Սաւունցի Դաւիթի , Մեհրի առասպելները :

ԲՈՒՂՍ . — Ամիրապետը զայրացաւ և Բուղա արիւնարբու ստաիկանը Հայաստան զրկեց : Բուղա արիւնով ներկեց Հայոց երկիրը : Բազմաթիւ իշ-

խաններ զերի բռնեց, խարդախութեամբ կապեց և ամիրապետին զրկեց: Ամէնքն ալ չարչարուեցան, ոմանք հաւատքնին ուրացան, չուրացողներն ալ նահատակուեցան: Ատոնցմէ մէկն էր Սմբատ Բագրատունին, որ նահատակուած ըլլալուն և քրիստոնէութիւնը խոստովանած ըլլալուն համար կոչուեցաւ Խոստովանող:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Մուհամէտ կը հիմնէ Մահմետականութիւնը - էօմէրի օրով Արարները կը գրաւեն Պարսկաստանը եւ կը մտնեն Հայաստան: Երկար տարիներ Արարները եւ Յոյները իրարու ձեռքէ կը խլեն Հայաստանը, բայց շվերջապէ կ'իյնայ Արարներուն ձեռքը, որոնք ուսիկանեալ կը զրկեն: Այդ ոստիկանները կը գործեն անգթութիւններ, այդ պատճառով Հայերը քանի մը անգամներ կ'ապստամբին: Ոստիկաններուն մէջ նըշանաւոր կ'ըլլան Մոհմատ եւ Բուդա, իրենց անգթութիւններով:



Անիի պեղումներէն. — Կարողիկոսարանը

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Ե . Դ Ա Ս


ԱՇՈՏ Ա . ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Սկիզբէն ի վեր Հայաստանի մէջ կային բազմաթիւ նախարարութիւններ. 400էն աւելի էին անոնք: Այդ բոլոր նախարարները ունէին իրենց սեփական երկիրները և անկախ էին իրարմէ: Անոնց ամէնէն գլխաւորներն էին. Արժուցիք, Սիւնիք, Մամիկոնեանք եւ Բագրատունիք: Անոնք այնչափ զօրաւոր էին և ընդարձակ երկիրներ ունէին որ կը փափաքէին թագաւոր ըլլալ: Մերուժան Արժուցիք և Վասակ Սիւնի իրենց չար գործերով ասելի ըրին իրենց տոհմերը: Մամիկոնեանները նշանաւոր եղան և տըւին Մուշեղի, Վարդանի, Վահաներու պէս քաջեր, որոնք իրենց ազգը պաշտպանեցին: Բագրատունիներն ալ նշանաւոր եղան: Կը կտրծուի թէ անոնք Հրաչեայի օրով Պաղեստինէն բերուած Հրեաներէն մէկին սերունդէն ըլլան, սակայն ասիկա սոսոյց չէ, որովհետեւ անոնք Հայկի սերունդէն էին և կը բնակէին Բագրեւանդ գաւառին մէջ:

Վաղարշակ անոնց տուաւ Թագադիր Ասպետութեան իրաւունքը: Արարացիներու ժամանակ Բագրատունիները ունէին ընդարձակ երկիրներ և նըշանաւոր եղան իրենց քաջութիւնով և խելքով:

ԱՇՈՏ ԻՇԽԱՆԱՅ ԻՇԽԱՆ. — Սմբատ Խոստովա-

նողի սրգին՝ Աշոտ, երբ իր հայրը Պաղտատ գնաց, սպարապետ եղաւ, և հօրը մահուընէն ետքը սկսաւ իր ժողովուրդը խնամել: Ան ղիմեց ամիրապետին և խնդրեց որ կալանաւոր իշխանները արձակէ: ամիրապետը ընդունեց: Աշոտ իր կողմը գրաւեց Հայերը և նախարարները, որոնք Ամիրապետէն խընդրեցին որ Աշոտը իրենց վրայ իշխան գնէ: Ամիրապետը անտեսելով Աշոտի խելացութիւնը, Իշխանաց



Աշոտ Բագրատունի

իշխան ախաղասը սուաւ անոր 859ին: Աշոտ սկսաւ անկէ ետքը իր կողմը շահիլ բոլոր մեծ ու սգաթիկ նախարարները. իր երկու աղջիկներ-

ըը ամուսնացուց Սիւնեաց և Արծրունեաց նախարարներուն հետ: Իր երկրէն զինուոր ժողովեց, 40,000 հոգինոց բանակ մը կազմեց և իր Արատ եղբայրը սպարապետ կարգեց անոր:

ԱՇՈՏ Ա. ԹՄԳԱԻՈՐ. — Երբ Աշոտ բարեկարգութիւններով զբաղած էր, Շահապ անուն պարսիկ իշխան մը 80,000 զօրքով ապստամբեցաւ Պաղտատի ամիրապետէն և Հայաստանի վրայ յարձակեցաւ: Արատ անոր ղեմ գնաց, մէկ մասը ջարդեց, մնացածը ցրուեց և զինքն ալ 16 հոգիով փախցուց:

Ասոր վրայ շրջակայ ազգերն սկսան վախնալ Աշոտէն: Ամիրապետն ալ գոհ մնալով, հայ նախարարներուն խնդրանքին համաձայն, Աշոտին թագ և թագաւորական զգեստ զրկեց և 885ին Գէորդ կաթողիկոսը Անիի մայր եկեղեցիին մէջ թագաւոր օծեց Աշոտը: Նոյն տարին վասիլ Արշակունի Հոռոմներու կայսրն ալ թագ և արքայական ընծաներ զըրկեց:

Աշոտ իր աթոռը հաստատեց Բագարանի մէջ և սկսաւ իր երկիրը բարեկարգել. գնաց Փոքր Հայք և այն անդէն անցաւ Պալիս՝ Լեւոն կայսեր մօտ, որուն հետ դաշինք կնքեց: Երբ կը դառնար, Շիրակ զաւառին մօտերը մեռաւ 5 տարի թագաւորելէ, 32 տարի իշխելէ ետքը:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Հայաստանի մէջ 400 է աւելի նախարարութիւններ կային, գլխաւորներն էին Արծրունիք, Սիւնիք, Մամիկոնեանք, Բագրատունիք: Սմբատ Խոստովանողի որդին Աշոտ իր խելացիութեամբ եղաւ իշխանաց իշխան, յետոյ թագաւոր. իր աղջիկները ամուսնացուց Արծրունեաց եւ Սիւնեաց նախարարներուն հետ. 40 000 զօրք ունէր: Շահապ պարսիկին յաղթեց: Ամիրապետէն եւ վասիլ կայսրէն թագ ստացաւ. Պոլիս գնաց եւ մեռաւ Շիրակի մօտերը:

Ազգ. Պատմ. Միջին Բ.

2. ԴԱՍ

ՄԱԲԱՏ Ա. ԵՒ ԱԲԱՍ

ԱՇՈՏ Ա. Ի ՅԱԶՈՐԴԸ. — Աշոտ Ա. ի սրդին Սմբատ Գուգարաց երկիրը կը գտնուէր երբ հայրը մեռաւ : Ան գացեր էր Գուգարաց ապստամբութիւնը զսպելու : Գուգարք գաւառ մըն է, որ կը գտնուէր Արագածի դաշտադէտանին, Կարսի հիւսիսային կողմերը, մինչև Կաւր դեառ : Երբ իր հօրը մահը իմացաւ՝ եկաւ Շիրակաւան, ուր մեծ սուղ ըռնեց : 892 թուականին սուղի զգեստները հանելով թաղաւոր պատկուեցաւ :


ԱԲԱՍԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ. — Սմբատ հազիւ գահը բարձրացած էր, երբ անոր հօրեղբայրը Աբաս սպարապետ, ուղեւոր ինքը թաղաւոր ըլլալ, զինուորներու մէկ մասը իր կողմը չահեցաւ և ապրտամբեցաւ : Երկուքը սկսան իրարու հետ կռուիլ . բայց սրովհետև Սմբատի կողմնակիցները չառ էին, Աբաս յաղթուեցաւ և բերդի մը մէջ պաշարուելով, Սմբատի գլխով թեան ապաւինեցաւ ու անձնատուր եղաւ :

ԱՅՇԻՆ ՈՍՏԻԿԱՆԸ. — Սմբատ անկէ ետքը սկսաւ իր հօրը նման շինարարութեան հետեւիլ և նորոգեց Հոռամներու կեռն կայսեր հետ կնքուած դաշինքը : Ասրպատականի Աֆշին սատիկանը, որուն ձեռքով ամիրապետին կը զրկուէր Հայաստանի տաւրքը, տեսնելով Սմբատի այս ընթացքը մտաւ Հայաստան : Սմբատ ինքզինքը արդարացուց ըսելով թէ վաճառականական դաշինք մըն է իրենց կընքածը, ուրիշ բան չէ : Աֆշին վախնալով Սմբատի սյօէն, առանց վնաս մը հասցնելու մեկնեցաւ :

Սմբատ ուղեց իր երկիրը ընդարձակել, ուստի գըրաւեց Դուինը, որ զեռ Արարնեբուն ձեռքը կը գտնուէր :

ԱՇՈՏ ԱՐԾՐՈՒՆԻ, ԳԱԳԻԿ. — Վասպուրականի (Վան) Աշոտ Արծրունի իշխանը, որ Աշոտ Ա. ի աղջկան սրդին էր, ապստամբեցաւ Սմբատին դէմ, յոյս զնելով Աֆշինի վրայ : Բայց Աշոտի աները՝ Գագիկ խարդախութեամբ բռնեց զայն և անոր Գուրգեն եղբորը հետ բանառ նետեց : Ինքը սկսաւ տիրել, Սմբատ լուռ մնաց :


ԱՀՄԷՏԻ ԳԷՄ ԿՈՒԻԻԸ. — Այդ միջոցներուն Միջագետքի Անմատ սատիկանը բազմաթիւ զօրքով Հայաստան մտաւ : Սմբատ իր երկիրը պաշտպանելու համար 60,000 զօրքով անոր դէմ գնաց : Իրեն հետ էր նաև բռնապետ Գագիկը՝ իր զօրքով : Պատերազմեցաւ քարքրուա ու դժուար տեղերու մէջ :



Կարս քաղաքը

Հայերը պիտի յաղթէին, երբ Գագիկ դաւաճանեց և թշնամիին կողմը անցաւ, սրպէսզի Սմբատ յաղ-

Թուրքի և ինքը ըլլայ Հայոց թագաւոր : Սմբատ ըստի պուռեցաւ թողուլ պատերազմի դաշտը և քաջուիլ : Անմատ վախցաւ Սմբատին ետեւէն երթալու : Գագիկ իր պատիժը կրեց . երբ անգամ մը վանի մէջ ուրախութիւն կ'ընէր, Աշոտ Արծրունիի եղբայրը՝ Գագիկ Արծրունի սպաննեց Գագիկ բռնապետը և բանաւէն ազատեց իր եղբայրը :



Աղբաւար կղզին վանայ ծովուն մեջ

ԱՖՇԻՆԻ ԱՐՇԱԻԱՆՔՆԵՐԸ . — Աֆշին տեսնելով որ Սմբատը յաղթուեցաւ, յարձակեցաւ Հայաստան : Սմբատ պատրաստ չէր, և որովհետեւ նախարարներն ալ միաբան չէին, գնաց քաջուեցաւ Տայոց գաւառը : Աֆշին պաշարեց Կառս քաղաքը, ուր ամրացած էին թագուհին և ուրիշ պալատական կիներ : Բերդականները անձնատուր եղան : Աֆշին Սմբատը բռնելու յոյսը կարելով հաշտուեցաւ և մեկնեցաւ պատանդ առնելով : Անկէ ետքը մէկ երկու անգամ արշաւեց, բայց չկրցաւ բռնել Սմբատը : Կը պատրաստուէր նորէն արշաւելու, երբ մեռաւ :

ՅՈՒՍՈՒՅ ՈՍՏԻԿԱՆԸ . — Աֆշինի տեղ ստի-

կան եղաւ անոր եղբայրը Նուսուֆ, որ չար և անգութ մարդ մըն էր : Ան ուղեց ապստամբիլ Ամիրապետին դէմ : Ամիրապետը հրաման քրաւ որ Սըմբատ Նուսուֆը պատժէ : Սմբատ վախցաւ և քիչ մը զօրք միայն զրկեց : Սմբատ կը նեղէր իր հպատակները ծանր տուրքեր հաւաքելով, ատար համար իրեն թշնամի եղան ժողովուրդն ու նախարարները :



Սմբատ Ա.ի մահարձանը

ԳԱԳԻԿ ԱՐԾՐՈՒՆԻ . — Նուսուֆ ուղեց հայ իշխանները իրարու դէմ հանել : Տեսնելով որ վատ պուրականի Գագիկ իշխանը Սմբատին դէմ թշնամացած է, բարեկամ եղաւ անոր և թագ տալով՝ թագաւոր պատկեց : Գագիկ և Նուսուֆ միասին յարձակե-

ցան Սմբատի վրայ, որ թէև քաջարար կռուեցաւ, բայց չկրցաւ յաղթել: Գագիկ Արծրունի անսնելով որ երկրին վիճակը զէչ պիտի ըլլայ, զղջաց և մարդ զրկեց Սմբատին: Բայց ան չընդունեց: Գագիկ անկէ ետքը իր երկիրը սկսաւ կառավարել և շէնցնել: Ան իր մեղքերը քաւելու համար Աղթամար կղզիին վրայ, որ Վանայ ծովին մէջ կը գտնուի, փառաւոր եկեղեցի մը կանգնեց, Ս. Խաչ անուանով: Մինչև հիմակ կանգուն է այդ եկեղեցին:

ՍՄԲԱՏԻ ՄԱՆՔ. — Սմբատ բոլորովին յուսահատած, երբ Եռասուֆ իր վրայ յարձակեցաւ, քաշուեցաւ Կապոյտ բերդը: Խորամանկ Եռասուֆ իր հայ զօրքերը բերդին առջև կը քչէր: Սմբատ չուզելով որ քրիստոնէի արիւն թափուի, Եռասուֆին անձնատուր եղաւ, խոստում անելով որ բերդահաններուն չպիտի վնասէ: Եռասուֆ Սմբատը չարչարանքով սպաննեց Երեզակ բերդին առջև, 914ին:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Աշոտ Ա.ի կը խաջորդէ որդին Սմբատ, որու ղէմ կ'ապրատամբի Արաս, Բայց չի յաջողիր թագաւորութիւնը խրլելու: Աֆշին կ'արշաւէ Հայաստան, առանց վնասելու կը զաւանայ Սմբատէն վախնալով: Սմբատի ղէմ կ'ապստամբի Աոն Արծրունի, որ իր Գագիկ աներէն կը բանտարկուի: Գագիկ կը զաւաճանէ Անմատի ղէմ մղուած կռուին մէջ. կը սպաննուի Գագիկ Արծրունիէն: Աֆշինի կը յաջորդէ չարն Եռասուֆ: Գագիկ Արծրունի թագաւոր կը պսակուի Եռասուֆէն: Աղթամարի եկեղեցին կը կանգնէ. Սմբատ կապոյտ բերդին մէջ կը պաշարուի Եռասուֆէն եւ կ'սպաննուի Երեզակի բերդին առջև:



Է. ԴԱՍ

ԱՇՈՏ ԵՐԿԱԹ ԵՒ ԱԲԱՍ


ԱՇՈՏ Բ. ԵՐԿԱԹ. — Սմբատի մեռած ատեն անոր որդին ամուր բերդերու մէջ ապաստանած էր: Երբ լսեց իր հօրը եղերական մահը, առաւ իր ափ մը քաջերը եւ յարձակեցաւ Արաբներուն վրայ: Եռասուֆի զինուորները ջարդեց, ցրուեց, Հայաստանէն դուրս հանեց: Հայ նախարարները անսնելով Աշոտի այս քաջութիւնները, դուրս ելան իրենց պահուած անդերէն եւ Աշոտը Թագաւոր պսակեցին, 915 թուականին: Աշոտ իր քաջութիւններուն և ոյժին համար կոչուեցաւ Երկաթ:

ԵՆՈՒՍՈՒՅԻ ՆՈՐ ԱՐՇԱԽԱՆՔԸ, ՍՈՎԸ. — Եռասուֆ Հայաստանէն մեկնած էր երբ Աշոտ անոր զօրքերը ջարդեց: Եռասուֆ երբ լսեց իր պահապան թողած զինուորներու կոտորուիլը, բազմաթիւ զօրքով զիմեց Հայաստան, ամէն կողմ ցրուեց զանաք եւ սկսաւ սոսկալի անդթութիւններ գործել: Աշոտ անսնելով որ Եռասուֆի զինուորները բազմաթիւ են, մանաւանդ անսնելով որ հայ իշխանները իրարու հետ կը կռուին, քաշուեցաւ ու չպատերազմեցաւ: Արաբները անարգել սկսան ամէն չարիք հասցնել: Երկիրը աւերեցաւ ու սոսկալի սով մը տիրեց: սովի ատեն գայլերը քաղաք կ'իջնէին ու մարդոց վրայ կը յարձակէին: Գանուեցան ծնողներ որոնք իրենց աղաքը ծախեցին, սմանք ալ իրենց երեսաններն եփեցին ու կերան:

ՅՈՅՆԵՐՈՒՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ. — Այս բոլոր թընուատութիւնները լսելով Պարսոյ Կոստանդին կայսրը Աշոտն իրեն մօտ հրաւիրեց և գունդ մը զօրք սուսաւ

անոր իբրև օգնութիւն:

ԱՇՈՏ ՍՊԱՐԱՊԵՏ ԵՒ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԱՊԸՍ-ՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ . — ԵՈՒՍՈՒՓ ՅՈՒՆԱԿ կայսեր ըրած օգնութիւնէն վախնալով, հնարք մը մտածեց Հայերը բաժնելու համար: Աշոտ թագաւորին հօրեղբօր սրբի Աշոտ սպարապետին թագաւորական թագ տուաւ: Անկէ ետք երկու Աշոտները սկսան իրարու դէմ պատերազմիլ և զիրար հալածել: Շատ հայ զօրքեր մեռան. մինչև որ Հայոց Յովհաննէս կաթողիկոսը հաշտեցուց երկու Աշոտները: Բայց շուտով ուրիշ նախարարներ ալ ապստամբեցան Աշոտին դէմ, որովհետև կ'ուղէին անկախ ըլլալ և իբրև թագաւոր իշխել: Աշոտ կուտեցաւ ամենուն դէմ, յաղթեց անոնց:



Սեւան կղզին Գեղամայ ծովուն մէջ ուր Աշոտ երկաթ քանի մը նաւերով հրաշք գործեց **ԱՇՈՏԻ ՄԱՂԸ .** — Աշոտ այս բոլոր ապստամբութիւններէն յուսահատեցաւ և քաշուեցաւ Սեւան կղզին, որ կը գտնուի Գեղամայ լիճին մէջ: Եռասուֆ բազմաթիւ զօրքով Բէշիր ոստիկանը զրկեց Աշոտի վրայ, զայն բռնելու համար: Բէշիր եկաւ Սեւան կղզին պաշարեց: Աշոտ հրամայեց 10 նաւակ պարստակ իւրաքանչիւրին մէջ եօթնական հողի նստեցուց: Յարձակեցաւ Բէշիրի զինուորներուն վրայ. ջարդեց զանոնք, ծովը թափեց և մնացածն

ալ մինչև Գուին փախցուց: Այս յաղթութիւնէն ետքը Աշոտ երկար չապրեցաւ և մեռաւ 14 տարի թաղաւորելէ ետքը:

ԱԲՍՍ . — Աշոտ անարդի մեռնելով անոր յաջորդեց իր եղբայրը Աբաս: Աբասի օրով Հայաստան սկսաւ քիչ մը խաղաղ ապրիլ: Աբաս բարեկամ եղաւ Գազիկ Արծրունի թագաւորին և Գուինի ոստիկանին հետ: Ան դաշինք կապեց Արարներուն հետ և ինքզինքը տուաւ շինարարութեան: Իր աթոռը փոխադրեց Կարս, սւր շինեց գեղեցիկ եկեղեցի մը Առաքելոց անուամբ: Եկեղեցին զեռ վերջացած չէր, երբ Աբխազներու (Վրաց) Բեթ թագաւորը յարձակեցաւ Հայաստան և կ'ըսէր. « Կուզամ ձեր եկեղեցին Վրաց ծէսով օծելու »: Աբաս զայրանալով անոր դէմ գնաց. յաղթեց և զերի բռնեց, բերաւ Կարս, նորաչէն եկեղեցին ցայց տաւ և ըսաւ « Ան աշն եկեղեցին զար դուն Վրաց ծէսով օծել կ'ուզէիր, աղէկ նայէ, որովհետև այլեւս չպիտի տեսնես: » Եւ հրաման ըրաւ որ աչքերը կտրցնեն: Աբաս 24 տարի խաղաղութեամբ թագաւորելէ ետքը մեռաւ:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Սմբատի կը յաջորդէ Աեոս երկաթ, որ իր հօրը վրէժը կը լուծէ: Եռասուֆ վերստին կը յարձակի, իշխանները Կերկպոտակին եւ Աշոտ կը քաշուի: Երկիրը կ'աւերուի եւ սաստիկ սով կ'իյնայ: Կոստանդին կայսրը Աշոտին գունդ մը զօրք կուտայ: Եռասուֆ Աշոտ սպարապետը թագաւոր կը պսակէ: Երկու Աշոտները կը կռուին: Նախարարները կ'ապստամբին. բայց կը պատժուին: Բէշիր Աշոտը կը պաշարէ Սեւան կղզին մէջ, բայց 10 նաւով, 70 հոգիով կը յաղթէ. Աշոտ կը մեռնի: Անոր կը յաջորդէ եղբայրը Աբաս, որ ամէնուն հետ կը քարեկամանայ. շինութիւններ կ'ընէ: Աբխազներու Բեթ թագաւորը կը պատժէ կուրցներով:



Ը Ն Թ Ե Ր Յ ՈՒ Մ

ԱՇՈՏ Գ. ՈՂՈՐՄԱԾ , ՍՄԲԱՏ Բ. ԵՒ ԳԱԳԻԿ Ա.

ԱՇՈՏ Գ. ՈՂՈՐՄԱԾ . — Արատ երկուսը սրբի ունէր. Աշոտ և Մուշեղ: Անդրանիկը Աշոտ Գ. անունով յաջորդեց իր հօրը: Տակաւին թագաւոր պսակուած չէր, երբ ստիպուեցաւ նախ չըջակայ ապստամբ թշնամիները զսպել. 9 տարի ետքը օծուեցաւ Անիի մէջ, որ անկէ յետոյ Բագրատունեաց մայրաքաղաք եղաւ:


ԿԱՐՈՒՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ . — Աշոտի եղբայրը՝ Մուշեղ փառասէր մէկն էր: Ան ուղեց առանձին թագաւոր ըլլալ: Իր կողմը շահեցաւ շատերը և 968ին Կարս քաղքին մէջ հիմնեց թագաւորութիւն մը, որ կոչուեցաւ Կարուց Թագաւորութիւն: Աշոտ ներքին կռիւներու պատճառ չըլլալու համար չհակառակեցաւ իր եղբորը և բարեկամ մնաց:

ԱՇՈՏԻ ՄԵԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ . — Աշոտ Գ. ինքըզինքը սուաւ շինարարութեան և բարեգործութեան. շինեց եկեղեցիներ, վանքեր, հիւանդանոցներ և անկէլտնոցներ, որոնց եկամուտներ կապեց: Ան շատ խոնարհ էր. աղքատներուն անձամբ կ'օգնէր. իր սեղանին վրայ անպատճառ աղքատ կամ սկար մարդ մը չեղած կերակուրի չէր նստեր: Այդ պատճառով կոչուեցաւ Ողորմած:

ՀԱՄՏՈՒՆ ԵՒ ԱՇՈՏ Գ. — Աշոտ բարի թագաւոր մ'ըլլալով հանդերձ, եղաւ նաև քաջ իշխան մը: Ան հաւաքեց 90,000 զինուոր և կազմակերպեց: Անոր օրով Համաուն անուն արաբ զօրապետ մը ապստամբեր էր Ամիրապետէն և Հայաստանը տակն ու վրայ ընկելու համար կը մօտենար Աշոտի երկիրներուն: Աշոտ իր զինուորներուն հրամատար կար-

դեց Գոռ Մարգալետունի, որ գնաց Համաունի դէմ, յաղթեց անոր և գլուխը կտրեց: Աշոտի այս գործը հաճելի եղաւ Ամիրապետին:


ՉՄՇԿԻԿ ԿԱՅՍՐԸ ԵՒ ԱՇՈՏ . — Քանի մը տարի ետքը Յունաց Չմշկիկ կայսրը Միջագետք գնաց Արարներուն դէմ կռուելու. յանկարծ ետ դարձաւ և մտաւ Տարօն: Աշոտ անմիջապէս ժողկեց իր զօրքերը. 80,000 հոգիով գնաց կայսեր դէմ: Աշոտ Ողորմածի հետ կը գտնուէր նաև Աշոտ Արծրունի թագաւորը: Կայսրը առանց կռուելու քաշուեցաւ: Աշոտ անկէ ետքը խաղաղ կերպով թագաւորեց և մեռաւ ու թաղուեցաւ Հոռոմոսի վանքին մէջ:



Աշոտ Ողորմածի գերեզմանը

ՍՄԲԱՏ Բ. — Աշոտ Ողորմածի յաջորդեց անոր որդին Սմբատ Բ., որ հօրը նման քաջութիւնով և ուշիմութեամբ կառավարեց երկիրը. շինեց բարեգործական շէնքեր, եկեղեցիներ ևն.: Անոր օրով նշանաւոր եղաւ Տրդատ ճարտարապետը, որ Անիի եկեղեցիներէն շատերը շինեց: Սմբատ սկսաւ կառու-

ցանել նաև Աճիի Մայր եկեղեցին, բայց իր օրով
չաւարտեցաւ ան :




Աճիի Մայր եկեղեցին

ՄՈՒՇԵՂ ԵՒ ՄՄԲԱՏ . — Մուշեղ նախանձելով
իր եղբօրը աղուն՝ Սմբատի վրայ, յարձակեցաւ ա-
նոր երկիրը : Սմբատ զօրքով գնաց անոր դէմ : Մու-
շեղի օգնեց Տայոց նահանգին Կիւրապաղաւ : Ուս-
տի Սմբատ ստիպուեցաւ հաշտուիլ :

ՄՄԲԱՏԻ ՉԱՐ ԳՈՐԾԵՐԸ . — Սմբատ իր վերջին
աւարինքը սկսաւ չարութիւններ ընել . անգութ
կերպով, ստանց քննելու կը պատժէր անմեղ մար-
դեր : Բայց ամէնէն չար գործը եղաւ, հակառակ եկե-
ղեցիի օրէնքին, քրտջը աղջիկը իրեն կին առնելը :
Սմբատ 13 տարի թագաւորեց և մեռաւ :

ԳԱԳԻԿ Ա . — Սմբատ Բ . ի յաջորդեց իր եղբայ-
րը Գագիկ Ա . , որ 30 տարի թաղաւորեց : Իր թագա-
ւորութեան տարիները չատ խաղաղ անցան : Ատոր
համար ալ ան կրցաւ ինքզինքը շինարարութեան
տալ : Գեղեցկացուց Անի քաղաքը . երկիրը զարդա-
ցուց : Երկրագործութիւնը և վաճառականութիւնը
առաջ գացին անոր օրով :

ԱՆԻ ՔԱՂԱՔԸ . — Սմբատի և անոր յաջորդնե-
րուն օրով Անի քաղաքը այնչափ գեղեցկացաւ ու
մեծցաւ, որ այն ատենուան ամէնէն մեծ քաղաքնե-
րէն մէկը եղաւ : Կ'ըսէին թէ 1001 եկեղեցի կար ա-
նոր մէջ . բնակիչներն ալ մէկ միլիոնի կը հաո-
նէին : Անի քաղաքը հիմակ աւերակ է :



Ախուրեան գետը եւ Աճիի աւերակները

Ռուս գիտնական մը՝ Նիկողոս Մառ պեղում-
ներ կատարած է և ամէն տարի կը շարունակէ, աւե-
րակներուն տակէն թանկագին գիւտեր ընելով : Ա-
նիի աւերակներուն մէջ մինչև հիմայ նշանաւոր է
Մայր եկեղեցին, որ Սմբատ Բ . սկսած ու Գագիկ Ա . ի
ամուսինը՝ Կատարինէ թագուհին աւարտել տուած
է : Նշանաւոր են նաև Ս . Գրիգոր Ապուղանեհնց ե-
կեղեցին . Ս . Գրիգոր Լուսաւորիչ (Նախշու) եկեղե-
ցին, Բագրատունեաց պալատին աւերակները, բաղ-
նիքը և այլն : Անիի քովէն կ'անցնի Ախուրեան գե-
տը, որ այժմ կը կոչուի Արփա Չայ . ան կը թափի
Երասխ գետին մէջ :



Ը. ԴԱՍ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՄԲԱՏ ԵՒ ՍԵԼՃՈՒԳԵԱՆՑ

ԱՐՇԱԻԱՆՔԸ

ՅՈՎՀԱՆՆԷՍ—ՍՄԲԱՏ ԵՒ ԱՇՈՏ . — Գաղիկ Ա. երկու սրղի ունէր . Յովհաննէս—Սմբատ և Աշոտ : Անգլիանիկը ապիկար մէկն էր, դանդաղ, երկչոտ, իսկ Աշոտ քաջ էր և խելացի : Գաղիկի յաջորդեց անգլիանիկ սրղին Սմբատ : Աշոտ իրեն կուսակիցները ժողովեց և ուզեց ինքն ըլլալ թագաւոր : Երկու եղբայրներու մէջ կռիւ ծագեցաւ, Աշոտի կողմն էր նաև Վասպուրականի (Վան) Սեներեքիմ թագաւորը : Յովհաննէս—Սմբատ թէև 60,000 զօրք ունէր , բայց յաղթուեցաւ իր եղբորմէն : Նախարարները և Պետրոս Գետադարձ կաթողիկոսը աշխատեցան և հաշտեցուցին երկու եղբայրները : պայման դրին որ Յովհաննէսը աւրէ Անիի վրայ, իսկ Աշոտ Պարսկաստանի և Վրաստանի սահմանակից երկիրներուն վրայ և առաջինին մահէն ետքը՝ Աշոտ միայնակ իշխէ բոլոր տէրութեան վրայ :

ԱՇՈՏԻ ԴԱՒԵՐԸ . — Աշոտ թէև հաշտուեցաւ , բայց դո՛ւ չմնալով այս պայմաններէն սկսաւ դաւեր նիւթել իր եղբորը դէմ : Վրաց Գէորգ թագաւորը գրգռեց Յովհաննէսի դէմ և քիչ մնաց որ սպաննէր զայն : Անգամ մը կեղծ հիւանդ ձեացաւ և լուր զրկեց եղբորը որ այցելութեան դայ իրեն : Սմբատ գնաց , բայց երբ Աշոտի անկողնին կը մօտենար , նախապէս պատրաստուած թակարդին մէջ ինկաւ և սկսաւ աղաչել եղբորը որ խնայէ իրեն : Աշոտ հըրածան ըրաւ Ապիրատ անուն իշխանին որ Սմբատը

տանի անձանթ տեղ մը և սպաննէ : Ապիրատ Սրմբատը տարաւ և նստեցուց Անիի իր աթոռը :

ՍԵԼՃՈՒԳՆԵՐԸ . — Այդ միջոցներուն բարբարոս ժողովուրդ մը սկսաւ յարձակիլ Հայաստանի վրայ : Այդ ժողովուրդը կը կոչուէր Սելճուգեան : Սելճուգեան ցեղը առաջ կը բնակէր Կեղրոնական Ասիայի մէջ , Պուխարայի շրջականները : Անոնք նեղուելով ուրիշ բարբարոս ցեղերէ , մեկնած էին իրենց հայրենիքէն և սկսած էին արշաւել դէպի հարաւարեւմուտք : Անոնց իշխանը՝ Հասան անցեր էր Տիգրիս գետէն : Հասանի սրղին և յաջորդ Տուղրիլ-պէկ, ամբողջ Միջագետքը առին ու վրայ ընելէն ետքը , մտաւ Հայաստան : Վասպուրականի Սենեքերիմ թագաւորը թէև դիմադրեց , բայց չկրցաւ առաջն առնել : Տուղրիլ-պէկ մտաւ Յովհաննէս Սմբատի երկիրը : Հայերը դիմադրեցին , բայց բաւական նեղուեցան :

ՍԵՆԵՔԵՐԻՄ ԹԱԳԱԻՈՐԸ . — Սենեքերիմ թագաւորը տեսաւ որ հայ իշխաններէն և Յովհաննէս Սմբատէ օգուտ չկայ : Տեսաւ նաև որ Տուղրիլ Հայաստանէն քաշուելով գնաց Պարսկաստան և թագաւոր եղաւ : Ուշ կամ կանուխ պիտի յարձակէր Հայաստանի վրայ : Ուստի Սենեքերիմ իր երկիրը սուսաւ Յունաց Վասիլ Բ . Կայսեր , պայմանաւ որ փոխարէն իրեն աայ Սեբաստիա (Ավազ) քաղաքն իր շրջականերով , Վասիլ Բ . սիրով ընդունեց և Սենեքերիմ փոխադրուեցաւ Սեբաստիա (1021ին) : Այսպէս վերջացաւ Արծրունեաց թագաւորութիւնը :

ԱՆԻՆ ՅԱՆՉՆԵԼՈՒ ԵՐԴՄՆԱԹՈՒՂԹԸ . — Այն ատենները Վասիլ կայսրը բազմաթիւ զօրքով գնաց Վրաց Գէորգ թագաւորին վրայ , որ ապստամբած էր : Յաղթեց անոր : Յովհաննէս—Սմբատ ալ օգնած

ըլլալով Գէորգին, Վասիլ պատրաստուեցաւ Անիի վրայ քաղելու : Յովհաննէս չատ վախցաւ և Պետրոս կաթողիկոսին միջոցաւ նամակ մը դրկեց Վասիլ Կայսեր, երդումով խոստանալով որ իր մահէն ետք Անին իր շրջականերով Կայսեր պիտի պատկանի : Կայսրը սւրբախոսութեամբ ընդունեց և դարձաւ Պուլիս : Քանի մը տարի ետքը Վասիլի յաջորդ Կոստանդին Կայսրը մահուան անկողնին մէջ իր մօտ կը կանչէ հայ քահանայ մը, կիրակոս անուանով և Ա-



Անիի Միջնաբերդի աւերակները

նին խոստանալու թուղթը անոր կը յանձնէ ըսելով « Տա՛ր այս թուղթը ձեր թագաւորին տուր և իմ կողմէս անոր ըսէ՛ որ, չէմ ուզեր ուրիշին սեփականութիւնը յափշտակել » : Բայց դաւաճան քահանան թուղթը պահեց և Կոստանդինի յաջորդ Միխայիլ Կայսեր մեծ դիմով ծախեց, 1034 ին :

ՅՈՎՀԱՆՆէՍԻ ԵՒ ԱՇՈՏԻ ՄԱՀԸ . — Այսպիսի խառնակ վիճակի մը հասած էր Հայաստան, երբ մեռաւ Յովհաննէս Սմբատ (1040) : Իրմէ քիչ առաջ մեռաւ նաև Աշոտ, որ 14 տարեկան Գագիկ որդին

Թողուց իբրեւ ժառանգ :

Ա Մ Փ Ո Փ Ո Ի Մ


Գագիկ Ա. ի կը յաջորդէ իր անդրանկ որդին Յովհաննէս Սմբատ, երկչոտ ու թոյլ, որուն եւ Աշոտ եղբոր միջեւ կը ծագի ներքին կռիւ : Կը հաշտուին, երկիրը կը բաժնեն, Աշոտ դաւեր կը նիւթէ իր եղբայրը սպաննելու համար, բայց չի յաջողիր : Այդ միջոցին Սելճուկներ կը յարձակին Հայաստան : Սենեքերիմ Բրժրունի կը պարտուի : Տուղրիլ-պէկ Պարսկաստանը կը գրաւէ : Սենեքերիմ կ'ստիպուի Վասիլ Կայսեր թողուլ իր երկիրը՝ Սեբաստիայի փոխարէն : Վասիլ կը պատրաստուի արշաւել Անիի վրայ. Սմբատ երդման թուղթով Անին կը խոստանայ Կայսեր : Կոստանդին մահամերձ վիճակի մէջ՝ Կիրակոս չքահանային կը յանձնէ, բայց ան կը վաճառէ թուղթը Միքայէլ Կայսեր : Սմբատ կը մեռնի անգաւակ : Աշոտ կը թողու 14 տարեկան Գագիկը :

Թ. ԳԱՍ

ԳԱԳԻԿ Բ. ԵՒ ՎԵՍՏ ՍԱՐԳԻՍ

ՄԻՔՍՅԷԼ ԿՍՅՍՐԸ ԱՆԻՆ ԿԸ ՊՍՀԱՆՁԷ . — Յովհաննէս-Սմբատի մահէն ետք Բագրատունեաց պետութիւնը սկսաւ տակնու վրայ ըլլալ : Անիի մէջ նախարարները երկու կուռակցութեան բաժնուեցան . անոնց գլխաւորներն էին Վեստ Սարգիս Սիւնի և Վահրամ Պանկլաուցի : Վեստ Սարգիս Տէրութեան խնամակալն էր . փոռամտ մարդ մը, որ կոռալարութեան դանձերը ձեռք ձգելով կ'ուզէր Հայոց թագաւոր ըլլալ : Իսկ Վահրամ Հայոց սպարապետն էր և քաջ ու անձնուէր մէկը : Այդ միջոցներուն

Յոյներուն Միխայել Գ. կայսրը (1034—1044) լսելով որ Յովհաննէս-Սմբատ մեռեր է 1040ին, դեսպանները ղրկած էր Անի, պահանջելով քաղաքն իր շրջականերով: Վեստ Սարգիս, անսնելով որ ինքը թագաւոր պիտի չկրնայ ըլլալ, կ'ուզէր Անին յանձնել



Անիի պաշտպանութիւնը

Յունաց կայսեր. բայց Վահրամ սպարապետի կուսակցութիւնը ընդհակառակը կ'ուզէր թագաւորութեան օրինաւոր ժառանգը գտնել նստեցնել և բալթր ուժով ղիմադրել Յոյներուն: Միքայել կայսրը Հայոց մերժումը լսելով բարկացաւ և ուզեց գէնքի ղիմելով գրաւել Անին: Ան ղրկեց իրարու ետևէ երեք բանակ. բայց երեքն ալ հետաճեալ յաղթուեցան: Այն ատեն 100,000 հոգինոց բանակ մը կազմեց և ղրկեց Անիի վրայ: Վահրամ սպարապետը 30,000 զօրքով դուրս ելաւ Անիի պարիսպներէն և սոսկաւ ջարդ մը առաւ Յոյներուն: Անոնք սկսան փախ

չել, 20,000 մեռաւ և վերաւոր ձգելով:

ԳԱԳԻԿ Բ. ՎԵՐՋԻՆ. — Այս փառաւոր յաղթութեան վրայ Վահրամի կուսակիցները թագաւոր օծել առին Աշոտի որդին Գագիկը, 1042ին: Վեստ Սարգիս անսնելով որ իր խորհուրդը չյաջողեցաւ, փախաւ Անիի միջնաբերդը ամրացաւ: Գագիկ Բ. առանձին մտաւ Վեստ Սարգիսի գանուած անդը և համոզեց որ այն անդէն հեռանայ: Սարգիս քաշուեցաւ



Գագիկ Ա. ի արձանը Անիի բանգարանին մեջ ուրիշ բերդաքաղաք մը, սակայն զանձները չուզեց զարձնել: Գագիկ քանի մը հողիով գնաց, բռնեց և

բանաարկեց զայն Անիի մէջ : Սարգիս մէկ կողմէն Յոյները կը զբոսէր , միւս կողմէն Գաղիկը կը շոգոքորթէր : Թագաւորը անփորձ երիտասարդ մը ըլլալով խաբուեցաւ անոր խօսքերէն և ներեց :

ՅՈՒՆԱՅ ԿՐԱԾ ՆՈՐ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ . — Վեստ Սարգիսին ներկելուն համար շատ մը նախարարներ պաղեցան Գաղիկէն . անոնցմէ մէկն էր Գրիգոր Մագիստրոս գիտուն իշխանը : Միւս կողմէ Սարգիս կը զբոսէր Յոյները որ Անին պահանջէն : Այդ ժամանակ Յոյներու կայսրն էր Կոստանդին Թ . Մոնումարտոս (1042—1054) , որ Միքայէլ կայսեր յաջորդն էր : Կոստանդին ուղեց զբաւել Անին և զօրք զրկեց : Բայց Գաղիկ քաջութեամբ դիմեց Յոյներուն վրայ և ջախջախեց զանոնք : Երկրորդ բանակ մ'եւս եկաւ Գաղիկի վրայ , բայց երիտասարդ և քաջ թագաւորը անոնց ալ յաղթեց :

ՅՈՒՆԱԿԱՆ ԽԱՔԷՆՈՒԹԻՒՆԸ . — Յունաց կայսրը նկատելով որ բռնի ուժով չպիտի կրնայ յաղթել Հայերուն՝ խորամանկութեան դիմեց : Նամակ մը գրեց Գաղիկին և Պոլիս հրաւիրեց , իբրեւ թէ խաղաղութեան զաշինք կապելու համար : Նոյնիսկ Ռաչի և Աւետարանի վրայ երդում ըբաւ չվնասել Գաղիկին . Գաղիկ չուզեց երթալ բայց Պետրոս կաթողիկոսը և նախարարները , մանաւանդ Վեստ Սարգիս , համոզեցին զինքը սր երթայ : Երդումի թուղթ ալ սուին թաղաւորին թէ Անին պիտի չյանձեն մէկուն : Գաղիկ գնաց . Մոնումարտոս պատիւով ընդունեց զայն , բայց քանի մը օր ետքը Անին պահանջեց : Գաղիկ մերժեց , այդ պատճառով Մարմարայի կղզիներէն մէկը աքսորուեցաւ :

ՀԱՅԱԿԱՆ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ . — Երբ Գաղիկ կը մերժէր կայսեր պահանջը , Անիի մէջ կաթողիկոս-

սը , Վեստ Սարգիս և ուրիշ հայ իշխաններ խորհուրդ ըրին և Անիի 40 բանալիները յանձնեցին Յոյներու զօրապետին , սը Պոլիս զրկեց զանոնք : Գաղիկ արցունքով տեսաւ որ իրենները դաւաճանած են իրեն . շատ ընդդիմացաւ , բայց վերջապէս ստիպուեցաւ զահէն հրաժարիլ 1045 թուին և փոխարէնը ըստացաւ Կապադովկիոյ (Կեսարիա զաւառի) Բիզուքաղաքը , սւր ամուսնացաւ Սերասիոյ Դաւիթ թագաւորի աղջկան հետ . անկէ ետքը յայն բանակ մը գնաց և գրաւեց Անին :

Այսպէսով վերջացաւ Բաղրատունեաց հարստութիւնը , սր աւելեց 160 տարի :

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Յովհաննէս-Սմբատէն ետք Վեստ Սարգիս եւ Վահրամ Պահլաւունի երկու կուսակցութեան գլուխ կը կանգնին : Միքայէլ Գ. կայսրը Անին կը պահանջէ . կը մերժուի : Չորս անգամ կ'արշաւէ Անի վրայ , բայց անօգուտ : Գաղիկ Բ. թագաւոր կ'օժուի . Իսկ Սարգիս կը զբոսէ Յոյները : Կոստանդին Թ. եւս կը պահանջէ Անին : Երդումով չկրնար յաջողիլ , խարդախութեան կը դիմէ . Գաղիկը Պոլիս կը հրաւիրէ , կ'արտրէ Մարմարայի կղզիներէն մէկը : Հայ մեծամեծները կը դաւաճանեն . Անիի 40 բանալիները կը յանձնեն . Գաղիկ կ'անցնի Կապադովկիայի Բիզուքաղաքը եւ կ'ամուսնանայ : Յոյները կը գրաւեն Անին : Բաղրատունեաց հարստութիւնը տեսած էր 160 տարի :



Ժ. ԴԱՍ

ՀԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ . — Հայաստանի մէջ կային բազմաթիւ Նախարարութիւններ: Անոնց թիւը 400ը կ'անցնէր: Հայ հասարակարանն ունէին իրենց հողերը , իրենց բանակը , սուրբ կը գանձէին , դատ՝ գասաստան կը տեսնէին: Ունէին իրենց մասնաւոր դրօշը:

Իւրաքանչիւր նախարարութեան գլուխը կը գանուէր Աւագ Նախարար կամ Տանուտերը: Անոնք իրենց հողերու ընդարձակութեան համեմատ , իրենց ժողովուրդին շատութեանը և դիրքին համեմատ , կը կոչուէին Աւագ Նախարար կամ Նահապետ , Նախարար , Աւագ Սեպուհ , Սեպուհ , Ապետ ևն . : Անոնց ընտանիքը կամ գերդաստանը կը կոչուէր Նախարարական Տոնմ , իսկ իշխանութիւնը կը կոչուէր Տանուտերութիւն:

Այս նախարարութիւններէն սմանք ստացած էին մասնաւոր պաշտօններ:

Հայաստանի չորս կողմը , սահմաններուն վրայ ընդարձակ սղեր և թագաւորական իշխանութիւն ունեցող նախարարներ կը կոչուէին Բղեշխներ , Կուսակալներ կամ Գաւառակալներ:

Արշակունիներու և Բագրատունիներու օրով ընդհանուր բանակի հրամատարը կը կոչուէր Սպարապետ , որ ընդհանրապէս Մամիկոնեաններու նախարարները կ'ըլլային: Երկրին ներքին գործերը վարող նախարարապետը կը կոչուէր Հագարապետ:

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ . — Հայ ժողովուրդը բաժնուած էր երեք գասակարգի:

Ա) Ազատներ կամ Տոնմիկներ ,

Բ) Կարնագատներ ,

Գ) Ռամիկներ կամ Շինականներ:

Ասոնցմէ զուրս կային նաև Ստրուկներ և Վատտոնիկներ:

Ռամիկները կամ Շինականները կը կազմէին ժողովուրդին մեծամասնութիւնը , որոնք հողը կը մշակէին , առևտուր կ'ընէին , արհեստներ կ'աշխատէին: Ազատներն ու կարճազատները կը կազմէին զինուորութիւնը , բանակը:


ՀԱՅ ԲԱՆԱԿՆ ՈՒ ԶԻՆՈՒՈՐՈՒԹԻՒՆԸ . — Հայ բանակը կազմուած էր նախարարական բանակներէ: Կային երկու տեսակ զինուորներ . ձիաւոր զինուորները կը կոչուէին Այրուծի կամ Հեծելազօրք , իսկ սարով կռուող զինուորները՝ Հետեւակ: Արշակունեաց և Բագրատունեաց թագաւորներու բանակները կը կոչուէին Արհուկան զօրք: Ամէն բանակի զուխ կը կոչուէր Զօրազուխ կամ Զօրալար , իսկ ձիաւոր զինուորներու զուխ եզողները կը կոչուէին Սպայ կամ Սեպուհ: Բանակին մէջ կային նաև Առաջապահ և Վերջապահ գունդեր: Անոնց զէնքերն էին սղեղ , նետ , գաշոյն , սակր ևայլն:

ՀԱՅՈՑ ԲԱՐՔԵՐԸ . — Հայերն էին առհասարակ աւանդապահ ժողովուրդ մը: Չափազանց կրօնասէր էին: Ճշմարտախօսութիւնը , քաջութիւնը շատ յարգի էին իրենց մէջ: Դժբախտարար իրենց մէջ բոյն զրած էր նաև նախանձը և իրեքամեծութիւնը: Շատ կը սիրէին սրսրղութիւնն ու խնջոյքները:

ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍԸ . — Հայերը շատ կանուխէն սովոր էին փայտէ ու մանաւանդ քարէ բընակարաններ կառուցանել , եկեղեցիներ , վանքեր չինել: Երկրին մէջ գետերու , ձյրերու առատութեան պատճառով , սովոր էին հաստատուն կառուրջ-

ներ ձգել:

Ոստիկաններու և Բազրատունիներու օրով չատ
զարգացաւ ձարտարապետութիւնը: Հայերն սկսան
չինել գեղեցիկ շէնքեր, մանաւանդ եկեղեցիներ,
պալատներ ու պաշտօններ, սրտնք ցոյց կուտան ա-



Գարաշիշեկի համբաւաւոր կաթողիկէ եկեղեցին
չինուած ժ.Ա. դարուն


նոնց հանձարը: Մասնաւոր, յատուկ գեղեցիկ ձևով
մը կը շինէին: Այդ ձևը ծանօթ է հայկական ուն անու-

նով. այդ ոճով շինուած են Էջմիածնի, Հռիփսիմ-
եանց, Գոյիանէի, Զուարթնոց և այլ տաճարները:
Անիի Մայր եկեղեցին, Կեչառիսի Կաթողիկէն, Տա-
թևի, Հողբառի, Սանաճինի վանքերը, Գագիկ Արծ-



Զուարթնոց հռչակաւոր տաճարը
կառուցուած է. դարուն, որ հիմնապէս աւերակ է
բունի կառուցած Աղթամարի համբաւաւոր եկեղե-
ցին Հայկական Ոճի գեղեցիկ տիպարներ են:

Բացի տաճարներէն , վանքերէն և մեծ ու պզո-
տիկ շէնքերէն, անոնց սիրուն զարդաքանդակները ,
գերեզմաններու վրայ անկուած ինչքարերը ցոյց
կուտան մեր հայրերու գեղարուեստական ճաշակը:



Հայկական հաչքար մը

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Հայ նախարարութիւններու թիւը 400է աւելի էր: Կա-
յին Աւագ Նախարարներ, Նախարարներ, Սեպուհներ եւայլն: Մասնաւոր պաշտօններ էին Սպարապետութիւնը եւն, Հայի-

րու մէջ կային դասակարգեր. ա) Ազատներ, բ) Կարծազատ-
ներ. գ) Ռամիկներ: Հայ բանակը կազմուած էր նախարա-
րական փոքր բանակներէ: Կային ժիւաւոր եւ հետեւակ զօր-
քեր: Թագաւորին բանակը կը կոչուէր Արքունական զօրք:

Հայերն էին առհասարակ աւանդապահ, կրօնասէր,
ճշմարտախօս, բայց էին նաեւ նախանձօտ, իրերամերժ: Կը
սիրէին որսորդութիւն եւ խնջոյք:

Նշանաւոր էին իրենց ճարտարութեամբ, մանաւանդ ի-
րենց ճարտարապետութեամբ. իրենց շէնքերը կառուցած են
նայկական ոճով:



ՍԵԼՃՈՒԳԵԱՆՔ




ԺԱ. ԴԱՍ

ՏՈՒՂՐԻԼ ՊԷԿ ԵՒ ԱԼՓԱՍԼԱՆ

ՅՈՅՆՆԵՐՈՒ ՎԱՐՄՈՒՆԻՔԸ . — Յոյները Հայաս-
տանի տիրելէն ետքը , սկսան անգլթութիւննր գոր-
ծել: Հայոց զօրքը ցրուեցին և անոնց տեղ յոյն պա-
հապաններ զրին: Հայ իշխանները հալածեցին , հայ
եկեղեցիները անարգեցին և ծանր ատուքեր զրին
ժողովաւրդին վրայ: Պետրոս կաթողիկոսը Պոլիս
տարին և սկսան մեր ազգութիւնը ջնջել:

ՏՈՒՂՐԻԼ ՊԷԿ . . . Սելճուզեան իշխանը Տուղ-
րիլ Պեկ, որ Պարսկաստանի տիրած՝ Թաղաւորութիւն
հաստատած էր, լսելով որ Հայաստան անտէր վիճակ
մ'ունի, զրկեց իր զուեղերը, որոնք ամէն կողմ տա-

բաժուեցաւ 7 տարի չարունակ գերեցին ու աւերցին: Սմբատաբերդ ամուր քաղաքը առին ու քանդեցին: Բընակիչները ծերերէն մինչև մանուկները ջարդեցին ու զերի տարին: Նոյն բախտն ունեցաւ Արծն վաճառաչան քաղաքը, որուն 150,000 բնակիչները կոտորուեցան ու զերի տարուեցան 1049ին: Յոյները փոխանակ երկիրը պաշտպանելու, անտարբեր կեցած էին: Վերջապէս Կոմնենոս զօրավարին առաջնորդութեամբ 60,000 հոգինոց բանակ մը եկաւ Հայաստանը պաշտպանելու: Բանակին միացան Վրաց թագաւորը և Գրիգոր Մագիստրոս իշխանը: Սակայն Յոյները յաղթուեցան, Վրաց թագաւորն ալ զերի բռնուեցաւ:



Թաթուլ Տուղրիլի առջեւ

ՎԱՆԱՆԻԻ ԿՈՒԻԻԸ . — Այս արիւննահեղութիւնները բաւական չտեսնելով Տուղրիլ անձամբ եկաւ Հայաստան: Վանանդ (Կարս) գաւառին մէջ թեթեւ ընդդիմութեան մը բախեցաւ: Այստեղ հայ իշխանները Կարսի Գագիկ թագաւորին հետ միացած, ու-

զեցին թշնամիներուն դիմադրել, բայց յաղթուելով ետ քաշուցան: Այդ պատերազմին մէջ Թաթուլ կըսորիճ երիտասարդը Ասուրան իշխանի որդին վերաւորած էր. Տուղրիլ իր առջեւ բերել տուաւ զայն և ըսաւ. « Եթէ այս պատանին ապրի, կ'ազատեմ քեզ, իսկ եթէ մեռնի, դուն ալ կը զոհուիս »: Անվեհեր Թաթուլը պատասխանեց. « Եթէ հարուածը իմս է, չապրիք »: Քանի մը օրէն ետքը վերաւորը մեռաւ: Տուղրիլ Թաթուլի աջ բաղաւկը կտրեց և Ասուրանին զրկեց ըսելով. « Տղադ վատ բազուկէ մեռած չէ »:

ՄԱՆԱԶԿԵՐՏԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ . — Մանազկերտի բնակիչները լսելով Տուղրիլի անգթութիւնները, սկսան պատրաստուելի դէմ դնելու: Սուլթանը եկաւ քաղաքը պաշարելու: Ամիս մը ամբողջ յարձակեցաւ բայց իզուր: Այն ատեն քար նետող մեքենաներ՝ բարաններ բերել տուաւ, դարձեալ անօգուտ: Մանազկերտացիներն այրեցին անոր բարանը: Տուղրիլ ամօթով ետ քաշուեցաւ:

ԱԼՓԱՍԼԱՆ ԵՒ ԱՆԻԻ ԳՐԱԻՈՒՄԸ . — Տուղրիլի մահէն ետքը անոր յաջորդեց իր եղբայրը Ալփասլան, որ Հայաստան գալով պաշարեց Անի քաղաքը: Պաշարումը երկար տեւեց. Ալփասլան յուսահատելով սկսաւ քաշուել: Քաղաքին իշխանները կտրճելով թէ նոր յարձակումի կը պատրաստուին, միջնաբերդը քաշուեցան. ժողովուրդն անպաշտպան մնալով սկսաւ աղաղակել: Այն ձայներէն Ալփասլանի զօրքը ետ դարձաւ և քաղաքը մանելով սկսաւ կոտորել անխնայ: Հազարաւոր մարդիկ ջարդուեցան, զեղեցիկ չէնքերն այրեցան, 1064 թուականին:

ԿԱՐՍԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԱՆՃԱՆԸ . — Ալփասլան Անիէն զետպան զիկեց Կարսի Գագիկ թագաւորին որ գայ իրեն հնազանդի: Գագիկ Ալփասլանի սիրտը դրաւելու համար սգաւորի զգեստներ հագան

ընդունեց անոր դեսպաններն, ըսելով թէ՛ որովհետեւ իր բարեկամը Տուղրիլ մեռեր է, սուգի մէջ նստած է: Ալփասլան մեղմացաւ. եկաւ Կարս և բարեկամահան տեսութիւն ընելով դարձաւ: Սակայն Գաղիկ հասկնալով որ երկար ժամանակ հանդիստ պիտի չը վայելէ, իր երկիրը Հոռոմներու կայսեր տուաւ ու փոխարէն ընդունեց Փոքր Հայոց Ծամնդաւ բերդը, ուր փոխադրուեցաւ 1065ին: Այսպէս վերջացաւ Կարսից թագաւորութիւնը:

ԱԼՓԱՍԼԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՇԱՒԱՆՔԸ. — Ալփասլան երկրորդ անգամ մտաւ Հայաստան և ղեռ չզրաւուած տեղերը հեռագհետէ առաւ. հասաւ մինչև Փոքր Հայք. Կարս, Կարին, Աերաստիա և Կեսաբիա անոր իշխանութեան տակ ինկան: Յոյներուն Ռովանոս կայսրն ուզեց կոտլիլ անոր ղեմ, բայց չարաչար յաղթուլով գերի ինկաւ: Այսպէսով Յոյները կորանցուցին իրենց ունեցածն ալ. եթէ Հայոց թագաւորական տուները չջնջէին, իրենք ալ Սելճուգներու ղեմ պիտի չզանուէին: Սելճուգները առաջ գացին և գրաւեցին Գոնիան, որ Պալսէն մէկ երկու օր միայն հեռու է:

ԳԱԳԻԿԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ. — Հայոց զբախտ թագաւորը երկար տարիներ ապրեցաւ պանդխտութեան մէջ: Ան միշտ կ'աշխատէր իր հայրենակիցներուն պատիւը բարձր պահելու: Անգամ մը Կեսաբիոյ Մաբկոս մեարապոլիտը (եպիսկոպոս) շուն մը ունէր, որուն անունը Արմէն դրած էր: Գագիկ երբ լսեց, գնաց անոր մօտ, շունն ու մեարապոլիտը պարկի մը մէջ դնել տուաւ և հրաման քրաւոր շունը ձեռն: Շունը կատրելով սկսաւ խածնել իր տէրը և սպաննել: Յոյները վրէժ լուծել ուզեցին: Մանտալեան եղբայրները դաւաճանութեամբ

բռնեցին Գագիկը և իրենց Կիլիսիոյ բերդէն կախեցին 1079 ին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Յոյները կը սկսին անգթութիւններ գործել եւ Հայաստանը երեսի վրայ ձգել: Տուղրիլ-Պէկ գունդեր կը ղրկէ, որոնք կը բանդեն ու կը գրաւեն Սմբատաբերդը, Արծն եւլն, Մանազկերտ կը դիմադրէ: Վանանդի կուլը նշանաւոր է թաթուլ իշխանի անվեհերութեամբ: Ալփասլան Տուղրիլի եղբայր ու յաջորդ՝ կը գրաւէ Անին 1064 ին. Կարսը թագաւոր Գագիկ, խորագիտութեամբ կ'ազատի Ալփասլանի անգթութենէն, բայց իր երկիրը կը փոխէ Ծամնդաւ բերդին հետ: Ալփասլան կրկին կ'արշաւէ. Յունաց Ռոմանոսի կը յաղթէ ու կը գերէ: Յոյները իրենց վարմունքին արդիւնքը կը քաղեն. Գագիկ պանդխտութեան մէջ կ'անցնէ, Մանտալեան եղբայրներու վրէժանդրութեան շո՞ն կ'երբայ 1079 ին:



Էջմիածինի տաճարը, հայկական ոճի տախար

ՌՈՒԲԻՆԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

ԺԲ. ԴԱՍ

ՌՈՒԲԷՆ, ԿՈՍԱՆԴԻՆ ԵՒ ԹՈՐՈՍ Ա.

ԿԻԼԻԿԻԱ


Փոքր Ասիայի հարաւային արևելեան մասը կը կոչուի Կիլիկիա: Այժմ ու անունն է Ատանայի վիլայէթ: Կիլիկիան երկու մասի կը բաժնուի. 1) Գաշտային Կիլիկիա, որ ծովուն եզերքը կը տարածուի և պողարեր, առք երկիր մըն է, 2) Լեռնային կամ Քարային Կիլիկիա, որ աւելի ցուրտ ու անբեր երկիր մըն է: Կիլիկիայի հիւսիսային կողմը կը տարածուի Տաւրոսեան լեռնաշղթան, որ կ'երկարի մինչև Հայաստան. իսկ Կիլիկիայի արևելեան կողմը կը



Կիլիկիա եւ ջրվեժը

տարածուին Ամանու կամ Սեաւ լեռները:

Ունի մէկ երկու գետեր, արևմուտքէն սկսելով՝ Կալիկադոն (Կէօք Սու), Կիլիկիոս կամ Տարսուսի գետ, Սարոս կամ Սիհուն, որուն եզերքը շինուած է Ատանա քաղաքը: Երրորդ գետն է Պիւրամու, այժմ կը կոչուի ձիհուն, որուն մօտերը շինուած են Անագարբա, Մարաշ, Զեքուն և Սիս քաղաքները:



Անագարբա

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՂՈՒԹՂ ԿԻԼԻԿԻՈՅ ՄԷՁ. — Բազմաթիւ իշխանութիւնը կործանելէն ետքը, երբ Սելճուկները սկսան աւերակ դարձնել ամէն կողմ, Հայերն սկսան իրենց բուն երկրէն հեռանալ և նոր հայրենիք փնտռել: Մաս մը Հայեր ալ Կիլիկիա եկան հաստատուեցան. արդէն կանուխէն ալ հոն հաստատուած բազմաթիւ Հայեր կային, որոնք բերդեր ու վանքեր ունէին: Այնպէս որ ժ.Ա. դարուն իրենց բազմութեամբ կը մրցէին տեղացի Յայերուն հետ: Հայ իշխաններէն ոմանք Կիլիկիոյ լեռներուն վրայ ունէին մէյմէկ բերդեր, զիւղեր ու կալուածներ:

Ազգ. Պատմ. Միջին Բ.

կամ զբամով գնած էին կամ նուէր ստացած և կամ բռնի գրաւած էին: Այդ իշխանները կը կոչուէին Գող Վասիլ, Օշին, Ապիրատ՝ Ներսէս Շնորհալիի հայրը ևւն:

ՌՈՒԲԷՆ ԻՇԽԱՆ . — Կիլիկիա գացող իշխաններէն մէկն էր Ռուբէն, որ Գագիկ Բ. ի մօտիկ ազգականներէն էր: Ռուբէն խորհեցաւ Գագիկի մահուան վրէժը լուծել և հայկական փոքրիկ իշխանութիւն մը հիմնել: Ան հաստատուեցաւ Կիլիկիոյ Գոռունով գիւղին մէջ: Այնտեղ 1080ին հիմնեց Ռուբինեան իշխանութիւնը: Իրեն հետ միաբանեցան տեղացի Հայերն ու իշխանները և Ռուբէն շուտով սկսաւ գրաւել իր շուրջը գտնուած գիւղերն ու քաղաքները և Յոյները վտարեց. անոնց տեղ բնակեցուց գաղթական Հայեր: Ռուբէն 15 տարի հայրաբար խնամեց իր հպատակները և կառավարեց ու մեռաւ 1095ին:

ԿՈՍՏԱՆԴԻՆ . — Ռուբէնի յաջորդեց իր որդին Կոստանդին Ա., որ իր հօրը ձգած ժառանգութիւնն ընդարձակեց: Յոյներէն ստաւ մէկ երկու բերդեր և իր իշխանութեան աթոռը հաստատեց Վանկայ բերդը: Կոստանդինի օրով Եւրոպայէն եկան առաջին խաչակիրները: Անոնք եկած էին Երուսաղէմը Մահմետականներու ձեռքէն ազատելու համար: Կիլիկիայէն անցնելու ժամանակ Կոստանդին սիրով վարուեցաւ անոնց հետ. պաշար տուաւ անոնց և ճամբայ ցուցուց: Այդ պատճառով սիրելի եղաւ խաչակիր իշխաններուն, որոնք Մարտիկ տիպոսը տուին անոր: Կոստանդին 3 տարի իշխեց և մեռաւ 1100ին:

ԹՈՐՈՍ Ա. (1100—1123) . — Կոստանդինի որդին Թորոս քաջ իշխանը իր հօրը յաջորդելուն պէս սկսաւ ընդարձակել իր երկիրը. յարձակեցաւ Անագարբա քաղաքին վրայ և գրաւեց զայն: Յոյներու կայսեր զօրքերը վտարեց այն կողմերէն: Բայց յանկարծ Գանիայի Սելճուգեան իշխանը արշաւեց

րոսի երկիրը և սկսաւ աւերել Անագարբայի շրջակաները: Թորոս Գող Վասիլի օգնութեամբ և իր կեանս կղբօրը հետ անոնց առջևն ելաւ ու իր երկրէն դուրս վտարեց երկու անգամ: Այս յաղթանակները Թորոսի անունը մեծցուցին և օտարները ճանչցան անոր իշխանութիւնը և Կիլիկիան կոչեցին Թորոսի երկիր:



Թորոս կը պատմէ Մանտալեանները
ԹՈՐՈՍ ԿԸ ԼՈՒԾԷ ԳՍԳԻԿ Բ. Ի ՎՐԷԺԸ . — Այնուհետեւ Թորոս դարձեալ սկսաւ իր երկիրը ընդարձակել մինչև Կապադոկիա և ուղեց Կիլիստաա բերդը ձեռք ձգել: Կիլիստորայի մէջ դեռ կ'իշխէին Գագիկի սպանիչ Մանաուլեան եղբայրները. Թորոս ուղեց վրէժ լուծել: Յարձակեցաւ բերդին վրայ: Իշխաններէն մէկը Թորոսին ձեռքը չիյնալու համար ինքզինքը բերդէն վար նետեց և մեռաւ: Թորոս հըրամայեց որ բերդին գանձերը բերեն: Երբ Գագիկի զէնքերն ու զգեստները բերին, բոլոր Հայերը լաւ Մանաուլեան միւս երկու իշխաններն ալ բըռ-

նեցին ու թորոսի առջևը բերին: Անոնցմէ մէկն ըսաւ. «Ի՞նչ պատասխան պիտի տաս Յունաց կայսեր, որ մեզ՝ իր իշխանները, այսպէս կը չարչարես»: Թորոս զայրացած դոչեց. «Դուք ի՞նչ պատասխան տըսելք Հայոց ազգին որ իրենց թագաւորն սպաննեցիք»: Այս ըսաւ և տեղն ու տեղը սպաննեց զայն, միւս իշխանն ալ զերի տարաւ: Այնուհետև խաղաղութեամբ կառավարեց իր երկիրը և մեռաւ անզուակ. թաղուեցաւ Դրազարկ վանքին մէջ:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Կիլիկիա շատ կանուխէն հայկական գաղութ կը դառնայ, Հայ իշխանները, ինչպէս Գող վասիլ, Օշին. Ապիրատ կը հաստատուին հոն, Ռուբէն Գագիկի ազգականը. հոն կը հիմնէ իշխանութիւն մը 1080ին: Որդին՝ Կոստանդին և թուրք թորոս Ռուբէնի զործը կը շարունակեն, Կոստանդինի օրով Խաչակիրները կ'անցնին Կիլիկիայէն, Մարքիզ տիտղոսը կուտան անոր: Թորոս կը գրաւէ Անազարբան, կը յաղթէ Գոնիայի սո. լթանին: Կիլիկիայի բերդի Մանտալեան եղբայրներէն Գագիկի վրէժը կը լուծէ:

ՊԱՐՏԱԿԱՆՊԻԹԻԻՆ ԱՇՂԿԵՐՏԻՆ . — Պէտք է աշակերտները գծեն Կիլիկիայի քարտէսը:



Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ

ԼԵՒՈՆ Ա. , ԹՈՐՈՍ Բ. , ՍԼԵՀ ԵՒ ՌՈՒԲԷՆ Բ.

ԼԵՒՈՆ Ա. (1123—1135) . — Թորոսի յաջորդեց կղբայրը Լեւոն Ա., որ իր նախորդներուն դործը շարունակեց. Յոյներէն գրաւեց Մամեստիա, Միսիս և Տարսոն քաղաքները: Լեւոն տէր դարձաւ ամբողջ

Կիլիկիայի:

ՅՈՅՆԵՐՈՒ ՅԱՐՉԱԿՈՒՄԸ . — Յունաց Յովհաննէս Բ. Կոմնենոս կայսրը նկատելով որ Ռուբինեանք կը դորանան, մեծ բազմութիւնով արշաւեց Կիլիկիա: Լեւոն դաշնակից եղած էր Անտիոքի եւրոպացի իշխաններու հետ: Կայսրն սկսաւ հետզհետէ գրաւել Մամեստիա, Տարսոն և Ատանա քաղաքները: Անազարբա քաղաքը ղիմադրեց. կայսրը յուսահատեցաւ, բայց իր Իսահակ սրբիին պնդումով պաշարումը շարունակեց: Վերջապէս քաղաքն անձնատուր եղաւ: Լեւոն չկրնալով ղիմադրել քաջուեցաւ Վանկայ բերդը: Լեւոն պաշարէ նեղուելով անձնատուր եղաւ և չղթաշահալ Պոլիս տարուեցաւ, երկու սրբիներուն՝ Ռուբէնի և Թորոսի հետ, 1136ին: Յոյները կուրացուցին Ռուբէնը և սպաննեցին: Լեւոն իր զաւկին տանջանքը տեսնելով սրտին ցաւէն մեռաւ բանտին մէջ 1141ին:

ԹՈՐՈՍԻ ՓԱՆՈՒՍՏԸ . — Լեւոնի սրբին թորոս՝ կայսեր հրամանով բանաէն ազատեցաւ և յոյն բանակին մէջ մտաւ: Իր քաջութիւնով քիչ ատենէն մեծ անուն վաստակեցաւ: Կիլիկիան Յոյներուն ձեռք անցած էր, բայց թուրք և լատին իշխաններ սկսան գրաւել Կիլիկիոյ քաղաքները: Յովհաննէս կայսրը ստիպուեցաւ մեծ բանակով Կիլիկիա արշաւել: Բանակին հետ էր Թորոս: Կայսրը յաղթուեցաւ և սպաննուեցաւ: Թորոս յարմար առիթը գտնելով ծածուկ փախաւ և ինքզինքը յայտնեց հայ քահանայի մը:

Հայերը լսելով Թորոսի զալուտը՝ չուտով անոր գրոչին տակ հաւաքուեցան: Անոր քով եկան նաև իր երկու եղբայրները՝ Ստեփանէ և Մլեհ, սրտնք Հալէպի սուլթանին պալատը կը դառնուէին: Թորոս 10,000 հոգիով սկսաւ հետզհետէ ետ առնել Վանկայ բերդը, Անազարբա, Ատանա, Մամեստիա և ուրիշ քաղաքներ:

ԱՆԴՐՈՆԻԿՈՍԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ. — Յուճաց Կիւ Մանուէլ կայսրը լսելով թորոսի փախչելը և Կիլիկիան գրաւելը, բազմաթիւ զօրքով Անդրոնիկոս զօրապետը զրկեց թորոսի վրայ: Թորոս աւսնելով որ Յոյները չառ են և հայ իշխաններն ալ անոնց հետ են, ապաստանեցաւ Մամեստիս: Անդրոնիկոս պաշարեց քաղաքը: Թորոս սուգեց անձնատուր ըլլալ և ճանչնալ Յոյներու գերիշխանութիւնը, պայմանաւ որ կայսրն ալ ճանչնայ Հայերուն իրաւունքը: Անդրոնիկոս գոռոզութեամբ մերժեց: Թորոս անձրետա գիշեր մը դուրս ելաւ քաղաքէն ու ետեէն զարկաւ Յոյները:



Թորոս յոյն գերիները կ'արձակէ 12,000 հոգիէն հազիւ քանի մը հոգի Անդրոնիկոսի հետ փախան. Թորոս անոնց ետեէն հալածեց մինչև Անտիոք: Գերի ինկած հասարակ զինուորները արձակեց, իսկ բարձրաստիճան գերիներն ալ՝ փրկանքով: Յոյներն սուգեցին որ Թորոս սրտչէ իրենց փրկանքի գինը: Ան պատասխանեց. « Եթէ ինձի համար բան մը արժէիք, ես ձեզ չէի արձակեր »: Յոյները ստիպուեցան ծանր փրկանք սրտչել ու աալ, իրենց

արժէքը բարձր պահելու համար: Թորոս հրամայեց առնուած դրամը զինուորներուն բաժնել: Երբ Յոյները ասոր պատճառը հարցուցին, ըսաւ. « Որպէսզի սուրիչ անգամ ալ ձեզ բռնեն »: Գերիներուն մէջ էր Օշին հայ իշխանը, որ իր փրկանքին կէսը 20,000 սօկի տալով, կէսին համար ալ իր Հեքուս աղան պատանդ առաւ:

ՄԱՆՈՒԷԼԻ ՀՆԱՐՔՆԵՐԸ. — Կիւ Մանուէլ աւսնելով որ իր բանակը փճացաւ, զրգուց Գոնիայի Մախուս սուլթանը, որ քանի մը անգամ յարձակեցաւ Կիլիկիա, բայց թորոս յաղթեց և անոր երկիրն աւարի տուաւ: Սուլթանը բարեկամացաւ թորոսի հետ: Այն ատեն կայսրը զրգուց Անտիոքի իշխանը և նոր զօրավարներ զրկեց, բայց անօգուտ: Ուստի կայսրն ինք գնաց թորոսի դէմ: Թորոս ուշիմացաւ և ինքզինքը սկսաւ պաշտպանել: Երուսաղէմի թագաւորը միջնորդեց և հաշտեցուց երկուքը:


ՍՏՖՍԱՆԷԻ ՄԱՂԸ. — Թորոսի եղբայրն Ստեփանէ Գոնիայի և Սերաստիոյ իշխաններէն հողեր գորաւելով փոքր իշխանութիւն մը հիմնեց: Յոյն մէկ կուսակալը ճաշի հրաւիրեց Ստեփանէն և դաւով ըրոնեց, ետացած կաթսոյի մը մէջ սպաննեց: Թորոս և Մլեհ զայրացան ու 10,000 յոյն կոտորեցին. վնասեցին բարբ Յոյները և բացարձակ սէր եղան իրենց երկրին՝ Կիլիկիայի:

ԹՐՈՐՈՍԻ ՄԱՂԸ. — Թորոս զգալով իր մահը և աւսնելով որ իր Ռուբէն սրդին փոքր է, իր աները էր իշխանութեան Պալլ-Խնամակալ կարգեց: Մեռաւ 1168ին, 24 տարի իշխելէն ետքը:

ՄԼԵՀ (1169—1175). — Մլեհ շատ անխնամ մնացած էր: Ան նախ կաթուղի եղաւ, յետոյ մահմետական: Անգութ էր: Թորոսի մահէն ետք Մլեհ նուրեւտախն սուլթանին օգնութեամբ զահը յափշտակեց:

Թովմաս Պայլ Անտիոք փախաւ և Ռուբէնն ալ Ներսէս Շնորհալի կաթողիկոսին քով զրկեց: Շնորհալի այդ ժամանակ Հայոց կաթողիկոսն էր շատ բարի և խելացի մէկն էր: Նշանաւոր է ան իր գրուածներով ու գործերով: Ռուբէն հիւանդանալով մեռաւ Շնորհալիի մօտ: Մլեհ սկսաւ անգթութիւններ գործել, այդ պատճառով հայ իշխանները սպաննեցին զինքը Սիս քաղաքին մէջ:

ՌՈՒԲԷՆ Բ. (1175—1185). — Իշխանները դահը նստեցուցին Ստեփանէի որդի Ռուբէն Բ.ը, որ հեզ և խոհեմ մէկն էր: Ասոր ժամանակ Լամբրոնի իշխան



Լամբրոնի բերդը եւ հովոցները

Հեթում գլուխ վերցուց: Հեթում Թորոս Բ. էն ազատ արձակուած էր և ամուսնացած էր անոր աշջկան հետ: Ռուբէն պաշարեց Լամբրոն բերդը: Հեթում Անտիօքի Պոնտուսնդ իշխանին օգնութեանը դիմեց: Սա խարէութեամբ բռնեց Ռուբէնը և բանտարկեց: Սակայն Ռուբէնին եղբայրը Լեւոն պաշտպանեց իր երկիրը, ստիպեց Հեթումը որ հաշտութիւն խնդրէ և

Ռուբէնն ազատէ: Ռուբէն դարձաւ Կիլիկիա և քիչ ետքը իշխանութիւնը յանձնեց Լեւոնին և ինքը վանք մը քաշուեցաւ ու մեռաւ 1185ին:

ԺԳ. ԴԱՍ

ԼԵՒՈՆ Բ. ԹԱԳԱՒՈՐ

ԼԵՒՈՆ Բ. Ի ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ. — Լեւոն Բ. իր եղբորը յաջորդելէն յետոյ աշխատեցաւ երկիրը բարեկարգել և շէնցնել: Այս միջոցին Կիլիկիա արշաւեց Գոնիայի Բուստիմ սուլթանը: Լեւոն քաջութեամբ դնաց անոր առջև, ցրուեց անոր բանակը և սուլթանն սպաննեց: Հազիւ թէ այս պատերազմը աւարտած էր, Հալէպի և Գամասկոսի Սուլթաններն ալ միաբանած յարձակցան Կիլիկիա: Լեւոն իսկոյն դէմ գնաց եւ մեծ կոտորածով ետ քշեց 1187ին: Ապա դարձեալ սկըսաւ երկիրը զարգացնել ու բարեկարգել:

ՖՐԷՏԷՐԻԿ ՇԻԿԱՄՕՐՈՒՍ. — Այս միջոցներուն եգիպտոսի Սալահետին Սուլթանը Երուսաղէմը գրաւած էր ինչպէս իրենքու ձեռքէն: Ասոր համար նոր և մեծ խաչակրութիւն մը կազմուեցաւ Եւրոպայի մէջ: Այդ ինչպէս իրենքուն առաջնորդներէն մէկն էր Ֆրէտերիկ Ա. Շիկամօրուս: Գերմանիոյ կայսրը: Խաչակիրները անցան Պոլիսէն և Կիլիկիայէն ալ անցնելով Երուսաղէմ պիտի երթային: Կայսրը երբ Գոնիա հասաւ դեսպան զրկեց Լեւոնին և խնդրեց որ իրենց օգնէ: Լեւոն անմիջապէս օգնութիւն հասցուց, պաշար զրկեց: Կայսրը գոհ մնաց և խոստացաւ Լեւոնը թա-

գաւոր պատկել: Երբ կայսրը Կիլիկիայի արեւմտեան կողմը՝ Իսաւրիա հասաւ, Լեւոն իշխանը իր հետը առնելով Գրիգոր Գ. կաթողիկոսը և ուրիշ բարձրաստիճան անձեր գնաց կայսեր առջև: Գոթախառարար Ֆրէտէրիկի հետ չկրցան տեսնուիլ, որովհետեւ կալիկադոնս ղեաին մէջ լռօցած ատեն խեղդուեր էր:



Լեւոն Բ. բագաւոր Հայոց

ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ԿԸ ՊՍԱԿՈՒԻ. — Կայսեր մահուան պատճառով Լեւոն մէկ քանի տարի չկրցաւ թագ ստանալ: Սակայն յետոյ Ֆրէտէրիկի յաջորդ և սրբի Հենրիկոս Զ. կայսեր ու պապին դեսպան ղրկելով, խնդրեց որ իրեն խոստացուածը տրուի: Անտնք ալ ղրկեցին: Ուստի 1198ին Տարսուսի մէջ

փառաւոր կերպով թագաւոր օծուելաւ Հայոց Գրիգոր Զ. կաթողիկոսէն: Յունաց Ալեքսիոս կայսրն ալ թագ ղրկեց Լեւոնին և շնորհաւորեց զայն: Լեւոն



Լեւոն բագաւոր կը պսակուի

Թագաւոր օծուելէն ետք աթոռը փոխադրեց Սիս:

ԱՆՏԻՈՒՅԻ ՎԷՃԸ. — Լեւոն եղբոր աղջիկ մ'ունէր Ալիզա անուանով: Ալիզա ամուսնացած էր Անտիոքի խաչակիր իշխանի մը՝ Ռայմոնտի հետ և ունեցած էր Ռուբէն անուն տղայ մը: Ռուբէն Անտիոքի իշխան եղաւ, երբ որ աթոռը թափուր մնաց:

Ռուբէն հարեղբայր մ'ունէր ձիւան անուն, որ ուզեց Ռուբէնի անդ Անտիոքի իշխան ըլլալ, ուստի միացաւ ուրիշ խաչակիր իշխաններու հետ և քալեց Անտիոքի վրայ հալածեց Ռուբէնը, որ Լեւոնի քով գնաց, օգնութիւն խնդրեց: Լեւոն սկսաւ պատերազմի մը, որ տևեց 12 տարի: Վերջապէս երուսաղէմի լատին թագաւորը և ուրիշներ միջնորդ եղան և Ռուբէնը նստեցուցին Անտիոքի աթոռին վրայ, 1211ին:

ԼՈՒՍԻՆԵԱՆՆԵՐԸ. — Լուսինեանները ֆրանսացի էին, որոնք իբրև խաչակիր եկած էին Երուսաղէմ. անկէ եկած հաստատուած էին Կիպրոս կղզին և կ'իշխէին անոր: Լեւոն ամուսնացած էր Լուսինեան ցեղէ կնոջ մը հետ: Անգամ մը երբ Լեւոն և իր կինը Կիպրոս գացին իրենց ազգականները տեսնելու՝ Լեւոնի թշնամի լատին իշխանները նաւերով անոր սպասեցին և յանկարծ յարձակեցան անոր վրայ: Լեւոն ճարպիկութեամբ ազատեցաւ և նաւեր պատրաստելով ցիր ու ցան ըրաւ իր թշնամիները:

ՀԵԹՈՒՄԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ. — Երբ Կիլիկիա հասաւ, իմացաւ որ Լամբրոնի Հեթում իշխանն ապստամբ էր է՝ թշնամիներէն թելադրուած: Լեւոն շուտով հասաւ և ապստամբը բռնեց, երկու տղոց հետ Սիսի մէջ բանտարկեց:

ՂԱՅԱՍԷՏՏԻՆ ՍՈՒԼԹԱՆԸ. — Թշնամիները գըրգռեցին նաև Հալէպի Ղայասէտտին սուլթանը, որ զօրքով գնաց Կիլիկիա, ղեսպան զրկեց Լեւոնի պահանջելով որ կամ հպատակի և կամ տուրք տայ: Լեւոն ժամանակ չանելու հա՛ւար ղեսպաններն այս ու այն կողմ թափառեցուց և զօրք ժողվելով, յարձակեցաւ սուլթանին վրայ, ցիր ու ցան ըրաւ բանակը: Սուլթանն ստիպուեցաւ իր պահանջած տուրքէն աւելի վճարել Լեւոնի (1212ին):

ԻԶԶԷՏՏԻՆ ՍՈՒԼԹԱՆԸ. — Լեւոն վերջին տարիներուն ստիպուեցաւ կռուիլ Գոնիայի Իզզէտտին սուլթանին հետ, որ եկածէր Կիլիկիան զբաւելու: Լեւոն հիւանդ էր, ուրիշ զօրապետներ զրկեց, բայց անոնք յաղթուեցան: Սուլթանը սկսաւ քալել դէպի Կիլիկիոյ ներսերը: Յանկարծ իմացաւ որ Լեւոն իր երկիրը գացեր աւերակ կը դարձնէ: Ստիպուեցաւ ետ դառնալ և առանց պատերազմի հաշտուիլ (1217ին): Անկէ ետք երկար չապրեցաւ Լեւոն, մեռաւ 1216ին:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Լեւոն բարեկառգիչ մը եղաւ յաղթեց Գոնիայի Բուստէմ Սուլթանին, Ֆրէտէրիկի օգնեց, թագի խոստում առնելով, բայց կայսեր մահը պատճառ եղաւ որ ուշանայ: Հենրիկոս 2. զրկեց խոստացուած թագը, 1198ին: Ալեքսիոս իր կարգին թագ զրկեց Լեւոնի: Անտիոքի իշխաններուն հետ 12 տարի կռուի կը ըսնուի ան և կը յաղթէ: Հեթումի ապստամբութիւնը կը խորտակէ. իր թշնամիներուն դաւերն իղերեւ կը հանէ: Ղայասէտտինի և Իզզէտտինի յարձակումները ետ կը մղէ և կը մեռնի 1219ին:



ԺԳ. ԴԱՍ

ԶԱՊԷԼ, ՓԻԼԻՊՈՍ ԵՒ ՀԵԹՈՒՄ Ա.

ԶԱՊԷԼ ԵՒ ՓԻԼԻՊՈՍ. — Լեւոն Բ. արու գաւակ չունենալով իր գահը թողուցեր էր Զապէլ անուն աղջկան և խնամակալ կարգեր էր Ադամ Պալլը և Կոստանդին Պարոնը: Իշխաններու և եկեղեցականներու խորհուրդով Զապէլն ամուսնացուցին Անտիօքի իշխաններէն մէկին՝ Փիլիպոսի հետ, պայման դնելով որ ան հայ ծէսով և սովորութիւններով վարուի (1222): Փիլիպոս նախապէս իր խոստումը յարգեց, բայց ետքը սկսաւ հայ եկեղեցին և սովորութիւնները արհամարհել: Հայ իշխանները խրատեցին, բայց ականջ չկախեց. արքունի զանձեր գաղտնի իր հօրը զրկեց և ինքն ալ Զապէլի հետ Անտիօք փախաւ: Կոստանդին Պալլ ետեէն հասաւ, բռնեց և Սիսի մէջ բանտարկեց, ուր մեռաւ 1225ին:

ՉԱՊԷԼ ԵՒ ՀԵԹՈՒՄ . — Այն ատեն մեծերուն խորհուրդով Կոստանդին Չապէլն ամուսնացնել ուզեց իր որդիին՝ Հեթումի հետ: Չապէլ յանձն չառաւ և գնաց Սելեկիա՝ իր մօրը քով: Կոստանդին Սելեկիան պաշարեց. Չապէլ համոզուեցաւ և ամուսնացաւ Հեթումի հետ 1226ին: Հեթում եղաւ շատ խելացի իշխան մը:

ԹԱԹԱՐՆԵՐԸ ԵՒ ՀԵԹՈՒՄ . — Այդ միջոցներուն թաքարները Հայաստան մտած էին և հուր ու սուր կը տարածէին: Թաթարները, Սելճուգներուն նման, Կեղբոնական Ասիայէն ելած և մտած էին Պարսկաստան, Միջագետք և Հայաստան: Անոնք շատ անգութ մարդիկ էին: Գոնիայի Ղայսսէտտին սուլթանը, տեսնելով որ Թաթարներն իր երկրին վրայ կ'արշաւեն, անոնց առջև ելաւ, նախապէս իր ընտանիքը Կիլիկիա՝ Հեթում թագաւորին մօտ զրկելով: Սուլթանը յաղթուեցաւ: Հեթում ուզեց թաթարներուն հետ դաշնակցիլ: Թաթարներու իշխանն ընդունեց, պայմանով որ Հեթում իրեն յանձնէ Ղայսսէտտինի ընտանիքը: Հեթում ընդունեց: Սուլթանը բարկացաւ. յարձակեցաւ Կիլիկիա: Հեթում գիմադրեց. պատերազմին մէջ սուլթանն սպաննուեցաւ:

ՀԵԹՈՒՄ ՄԱՆԳՈՅ ԽԱՆԻՆ ՄՕՏ . — Հեթում թէ և լաւ յարաբերութիւն կը մշակէր եւրոպացի իշխաններու հետ, բայց որովհետև զիսէր թէ անոնք չեն կրնար օգնել, որոշեց բարեկամանալ Թաթարներուն հետ: Անձամբ գնաց Մանգոյ խանին մօտ (1253)ին: Խանը մեծ պատիւներով ընդունեց Հեթումը և մշանջնական դաշինք կնքեց անոր հետ: Հեթում 2 ու կէս տարի օտարութեան մէջ մնաց:

ՀԵԹՈՒՄԻ ԿՈՒԻՒՆԵՐԸ . — Հեթումի բացակայութեան ատեն Գոնիայի Իզդէտտին սուլթանը Կիլիկիա արշաւեր էր: Ուստի Հեթում յարձակեցաւ անոր

վրայ: Կիլիկիայէն վտարեց զայն և ետ առաւ բոլոր քաղաքները: Գոնի մը տարի ետքը Մանգոյ խանի եղբայրը Հուլաղու Հեթումէն օգնութիւն խնդրեց երուսաղէմը Մէմլուքներու ձեռքէն առնելու համար: Հեթում 40,000 հետեւակ և 12,000 ձիաւոր զօրքով հասաւ Եղեսիա: Մէկտեղ զբաւեցին Հալէպը: Երբ կը պատրաստէին երուսաղէմի վրայ երթալու, լուր եկաւ որ Մանգոյ խանը մեռեր է: Հուլաղու 20,000 զօրք թողուց և դարձաւ Թաթարիստան: Եգիպտոսի սուլթանը, Հուլաղուի ետ քաշուելէն սիրա առած, յարձակեցաւ Թաթարներուն վրայ, յաղթեց անոնց և եկաւ Կիլիկիայ մօտերը: Դեսպան զրկեց



Հեթում կ'ողբայ իր երկու զաւակները Հեթումի և հարկ պահանջեց: Հեթում իր Լեւոն և Թորոս որդիները զօրքով զրկեց սուլթանի գէմ, իսկ ինքը գնաց Թաթարներէն օգնութիւն ուզելու: Մէմլուքները բազմութեամբ մտան Կիլիկիա: Թորոս մեռաւ պատերազմի մէջ և Լեւոն ալ գերի ինկաւ: Մեծ աւերով դարձան իրենց երկիրը: Հեթում ուշ

մուր ետ քաջուեցաւ : Հայերն ալ ստիպուեցան քաջու-
ուիլ, բայց բաւական կորուստ ունեցան : Ասկէ ետք
Լեւոն ինքզինքը առաւ շինարարութեան ու բա-
րեկարգութեան :

Հեթո՞՞Մ Բ . — Լեւոն Գ . ի յաջորդեց իր սր-
բին Հեթում Բ . , որ թոյլ մարդ մըն էր : Եգիպտոսի
սուլթանը բազմաթիւ զօրքով դարձեալ արշաւեց
Կիլիկիա : Հեթում օգնելու համար դեսպաններ զըր-
կեց թաթարներու Արղու խանին և Պապին : Արղու
խանը պատերազմի մէջ ըլլալով չէր կրնար օգնել :
Իսկ Պապը և Ֆրանսոսի թագաւորը պարտաւ խօս-
քերով ետ դարձուցին դեսպանները : Սուլթանը պա-
շարեց Հոռովկայ բերդը, ուր Հայոց կաթողիկոսը կը
նստէր : Գրաւեց զայն, կաթողիկոսը ու Ս . Գրիգորի
Աջը գերի տարաւ : Հեթում ստիպուեցաւ մէկ երկու
բերդ տալով հաշտուիլ և կաթողիկոսն ու Աջը ազա-
տել : Արդէն ինքը Հեթում Բ . շատ կը սիրէր մասունք-
ները և կը յարգէր . մասնաւոր տուփ մը ունէր :

Հեթո՞՞Մ ԵՒ ԹՈՐՈՍ . — Ասկէ ետքը Հեթում
իշխանութիւնը յանձնեց իր եղբորը Թորոսին և վանք
մը քաջուեցաւ : Բայց երկու տարի ետք Թորոս ալ
վանք մը քաջուեցաւ . Հեթում կրկին դա՛նին վրայ
նստեցաւ :

ՍՄԲԱՏԻ ԴԱԻԸ . — Հեթում իր Մաքիամ քոյրը
Յունաց Անդրոնիկոս կայսեր Միխայիլ որդիին աը-
ուաւ : Քիչ ետքը իշխանութիւնը իր երբորդ եղբորը
Սմբատին յանձնելով Թորոսի հետ քրոջը տեսութեան
դնաց : Սմբատ եղբորը բացակայութենէն օգտուելով
թագաւոր օծուեցաւ Միսի մէջ : Երբ Հեթում և Թո-
րոս դարձան, բանաը դրաւ զանոնք ու Հեթումին
աչքերը կուրցուց , Թորոս ալ բանտին մէջը մեռաւ :
Հեթումի բ . եղբայրը, Կոստանդին այս անգթութիւ-
նը տեսնելով զօրքը իր կողմը քաջեց, Սմբատը գա-

նէն զրկեց , Հեթումը ազատեց և ինք իշխան եղաւ :
Քիչ ետքը Հեթումի աչքերը բացուեցան : Հայերը
ուզեցին վերստին թագաւոր դնել զայն, բայց Կոս-
տանդին Սմբատի հետ միացաւ և ուզեց զիմադրել :
Իսկ Հեթում Տաճարական ասպետներու օգնութիւ-
նով յաղթեց անոնց , երկուքը բռնեց և Պոլիս զրկեց
բանտարկելու համար ու ինքը եղաւ թագաւոր
(1299) :

ԹԱԹԱՐՆԵՐԸ . — Այդ միջոցին Դամասկոսի
սուլթանը արշաւեց Կիլիկիա : Հեթում զիմադրեց
անոր ու վտարեց : Դժբախտաբար այդ ատենները
թաթարներու Ղազան խանը մեռաւ (1302) , և անոր
յաջորդեց Ղարբաղանդ որ մահմետականութիւնն
ընդունեց : Անկէ ետքը թաթարները թշնամի եղան
Հայերուն : Կիլիկիայի շուրջ ամէնքն ալ թշնամի
էին Հայոց . Սելճուկեանները, թաթարները և Մէմ-
լուքները, Հայոց յոյսը միայն Եւրոպայէն էր :

ԼԵՒՈՆ Գ . ԵՒ ՀԵԹՈՒՄ . — Հեթում նորէն գահէն
հրամարկելով իր տեղը նստեցուց Թորոսի որդին Լե-
ւոն Գ . ը, 1305ին : Այդ ժամանակ կրօնական վէճ ծա-
ղեցաւ . թագաւորն ու կաթողիկոսը կ'ուզէին հայ ե-
կեղեցին կաթոլիկ եկեղեցիին նմանցնել, որպէսզի պա-
պը Հայոց օգնէ : Բայց ժողովուրդը կը բողոքէր : Ա-
նոնք կ'ուզէին իրենց հայրենի աւանդութիւնները
պահել : Ուստի թաթարներու Բիլարղու զօրապետին
բողոքեցին : Բիլարղու Լեւոնն ու Հեթումն իր մօտ
կանչեց և Անազարբա քաղաքին մէջ երկուքն ալ ըս-
պանեց՝ իրենց կուսակից իշխաններուն հետ (1307) :

ՕՇԻՆ ԵՒ ԼԵՒՈՆ Ե .

ՕՇԻՆ (1308—1320) . — Լեւոն Գ , ի եղբայրն էր
Օշին, որ իր եղբոր Հեթումի եղբրական մահը լսելով,

յարձակեցաւ Բիւլարդուի վրայ և Կիլիկիայէն դուրս քշեց: Օշին եղաւ թագաւոր և ինքզինքը տուաւ շինարարութեան: Տարսոնի շուրջ պարխապներ կանգնեց ու քաղաքին մէջ եկեղեցի մը շինեց: Այդ եկեղեցին մզկիթի փոխուած է հիմակ և կը կոչուի Քիլիսէ համի:

ԿՐՕՆԱԿԱՆ ՎԷՃԸ. — Օշին իր թագաւորութիւնը թշնամի մահմետականներուն ղէմ պաշտպանելու համար, իր նախորդներուն նման, ուզեց հայ եկեղեցիին սովորութիւնները փոխել, լատինացնել որ կաթողիկոսները և պապը օգնեն իրեն: Սիսի մէջ ժողով մը գումարել տուաւ և բռնի ստիպեց եկեղեցականները, որ ընդունին: Եկեղեցականները ընդունեցին և թուղթ մըն ալ ստորագրեցին, բայց ժողովուրդը ղէմ կեցաւ և արգիլեց:

ՄԵՄԼՈՒՔՆԵՐՈՒ ՅԱՐՉԱԿՈՒՄԸ. — Տեսնելով որ Մեմլուքները մեծ պատրաստութիւն կը տեսնեն Կիլիկիա արշաւելու համար, Օշին դիմեց Հոռոմի պապին և Ֆրանսայի Փիլիպոս Ե. թագաւորին որ օգնեն: Բայց անոնք չկրցան օգնել իրեն: Օշին ստիպուեցաւ միս մինակը դիմադրել Մեմլուքներուն: Քիչ ետքը մեռաւ:

ԼԵՒՈՆ Ե. (1320—1341). — Օշինի յաջորդեց իր տասնամեայ որդին Լեւոն Ե., որու խնամակալ եղաւ Օշին Պալլ: Այս Օշինը սոսկալի հակառակ էր լատինական կուսակցութեան: Լեւոնը ամուսնացուց իր աղջկան հետ: Ասոր օրով Մեմլուքները շատ զօրաւոր էին. անոնց սուլթանն էր Մելիք Նազար, որ կը տիրէր Եգիպտոսի, Ասորիքի, Միջագետքի, Պարսկաստանի և այլն: Մելիք-Նազար իմանալով որ Եւրոպայի մէջ խաչակիրներ կը պատրաստուին Լեւոն Ե. ի օգնելու համար, դաշնակցեցաւ Թաթարներու և Թիւրքմէններու իշխաններուն հետ: Առաջին ան-

գամ Թաթարներու Թիմուր Թաշ զօրապետը մտաւ Կիլիկիա և աւեր ու քանդ ըրաւ երկիրը: Անկէ ետքը Թիւրքմէններու Արաման իշխանը յարձակեցաւ ու աւերեց: Ամէնէն ետքը Մէլիք-Նազար իր բանակը ղըրկեց Կիլիկիայի հայ թագաւորութիւնը ջնջելու համար:

ՀԵՐՈՍԱԿԱՆ ԴԻՄՍԴՐՈՒԹԻՒՆ. — Լեւոն Ե. թոյլ կերպով կեցած էր և ինքզինքը նուիրած էր կրօնական խնդիրներու: Ուստի բաղմաթիւ երիտասարդներ զուռդեր կաղմեցին և իրենք սկսան պաշտպանել երկիրը, 200 կարծաներ դարան մտան կիրճի մը մէջ, ուրկէ պիտի անցնէր թշնամի բանակը և կոտորեցին 6000 հոգի, մաս մըն ալ պերի բռնեցին: Ուրիշ 600 հոգիներ յարձակեցան Մէմլուքներուն վրայ ու ջարդեցին զանոնք և փախցուցին 5000 զիակ ձգեցին գետին: Այս հարուածներուն վրայ սուլթանը խոնարհեցաւ և 15 տարուան խաղաղութեան դաշինք մը ստորագրուեցաւ:

ԼԵՒՈՆ Ե. Ի ՅԻՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Լեւոն իր յիմար գործերով շուտով ամէնքն իրմէ հեռացուց: Հայ իշխաններն իրենց պաշտօնէն հանեց, անոնց կալուածները դրաւ երկրացի իշխաններու տուաւ: Նոյն իսկ թագուհին զբարտաթիւններով գլխատել արուաւ ու երկրորդ անգամ ամուսնացաւ Սիկիլիոյ թագաւորի աղջկան հետ (1330): Հայ իշխանները հեռացան իրմէ ու երկիրը մնաց անպաշտպան: Լեւոն եւ ըստպացիներէն օղնութիւն ուզեց, բայց անօգուտ:

Մէմլուքները նորէն արշաւեցին, քանդեցին և աւերեցին: Լեւոն փախաւ լեռները: Էն ետքը Աւերսարանի վրայ երդում ըրաւ, թէ Եւրոպացիներուն հետ յարարութիւն պիտի չունենայ: Քանի մը տարի ալ ապրեցաւ և մեռաւ անգուակ 1341ին:



ԺԵ. ԴԱՍ

ԼՈՒՍԻՆԵԱՆՆԵՐ, ԼԵՒՈՆ Զ.

ԿԻԼԻԿԻՈՅ ԼՈՒՍԻՆԵԱՆՆԵՐԸ. — Լեւոն Ե. անգաւակ մեռնելով, հայ իշխանները խորհեցան և ընտրեցին իբր թագաւոր Կիպրոսի Յովհաննէս Լուսինեան իշխանը, որ մօրը կողմէ հայ էր: Կիպրոսի Լուսինեան իշխաններէն մէկը ամուսնացած էր Հեթում Բ. ի քրոջ հետ և սենեցած էր երկու որդի. Յովհաննէս և Գուխտոն կամ Կի: Յովհաննէս թագաւորը ըլլալով իր անունը փոխեց և կոչուեցաւ Կոստանդին Գ.: Սա կաթողիկ ըլլալով ուզեց հայ եկեղիցիին մէջ մեծ փոփոխութիւններ մտցնել, լատին իշխաններուն պատիւներ տալ և արհամարհել Հայերը: Այս պատճառով ժողովուրդը յուզուեցաւ, հայ իշխաններն ու զօրքերը խռովեցան և սպաննեցին զայն, որուն թագաւորութիւնը հազիւ մէկ տարի տեւեց (1342):

ԳՍԻԻՏՈՆ ԵՒ ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ. — Յովհաննէսի տեղ թագաւոր եղաւ իր եղբայրը՝ Գուխտոն, որ անմիջապէս սկսաւ եղբօրն ընթացքին հետեւիլ: Մէմլուքները նորէն յարձակեցան Կիլիկիա: Գուխտոն չկրցաւ դէմ դնել, որովհետեւ բոլոր իշխաններն իրեն թշնամի ըրած էր: Պապին օգնութիւնը խնդրեց, բայց անօգուտ: Եգիպտացիներն ամէն կողմ աւերեցին ու դարձան: Հայերը տեսնելով Գուխտոնի անխոհեմ ընթացքը, սպաննեցին զայն (1344): Անոր տեղ ընտրուեցաւ Կոստանդին Գ., Լեւոնի մերձաւոր ազգականը և Պալտին՝ Հայոց սպարապետի որդին: Կոստանդին տեսնելով որ Հայոց ղեկավարութեան միակ պատճառը կրօնական վէճերն են, արգիլեց զանոնք: արգիլեց նաև օտարամուտ ամէն սովորութիւն:

Ասով ներքին խաղաղութիւնը վերահաստատուեցաւ: Եգիպտոսի Սուլթանը տեսնելով որ Հայոց թագաւորը պատրաստութիւններ կը տեսնէ իրեն դիմադրելու համար, բազմաթիւ զօրքով արշաւեց Կիլիկիա, բայց Կոստանդին, Հոռոսի և Կիպրոսի իշխաններուն հետ, յարձակեցաւ սուլթանին վրայ և յաղթեց անոր: Մէմլուքներու ձեռքէն առաւ Ալեքսանտրէք (Իսկէն-Մէրուզ) բերդաքաղաքը և ուրիշ բազմաթիւ վայրեր: Այս յաղթութեան վրայ Կիլիկիա խաղաղեցաւ մինչև Կոստանդինի մահը (1363):

ԳՍՀԻ ԿՈՒԻ, ԿՈՍՏԱՆԴԻՆ Ե. — Կոստանդին Գ. ի մահէն ետքը Կիլիկիա կը խռովի. Լուսինեան և լատին մէկ երկու իշխաններ կ'ուզէին դահը ձեռք անտնել, յայտնելով իրենց ազգականութիւնը: Այդ ցնեղ, յայտնելով իրենց ազգականութիւնը ելան: պատճառով մէկ երկու կուսակցութիւններ ելան: Այդ կուսակցութիւնները միջոցին Հայոց թագաւոր եղաւ Կոստանդին Ե., որ չի կրնար ոչ ներքին վէճերը դադարեցնել և ոչ ալ արտաքին թշնամիներուն դէմ դնել: Ան սպաննուեցաւ իր պալատականներէն. թագաւորեց 1365էն մինչև 1373:

ԼԵՒՈՆ Զ. ՎԵՐՁԻՆ (1374—1375). — Կոստանդին Ե. նաեւ վերջապէս Հայոց գահին վրայ բարձրացաւ Լեւոն Զ., որ Կիպրոսի Լուսինեան ընտանիքէն էր: Լեւոնի համար կ'ըսեն թէ քաջ և խելացի մարդ մըն էր, բայց այնպիսի ատեն մը թագաւոր եղաւ, երբ Կիլիկիա շատ սկաւրացած էր: Եգիպտոսի Մեկիմ-էշրէֆ-Շապան սուլթանը, տեսնելով Կիլիկիայի ինկամ վիճակը, ուզեց վերջնականապէս ջնջել Հայոց Ռուբինեան թագաւորութիւնը: Ուստի իր եղբօր Ահմետի յանձնեց բազմաթիւ զինուորներ և զրկեց Կիլիկիա 1374ին: Մէմլուքները սկսան աւերել, հուր ու սուր սփռել ամէն կողմ:

Լեւոն ինքն ալ տեսաւ որ Հայերը շատ քայ-
քայ յուսած են և պիտի չկրնան դէմ դնել թշնամիներ-
բուն. յուսահատեցաւ ան և քաջուեցաւ Կապան բեր-
դը, որ Ուլնիոյ այսինքն Զեթունի հիւսիսային ա-
րեւմտեան կողմը կը գտնուէր: Բերդը պաշարուե-
ցաւ. երբ պաշարն սպառեցաւ, Լեւոն անձնատուր
եղաւ: Իրեն հետ զերթի ինկան նաև Մարիամ թագու-
հին, Բեկնա աղջիկը և Շահան փեսան, 1375 Ապրիլ
16ին:

Ահմէտ գերիները տարաւ Երուսաղէմ և անկէ
Գահիրէ, ուր բանար ձգուեցան: Այսպէս վերջացաւ
Ռուբինեան-Լուսինեան Հարստութիւնը:


ԼԵՒՈՆԻ Ա. ԱՏՈՒԹԻՒՆԸ. — Լեւոն բանաին մէջ
չաա տառապանք կրեց. տառաջարկեցին իրեն և իրեն-



Լեւոն Զ. ի
Կիսանդրին

բուն ընդունիլ մահմեդականութունը, ազատ ար-
ձակելու համար, բայց անոնք մերժեցին: Նոյնպէս
սուլթանին իշխանները միջնորդեցին որ գտնէ թա-

գուհին և աղջիկը բանտէն ազատուին. սուլթանը
թոյլատրեց, բայց անոնք չուզեցին բաժնուիլ Լեւո-
նէն: Մէլիք Շապան մեռաւ և անոր յաջորդեց եղ-
բայրը Ահմէտ: Այն ժամանակ Սպանիոյ Յովհաննէս
և Արակոնի Պետրոս Դ. թագաւորները միջնորդե-
ցին: Լեւոն նախ գնաց Երուսաղէմ սելիտի հոն մը-
նացին իր կիներն ու աղջիկը: Ինքն անցաւ Հոռմ,
անկէ Սպանիա, ուր մեծ պատիւներ ընդունեց: Յով-



Լեւոն Զ. ի դամբարանը
հաննէս Լեւոնի նուիրեց Մատիս և ուրիշ երկու
բարձրներու իշխանութիւնը՝ մինչև իր մահը:
Երեք տարի ետքը անցաւ Յրանսա, ուր կարո-
ւոս Զ. պատուով ընդունեց զինքը. տարեկան 5000
ֆրանք թոշակ կապեց և Ս. Անտոնի պալատն իր

բնոր կահ կարասիներով անոր նուիրեց: Այդ ատենները Ֆրանսացիներն ու Անգլիացիները պատերազմի մէջ էին. Լեւոն ուղեց որ հաշտեցնէ զանոնք, որ իրեն օգնեն Կիլիկիան ազատելու համար. զնաց Անգլիա. փառաւոր ընդունելութիւն գտաւ. Անգլիացիք ընդունեցին և հաշտութեան համար պատուիրակ ղրկեցին: Բայց հաշտութիւնը չյաջողեցաւ: Լեւոն յուսահատած քաշուեցաւ Բարիզի Կեղեստինեանց վանքը և հոն մեռաւ 1393 Նոյեմբեր 29ին:

1789ի Ֆրանսական յեղափոխութենէն ետք Լեւոնի մահարձանը փոխադրուեցաւ Սէն-ՏՅի արքայական դամբարանը, ուր կը մնայ մինչև հիմակ:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Լեւոն եւէ ետք մէկ երկու Լուսինեաններ կ'իշխեն Հայոց, բայց իրենց հայտնեցութեան զոհ կ'երթան. ասոնք են Յովհաննէս, Գոստանդին Գ., Գուիտոն, Կոստանդին Ե., իսկ Կոստանդին Գ, խոհեմ եւ քաջ մէկը կը հանդիսանայ: Լեւոն Զ. վերջին ղժբախտ թագաւորը կ'ըլլայ, որ զերի կը բռնուի Ահմէտէն, կը բանտարկուի Գահիրէի մէջ, յետոյ Սպանիոյ թագաւորներուն միջնորդութեամբ կ'ազատի, կ'երթայ երուսաղէմ, Հռոմ, Սպանիա, Ֆրանսա եւ Անգլիա. Կ'աշխատի գահը վերադառնալ, բայց իզուր. կը մեռնի Բարիզ. Իրմով կը վերջանայ հայկական թագաւորութիւնը:



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն ԵՒ Հ Ա Յ Ե Ր Ը
Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք Ի Ա Ն Կ ՈՒ Մ Է Ն Ե Տ Ք

Ժ Զ Դ Ա Ս

Ճ Է Ն Կ Ի Զ Խ Ա Ն ԵՒ Լ Է Ն Կ Յ Ի Մ ՈՒՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ԱՆԿՈՒՄ ԵՆ ԵՏՔ. — Հայաստան Յունաց ձեռքն անցնելէ ետքը ենթարկուեցաւ Սելճուկներու արշաւանքին: Տուղրիկ և Ալփաւան տարիներով երկիրը տակն ու վրայ ըրին: Յոյներն այս արշաւանքներուն դէմ չի կրցան զնել ու քաշուեցան: Ալփաւանէն ետք իշխակըցան զնել ու քաշուեցան: Սելիխ-Շահ (1086—1092), որ նութեան գլուխ անցաւ Մելիխ-Շահ (1086—1092), որ քիչ մը քաղցրութեամբ վարուեցաւ Հայոց հետ: Անոր մահէն ետք երկիրը բաժնուեցաւ այլազգի մանր իշխաններու կամ ամիրաներու միջև: Այսպէս օրիորդներու կամ ամիրան, որ կը կոչուէր Շահի Արմէն: Անի քաարաւ ամիրան, որ կը կոչուէր Շահի Արմէն: Անի քաղաքին վրայ կ'իշխէր Մանուչէ, որուն յաջորդեց Արուստան: Այս բազմաթիւ օտարազգի իշխաններէն զատ կային նաև հայազգի իշխաններ ալ, որոնք բռնէին իրենց երկիրները. օրինակ՝ Աղուանից բաւուրուքիւնը, որուն իշխանները հայ էին, Վասպուրականի իշխանները՝ Տարօնի կամ Սասունի մէջ ևն. այս բոլոր իշխաններն երբեմն երբեմն կը կրօուէին իրարու հետ, երկիրն արեան ծով դարձնելով:

Ճէնկի Զ ԽԱՆ. — Կեղրոնական Ասիոյ մէջ կային կարգ մը թափառական ցեղեր, որոնք ընդհանրապէս թաթար կը կոչուէին: Սոյն ցեղերէն մէկն էր Սելճուկեան ցեղը: ԺԳ. զարուսկիզը Մոնղոլ թաթարներու առաջնորդը՝ ձէնկիզ Խան զօրա-

ցաւ ու նուաճեց Ձինաստանը, Հնդկաստանը, Պարսկաստանը, եւ այլն. ձէնկիզ խան կը պատրաստուէր Եւրոպա արշաւելու, երբ մահը վրայ հասաւ:

ՃԵՆԿԻԳ ԽԱՆ ՈՒԽԱԹԱ. — Երբ ձէնկիգ խան մեռաւ, Պարսից թագաւորի որդին ձէլալէտտին ուշեց իր հօրը գահը մեռք ձգել, բայց չարաչար յաղթուեցաւ եւ իր զօրքով Հայաստան փախաւ 1226ին: Սկսաւ կոտորել Հայերը եւ գրաւել իշխաններու երկիրները, բայց Ասորիքի իշխանները, Հեթում Ա. թագաւորին հետ միանալով յաղթեցին անոր. ան փախաւ Կորդուաց լեռներն, ուր սպաննուեցաւ: Հազիւ Հայաստան խաղաղած էր, ձէնկիգ խանի յաջորդն Ուխաթա հրամայեց իր զինուորներուն արշաւել Վրաց եւ Հայոց երկիրները: Ջօրպետն էր Ջարմաղան, որ 1236ին մտաւ Հայաստան եւ ահ ու սարսափ սփռեց. աղջիկներն ու մանակներն անգամ անխնայ կը կոտորէին: Անին գրաւեցին ու այրեցին:

ԲԱՉՈՒ. ՄԱՆԳՈՅ, ՀՈՒԼԱՂՈՒ. — Չարմաղանի յաջորդ Բաչու իշխանը արշաւեց Կարին գաւառը եւ թէրղուպուիս (Կարին կամ Էրզրում) քաղաքին տիրելով՝ բնակիչները սրէ անցուց, Յետոյ Ուխաթայի յաջորդ Մանգոյ խանը Հայաստան զրկեց Հուլաղու գօրապետը, որ բոլոր իշխաններուն յաղթելով, ամբողջովին տէր հղաւ Հայոց երկրին:

ԼԷՆԿԻԹԻՄՈՒՐ. — Հուլաղուէն ետքը Թաթարներու պետութիւնը կամաց կամաց տկարացաւ: Երկիրները դարձեալ բաժնուեցան մանր իշխաններու միջև. Ժ.Ի. դարուն վերջերը մէկը ելաւ որ ուղեց ձէնկիգ Խանի քայքայուած պետութիւնը վերականգնել: ձէնկիգ Խանի շտաբի գլխերէն Լէնկիթիմուրն էր ան, էօղպէկ Թաթարներու առաջնորդը: Կազ էր և անգուլթ. Ձինաստանէն մինչև Միջերկրական ծովը իր անդթութիւններուն թաարը եղան: Պաղատար կործանելէն, Դամասկոսն այրելէն ետքը, Հայաստան մտաւ 1387ին: Անոր զօրքը նախ Սիւնեաց աշխարհը մտաւ: Ուր որ հասան բնակիչներուն ջարդ տուին և քաղաքներ գետնի հաւասար կործանեցին: Բիւրաւոր մարդիկ գերի ինկան և չարաչար սպաննուեցան: Անկէ ետքը յարձակեցան Վանի վրայ,

Կըժուարութեամբ առին: Լէնկիթիմուր բոլոր բնակիչները բերդերէն վար նետել տուաւ և դիակներու



Լէնկիթիմուր

կոյտերը պարիսպներու բարձրութեան հաւասարեցան: Բոլոր Հայաստանն այսպիսի անդթութիւններով նուաճելէն ետքը, Լէնկիթիմուր անցաւ Փոքր Ասիա: Սերաստիա քաղաքը խաբէութեամբ առաւ. հաբուսները կողոպտեց և սպաննեց, կիները ձիերուն պոչին կապեց, անմեղ մանուկները տեղ մը հաւաքեց լով իր ձիաւորներուն կռիտով տուաւ. 4000ի չափ հայ զինուորներ սղջ սղջ թաղեց: Անկէ անցնելով Լէնկիթիմուր մօտ պատերազմեցաւ Օսմանցիներու թագաւոր Սուլթան Պայադիաի հետ և յաղթեց անոր:

Ապա դարձաւ իր երկիրը Սմրդաւնո:

ԳԱՐԱ ԵՌԻՍՈՒՅ , ՇԱՀՐՈՒԽ, ԻՄԿէՆՏէՐ . — Լէնկթիմուրի մահէն ետքը Հայաստան կրկին տակն ու վրայ եղաւ: Յաղթընուած իշխաններն երբ իմացան Լէնկթիմուրի մահը, դարձեալ գլուխ վերցուցին. անոնցմէ մէկն էր Գարա Եուսուֆ , Թիւրքմէններու թագաւորը, որ Հայաստանի մեծ մասին տիրեց: Քանի մը տարի ետքը Լէնկթիմուրի Շահրուխ որդին եկաւ անոր դէմ: Եուսուֆ մեռաւ պատերազմին մէջ եւ իրեն յաջորդեց եղբայրը՝ Իսկէնտէր, որ Հայաստանը նուաճելով Շահի Արմէն կոչուեցաւ: Շահրուխ քանի մը անգամ անձամբ եկաւ անոր դէմ, ուրիշ անգամներ ալ զօրապետներ զրկեց: Հայաստան աւերակ կը դառնար անոնց ստրկերուն տակ: Որով Լէնկթիմուրի ժամանակին նման այս անգամ ալ սոսկալի սող մը տիրեց, երբ ծնողներ իրենց զաւակներն եփեցին ու կերան: Անկէ յետոյ Հայաստան մէկ մը Լէնկթիմուրի իշխանութեան տակ կ'իյնար, մէկ մը թիւրքմէն իշխաններու ձեռքը:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Բագրատունեաց կործանումէն յետոյ Հայաստան ոտքի կոխան կ'ըլլայ բարբարոսներու եւ կը բաժնուի մանր իշխաններու միջեւ: Այդ միջոցներուն ձէնկիզ խան կը հիմնէ իր ընդարձակ պետութիւնը: Խորազմի իշխան ձէլալէտաին ահ ու սարսափ կը սփռէ պահ մը: Չարմաղան, Բաւու եւ Հուլաղու թաթար զօրապետներ ճետոգճետէ կուգան աւերելու երկիրը: Սակայն ամէնէն անգութ արշաւանքը կ'ըլլայ Լէնկթիմուրիինը: Կը գրաւէ ան բոլոր բերդերը եւ ամբողջ երկիրը: Անոր մահէն յետոյ Գարա-Եուսուֆի, Իսկէնտէրի, Շահրուխի եւ ուրիշներու միջեւ կուռախնձոր կ'ըլլայ Հայաստանը, ուր սողը կը տիրէ:



ԺԷ. ԴԱՍ

ՕՍՄԱՆՑԻՆԵՐԸ ԵՒ ՇԱՀ ԱԲԱՍ

ՕՍՄԱՆՑԻՆԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ . — Օսմանցիները կամ Թուրքերը հին ատեն կը բնակէին Կեղրոնական Ասիայի մէջ: Քրիստոսէ առաջ անոնք կուռած են Չինացիներուն հետ, որոնք կը կսչէին զանոնք Փէ, այնպիսին «չուներ», կամ Փէ-թի, այսինքն՝ արեւմտեան չուներ: Սակայն Չինացիները ստիպուեցան չատ անգամ ձանչնալ անոնց իշխանութիւնը: ձէնկիզ Խան մոնկոլ իշխանը զօրացած ժամանակ Թուրքերուն առաջնորդն էր Սիւլէյման Շան, որ ժողովեց իր տոհմը և 50, 000 հոգիով ձէնկիզ Խանի առջևէն փախաւ դէպի արեւմուտք եւ եկաւ բնակեցաւ Վանայ ծովին հիւսիսային կողմը, Ախլաթի շուրջ. անկէ անցաւ Պիթլիսի, Ղարզանի, Տիարպէքիբի ճամբով Երզնկայի շրջակայնէրը: Երբ իմացաւ թէ ձէնկիզ Խան մեռեր է, պատրաստուեցաւ վերադառնալու իր հայրենիքը, սակայն ճամբան՝ Հալէպի մօտերը, Եփրատ գետէն սանցած ատեն, ձիէն ինկաւ և խեղդուեցաւ: Ասոր վրանցած ատեն, ձիէն ինկաւ և խեղդուեցաւ: Բաժնեւորայ իր որդիները իրենց տոհմը երկուքի բաժնեւորեցին: մէկ մասը երկու որդիներու առաջնորդութեամբ գնաց բնակեցաւ Ատանայի և մարաշի շրջակայնէրը, զնաց բնակեցաւ Ատանայի և մարաշի շրջակայնէրը, իսկ միւս մասը էրթողրուլի առաջնորդութեամբ դարձաւ բնակեցաւ էրզրումի Բասէն գաւառը. անկէց անցաւ արեւմուտք Սելճուղեաններու տէրութեան սահմանները: Ալաէտաին՝ Գոնիայի սուլթանը սիրով ընդունեց և բնակութեան տեղեր պարգևեց Բիթլիսի, սահմաններուն վրայ: էրթողրուլ քաջութեամբ կռուեցաւ Ալաէտաինի թշնամիներուն դէմ, միւս կողմէ իր երկիրն ալ ընդարձակեց: էրթող-

բուլի մահէն ետքը անոր յաջորդեց Օսման Ա., որ աւելի քաջութեամբ կռուեցաւ Ալաէտաինի թշնամիներուն դէմ, միւս կողմէ իր երկիրն ալ ընդարձակեց : Ալաէտաինի մահէն ետքը Սելճուկեանց երկիրը բաժնուեցաւ մանր իշխաններու միջև, այդ մանր իշխաններուն մէջէն ամէնէն զօրաւորը հանդիսացաւ Օսման, որ հետզհետէ զբաւեց Պրուսա, Եէնիչէնի, Ինչէկէօլ և այլն քաղաքները : Անոր անուսով Թուրք պետութիւնը կոչուեցաւ Օսմանեան :

Օսմանի յաջորդները աւելի ընդարձակեցին հայրերու կալուածները և հետզհետէ սկսան արիւն Նիկիա, Նիկումիդիա, Էտիքոնէ քաղաքներուն և վերջապէս Յաքին Սուլթան Մեհմետ Բ. ի օրով զբաւեցին Կոստանդնուպօլիսը 1453ին :

ՌԻՋՈՒՆ ՀՍՍԱՆ . ՇԱՀ ԻՍՄԱՅԻԼ . — Օսմանցիք Պոլիսը գրաւելէն ետքը սկսան արեւելք և արեւմուտք իրենց երկիրը ընդարձակել : Այդ միջոցներուն Հայաստանի մեծ մասը կը գանուէր Թիւրքմէն ցեղէն մէկուն Ուզուն-Հասանի ձեռքը որ կ'իշխէր ամբողջ Պարսկաստանի : Սուլթան Մէհմէտ յարձակեցաւ Ուզուն Հասանի վրայ և Դերջանի մօտ, 1473ին, յաղթեց անոր ու փախցուց : Այսպէս առաջին անգամ Օսմանցիները մտան Հայաստան : Ուզուն Հասանէն ետք անոր ընտանիքին մէջ վէճ մը ծագելով դահը անցաւ Սեֆեան ընտանիքին Շահ Իսմայիլի ձեռքը (1473) :

ԹՈՒՐԲ ԵՒ ՊԱՐՍԻԿ ԿՈՒԻՆՆԵՐ . — Շահ Իսմայէլ յարձակեցաւ Օսմանեան երկիրները : Անկէ ետքը երկար տարիներ անվերջ կռիւներ տեղի ունեցան Պարսկաստանի չահերուն և օսմանեան սուլթաններուն միջև : Շահ Իսմայէլէն ետք Թահմուզպ 50 տարի անընդհատ կռուեցաւ Օսմանցիներուն հետ : Անոր մահէն ետք Համզա և Շահ Աբաս շարունակեցին

այս ստակալի կռիւները, որոնց միջոցին շատ անգամ կը յաղթուէին Օսմանցիներէն, և միշտ ոտքի կոխան և աւերակ կը դառնար Հայաստան :

ՇԱՀ ԱԲՍԱ . — Երբ Օսմանցիները Հայաստանի տէր դարձան սկսան կառավարել երկիրը իշխող անգութ կառավարիչներու և տէրէպէյիներու միջոցաւ : Հայերը ու անդացի ուրիշ իշխաններ դժգոհ էին, ուստի գացին Շահ Աբասի մօտ և օգնութիւն խընդրեցին : Շահը արդէն առիթի մը կ'սպասէր . մեծ պատրաստութիւններով արշաւեց Հայաստան . գրաւեց Աբսպատական նահանգը և առաւ Նախիջեւանը, Երեւանը, նուաճեց ամբողջ Աբարատ նահանգը և Ամբրզուկա նախարարը կուսակալ դրաւ :

ՇԱՀ ԱԲՍԱՍԻ ԱՆԳՐ ՌԻԹԻՆՆԵՐԸ . — Այս բոլոր ցաւալի եղելութիւններուն գոյժը Պոլիս հասնելուն պէս Սուլթանը Սիւան փաշան օսմ . բանակին սպարապետ կարգեց և թշնամիին վրայ զրկեց : Շահ Աբաս կարս քաղաքին քով լսեց օսմ . զինուորներուն գաւը : Տեսնելով որ պիտի չկրնայ պատերազմով յաղթել անոնց, որոշեց Հայաստանի բնակիչները գաղթել անոնց, որոշեց Հայաստանի երեւելիները իրեն կանչեց և ըսաւ . «Օսմանցիներուն հետ ձեր երկիրն մէջ պիտի պատերազմինք . երկու բանակներուն մէջ ալ աւազակ և գաղանամիտ մարդեր կան, որոնք հաւանաբար ձեր ընտանեաց ու կենաց վնաս հասցընեն . ուստի ժողովեցէք ամէնքնիկ ալ ձեր ինչքն ու ընտանիքը և քանի մը օրուան հեռու անդ գացէք, ու ընտանիքը և քանի մը օրուան հեռու » : Հայերը երբ պատերազմը լմննայ, կը դառնաք : Հայերը հասկցան Շահին միտքը, ամէն աղաչանք և միջոց դորձադրեցին բայց անօգուտ եղաւ : Պարսիկ զօրքերը շուտով աարածուեցան ամէն կողմ և բռնի բռնակիչները քչեցին հանցին, Աբարատեան դաշտը հաւաքեցին, դատարկեցին քաղաքներն ու գիւղե-

ուան կը դատապարտէին : Իւրաքանչիւր մելիք սւ-
նէր իր առանձին բերդն ու ամրոցները . ժողովուրդէն
տուրքը ինք կը հաւաքէր : Ղարաբաղը Պարսից իշ-
խանութեան տակ եղած ատեն եւս կը պահէր իր այս
կէս անկախութիւնը :

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ. — Շահ Աբասէն ետքը
Հայաստան քիչ մը ժամանակ (չուրջ 80 տարի) բա-
ւական հանդիսա մնաց : Հայերը սկսան իրենց աւե-
րակ երկիրը շէնցնել : Բայց ժէ. դարուն սկիզբնե-
րը Պարսկաստան նորէն տակն ու վրայ ըլլալով ,
Հայաստանի անդորրութիւնն ալ վրդովեցաւ : Աֆ-
ղանխտանի էմիրը Միր Մահմուտ Պարսից թագաւո-
րը գահէն զրկեց և ինք անցաւ անոր տեղը : Այդ
միջոցներուն կովկասի լեռնաբնակ ցեղերը, Լեզգի-
ներու առաջնորդութեամբ մտան Հայաստան եւ ըս-
կսան աւերել ու քանդել ամէն ինչ : Հայերը հա-
ւաքուեցան եւ Ուտեացոց Յովհաննես Իշխանին ա-
ռաջնորդութեամբ Լեզգիները վտարեցին : Սակայն
երկիրը սկսաւ խառնակուիլ :

ԴԱԻԻԹ ՊԵԿԻ ՀԵՐՈՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Հայ
մելիքները իրենց երկրին այս ցաւալի վիճակը
տեսնելով ուղեցին իրենց գլխուն ճարը նայել :
Այս նպատակով դիմեցին իրենց հայրենակից Դաւիթ
Պեկիին, սր Վրաստան կը գանուէր եւ մեծ անուն հա-
նած էր իբրեւ քաջ զօրապետ : Հրաւիրեցին Դաւիթը
որ իրենց գլուխը անյնելով ապստամբի ու երկիրը
մաքրեն այլազգիներէն : Դաւիթ պէկ եկաւ Վրաս-
տանէն խումբ մը քաջերու հետ : Ան յարձակեցաւ նախ
Վարա-Չորլու կոչուած թափառական թուրք ցեղին
խաչնարածներուն վրայ, որոնք իրենց ասպատա-
կութիւններով սարսափեցուցած էին այն կողմի բը-
նակիչները, ջարդեց և ցրուեց գանտնք : Դաւիթի
մօտ չուտով հաւաքուեցան 400ի չափ կարիճ Հայեր :

որոնց վրայ Դաւիթ սպարապետ կարգեց Միխրաբ ա-
նունով մէկը : Այս փոքրիկ բանակով ձիւանջիրնե-
րու ցեղին դէմ գնաց անոնք 16, 000 հոգիով Դաւիթի
վրայ կռուային : Երկու օր կռուելէ ետքը Հայերը
յաղթեցին, զրաւեցին թշնամիին գէնքերն ու ձիե-
րը (1722ին) : Այս յաղթութիւններուն վրայ, Դաւիթ
տեսաւ իր բանակին մեծնալը անսնց թիւը 2000ը
անցաւ : Ուրիշ խումբեր ալ կազմուեցան . Հայաց թի-



Դաւիթ Պեկի բերդը
ըը հասաւ 7000ի : Պարսիկ խաները, լսելով Դաւիթի
զորքերը, չուտով միաբանեցան ու անոր վրայ եկան,
բայց հայ քաջ զօրապետը յաղթեց անոնց : Գրեթէ ա-
մէն կռուի մէջ թշնամիները Հայերուն երեք չորս
անգամը շատ կ'ըլլային, բայց կը պարտուէին : Այս
պէսով կարճ միջոցի մը մէջ Սիւնեաց երկիրը մաք-
րուեցաւ թշնամիներէն :

ԴԱԻԻԹ ԻՇԽԱՆԱՅ ԻՇԽԱՆ. — Դաւիթի քաջ ըն-
կերները եղան հաւ Տե Աւետիք քահանան, Ստե-
փանոս Շահումեան Իշխանը և ուրիշ շատ քաջեր :

Դաւիթ ստիպուեցաւ կռուիլ նաև Օսմանցիներուն դէմ: Հանի Մուստաֆա Փաշայի առաջնորդութեամբ բանակ մը քալեց Դաւիթ պէկի վրայ: Հայերը վախնալով օսմանցիներէն ձգեցին Դաւիթը եւ վախան: Դաւիթի քով մնացին հազիւ 450 կարիճներ: Հալիճնորի բերդը, զոր դաւիթ կանգնած էր, պաշարուեցաւ, բայց հայ կարիճ զօրապետը ամէն ղիմաղորութիւն գործեց: Արդէն օսմանցի զինուորներն իրարու ետեւէ գետին կ'իջնային, երբ կռիւի տաք միջոցին, Միսիքար և Տէր Աւետիք դուրս ելան բերդէն քանի մը քաջերով և չիսթուլթիւն ձգեցին թշնամի բանակին մէջ: Հայերը դուրս նետուեցան և սկսան կռաորել: Օսմանցիք 148 դրօշ և մեծ աւար թողուցին: Մուստաֆա փաշա նոր զօրք առնելով կրկին եկաւ Դաւիթի վրայ: Բայց հանձարեղ զօրապետը չուտով հնարը գտաւ ազատուելու մատակ ձիերու երամակ մը թող տուաւ Օսմանցիներու բանակին մէջ: ձիերն սկսան կատրելով ամէն կողմ վազվզել: Այս չիսթուլթեան ժամանակ Դաւիթ յարձակեցաւ թշնամիին վրայ և փախցուց (1722ին): Պարսից թահմազ Շահը լսելով Դաւիթի քաջութիւնները ընծաներ զրկեց անոր և կոչեց Իշխանաց Իշխան ու կարգեց Սիւնեաց Տէր: Դաւիթ երկար չսպրեցաւ զժբախտաբար և մեռաւ 1728ին:

Մեծի Սր ԵՒ ՏԵՐ ԱԻՅՏԻՔ. — Իշխաններու և զօրքին հաւանութեամբ Դաւիթին սեղ զլուխ կարգուեցաւ Մխիթար, որ հազիւ տարի մը կրցաւ իշխել: որովհետև Օսմանցիք նորէն եկան պաշարեցին Հալիճնորի բերդը և առին զայն: Մխիթար փախուստ տուած, նոր զօրք ժողվեց և քանի մը քաղաքներ զբրաւեց: Բայց օր մը Խնձարեակ բերդին մէջ մէկ քանի Հայեր սպաննեցին զայն և զլուխը տարին թաւրիկի փաշային: Փաշան այսպիսի քաջ մարդու մը մահուան վրայ ցաւելով՝ դաւաճաններն սպաննեց փոխանակ

վարձատրելու (1729ին): Իսկ Տէր-Աւետիքը յուսահատելով իր ընտանիքն առաւ ու Երուսաղէմ դնաց, ապաշխարելու համար:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

ԺԸ՝ դարուն նշանաւոր կը հանդիսանայ Ղարապաղ իր մելիքներով, Պարսկաստանի խառնակ վիճակէն օգտուելով, Դաւիթ Պէկի առաջնորդութեամբ կ'ապստամբին անոնք: Դաւիթ մեծ անուն կը հանէ իր մղած կռիւներով Ղարաչորուններու, ձիւանշիրներու, պարսիկ խաներու և օսմանցի Մուստաֆա փաշայի դէմ: Պարսից Շահէն կը կոչուի Իշխանաց Իշխան, բայց շուտ կը վախճանի, Գժբախտ վախճան մը կուսնայ նաև Մխիթար:

ԺԹ. ԴԱՍ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ. — Հայերը, ուրիշ ազգերու պէս չատ կանուխէն գաղթած են, հեռացած են իրենց մայր հայրենիքէն դէպի օտար երկիրներ: Երբեմն իրենց ազատ կամ քովը, վաճառականութիւն, առեւտուր ընելու համար, հեռացած են Հայաստանէն. երբեմն ուրիշ պետութիւններ, բարբարոս իշխաններ զիրենք բռնի գերի վարած և զաղթեցուցած են ուրիշ վայրեր. և երբեմն ալ Հայերը իրենց երկրին մէջ միշտ սուր ու հուր տեսնելով, կեանքի և ինչքի ապահովութիւն չուսննալով, սկիւմայ թողուցած են իրենց զժբախտ հայրենիքը և զացած են ուրիշ տեղեր հանդիստ ու խաղաղ կեանք մը փնտռելու: Գլխաւոր զաղթականութիւններն ու անոնց վայրերը հետեւեալներն են:

Ա. ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻ ԳԱՂՈՒԹԸ. — Արշակունեաց թագաւորութեան ժամանակ և անոր անկումէն ետք Սասանեան թագաւորներ բազմաթիւ Հայեր քչեցին գաղթեցուցին Հայասանէն. Շապուհ, Յազկերտ և ուրիշ թագաւորներ բազմաթիւ Հայեր աարին Պարսկաստան: Ամէնէն ետքը ժէ. դարուն Շահ Աբաս ամբողջ Այրարատեան երկրի Հայերը բռնի Պարսկաստան տարաւ: Այսպէսով Կասպից ծովուն եզերքները և Սպահանի չուրջ հայ գաղթականութիւններ եղած են: Անոնց մեծամասնութիւնը կորսուած է և խոսնուած չըջակայ ցեղերուն հետ: Այս գաղթականներէն մէկ մասը ցրուած ու գաղթած է Հնդկաստան, մէկ մասն ալ զեռ գոյութիւն ունի Պարսկաստանի մըջ:

Բ. ԵԳԻՊՏՈՍԻ, ՊԱՂԵՍՏԻՆԻ ԳԱՂՈՒԹԸ. — Պարսիկներէն ետքը է. դարուն Արաբները աիբելով Հայաստանի, բազմաթիւ Հայեր գերի տարին զէպի Եգիպտոս, Արաբիա, Պաղեստին (Երուսաղէմ), Ասորիք և այլն: ԺԱ. դարուն Եգիպտոսի մէջ կային 30, 000 Հայեր: Մինչև այսօր Եգիպտոսի հայ գաղութը ն. անուոր է իր թիւով, մեծ անձնաւորութիւններով, զբարոյներով ու եկեղեցիներով:

Գ. ԲԻԻՉՍՆԻՆԻ ԳԱՂՈՒԹՆԵՐ. — Շատ կանուխէն Հայեր փախչելով Պարսիկներու և Արաբներու բռնութիւններէն անցած էին Բիւզանդիոսի երկիրները: Երբ կայսրեր աէր եղան Հայաստանի, բազմաթիւ Հայեր աարին Պալսոյ չըջակաները և Թրակիա (էաիրնէի չուրջ) բնակեցուցին, որպէսզի անոնցմով կարենան դիմադրել Եւրոպայէն յարձակող թշնամիներուն: Այդ գաղթական Հայերէն մէկը Դերջանցի Սամուէլ իշխանը Պուլկարներուն թագաւոր եղաւ: Հայերը կրցան չուսով դիրք բռնել իրենց զացած տեղերը, չնորհիւ իրենց խելացութեան և ճարպի-

կութեան: Երբ Պալիսը Թուրքերու ձեռքն ինկաւ, նոր գաղթականներ եկան Հայաստանէն և ուրիշ տեղերէ: Եւրոպական Թուրքիայի և Փոքր Ասիայի մէջ, մասնաւորապէս Պալիս, Իզմիր, Պրուսա, Իզմիթ, Ռոստոթօ և այլն, հետզհետէ բազմացան Հայեր եւ երկրորդ հայրենիք մը ձեւացուցին:

Ե. ԻՏԱԼԱՆՅՅ ԳԱՂՈՒԹՆԵՐ. — Հայերը կանուխէն յարաբերութեան մէջ էին Իտալիոյ վաճառաչահ քաղաքներուն հետ: Ռուբինեան իշխանութեան կործանումէն ետքը 30, 000 Հայեր նախ գացին հաստատուեցան Կիպրոս, Հոողոս և Կեստե կղզիները. անկէ անցան վեներիկ, ձեներվա, Հոով, Նաբոլի և ուրիշ քաղաքներ: Այդ Հայերը շատ հարստացան և հարստացուցին իրենց նոր երկիրը, բայց լատին կրօնականներէ հալածուելով կրօնափոխ եղան և հետզհետէ օտարանալով կորսուեցան:

Ե. ԽՐԻՄԻ ԳԱՂՈՒԹԸ. — Աժտերիտանի կողմերը, թաթարիտանի մէջ ալ հինէն իվեր Հայեր կային, անոնք բարձրաս իշխաններէ նեղուելով հաստատուեցան Խրիմի թերակղզիին վրայ, որ այն ատեն ձեռնովացիներու իշխանութեան տակ էր: Հետզհետէ ուրիշ տեղերէ ալ Հայեր գաղթեցին հոն ու բազմացան, այնպէս որ Թեոդոսիա քաղաքին մէջ 100, 000 Հայեր կային: Օսմանցիները 1475ին աօին զայն և սկըսան նեղել Հայերը, որոնք կամաց կամաց քաչուեցան դէպի Լեհաստան և Մոլտաւիա և ուրիշ տեղեր:

Զ. ՌՈՒՄՍՆԱՆՅՅ ԳԱՂՈՒԹԸ. — Մոլտաւիա և Վալաքիա այժմ Ռուսաստանի մեծ մասին հին անուաններն էին. հոն շատ կանուխէն հայ գաղութներ հաստատուած են: Անոնք եկած են մասամբ բուն Հայաստանէն, մասամբ Խրիմէն: Անոնք կորսնցուցած են իրենց մայրենի լեզուն: Սակայն հիմակ նորահաստատ գաղթականներուն չնորհիւ սկսած է ազգա-

յին արթնութիւն մը:

Է. ԹՐԱՆՍԻԼՎԱՆԻՈՅ ԳԱՂՈՒԹԸ. — 1671ին Օսմանցիները և Լեհացիները պատերազմի բռնուեցան, որով Մոլդաւիա սանակոխ եղաւ: Այնտեղի Հայերէն շատերը գացին Քրանսիլվանիա և հոն հաստատուեցան: Հոն շինեցին երկու նշանաւոր քաղաքներ. Հայաֆաղաֆ կամ Կերլա և Պաշպալով:



Հայաֆաղաֆ կամ Կերլա

Անոնք մեծամեծ արտօնութիւններ ձեռք բերին: Կերլայի մէջ սուէին դուռ Հայերէ բաղկացած ծերակոյտ մը իրենց կառավարիչն իրենք կ'ընարէին. իրենց դասերն իրենք կը տեսնէին: Առաջ ամբողջապէս հայ էին, բայց այժմ մեծամասնութիւնը օտարազգի է: Անոնք կրօնափոխ եղած և կորսնցուցած են իրենց լեզուն:

Ը. ԼԵՀԱՍՏԱՆԻ ԳԱՂՈՒԹԸ. — Հայերը երեք զբլխաւոր գաղթեր ունեցած են դէպի Լեհաստան կամ Բոլոնիա. 1) Բագրատունեաց թագաւորութեան անկումէն ետք, 2) Արփաւրանի արշաւանքի ժամանակ և 3) Խրիմը Օսմանցիներու ձեռք անցնելէն յետոյ: Ա-

նոնց թիւը մօտաւորապէս 200, 000 հոգիի հասաւ: Մեծ մասով կը բնակէին Լեւկերկ կամ Իլվով քաղաքը: Անոնք ալ Թրանսիլվանիոյ գաղութին նման մեծ արտօնութիւններ ձեռք բերին սեղացի իշխաններու կողմէ. սուէին ինքնավարութիւն մը Վոյք կոչուած. 12 հայ դատաւորներ հայ օրէնքներով կը վըձուէին ամէն տեսակ դատեր: Գիբրախտաբար այս հայ մեծ գաղութը բոլորովին քայքայուեցաւ ու կորսուեցաւ Նիկոլ Թորոսովիչ անուն հայ եպիսկոպոսի մը մեքենայութիւններուն և լատին կղերի հալածանքներուն պատճառով: Այսօր այն կողմերը 5000ի չափ Հայեր կան, բայց ոչ հայերէն գիտեն և ոչ ալ հայ եկեղեցին կը ճանչնան:

Թ. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԳԱՂՈՒԹԸ. — Պարսկաստանի Հայերը մասնաւորաբար Նոր Զուղայի բնակիչներէն շատերը գաղթեցին Հնդկաստան, անցնելով Աֆղանիստանէն կամ Պարսից ծոցէն: Անոնց գլխաւոր կեդրոնները եղան Կալկաթա, Մատրաս, Պոմպէ և ուրիշ քաղաքներ: Անոնք ձեռք անցուցին երկրին վաճառականութիւնը և շատ հարստացան: Անգլիացիները Հնդկաստանի տիրած ժամանակ Հայերը պատուաւոր միջնորդներ եղան: Հնդկահայերը շինած են եկեղեցիներ, ձեմարան և այլն: Վենետիկի Միլիթարեաններու Մուրատ Ռաֆայէլեան վարժարանը հիմնուած է հնդկահայ երկու վաճառականներու կտակած դրամագլուխներով:

Ժ. ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՒ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ. — Բացի Իտալիայէն, Հունգարիայէն, Ռումանիայէն ու Լեհաստանէն, եւրոպական ուրիշ երկիրներ ալ հետզհետէ ընդունած են հայ գաղութներ: Խրիմէն և ուրիշ վայրերէ դիմած են Մոսկուա, Քեթերսպուրկ, Քիեվ և ուրիշ ռուսական քաղաքներ, որով հիմը դրած են Ռուսահայ գաղթականութեան: Վաճա-

Անոնց մէջ ամէնէն նշանաւոր դպրոցները երկու հատ էին. Լազարեան ձեմարանը Մոսկուայի մէջ, Ներսէսեան դպրոցը՝ Թիֆլիսի մէջ: Լազարեան նշանաւոր ընտանիքը Պարսկաստանի Նոր Զուղայէն գաղթած էին: Անոնց նահապետներէն մէկը՝ Լազար՝ Մոսկուայի մօտերը հիմնած էր մեծաքսի գործարան մը ու մեծ անուն վաստկած էր: Անոր որդիներէն մէկը Յովակիմ Լազարեան հիմնած է ձեմարանը 1818ին, կրթուած՝ զարգացած ուսանողներ, եկեղեցականներ ու քաղաքացիներ հասցնելու նպատակով: Իսկ ներսէսեան դպրոցը հիմնուած է Ներսէս Ե. Աշտարակեցի եպիսկոպոսին ջանքերով ու ուսանայ ժողովրդի նուիրատուութիւններով: Այս վարժարանէն ելած են բազմաթիւ ուսուցիչներ, գիտուններ, եկեղեցականներ, և այլն:



Ի Ա Պ Ա Ս

ԹՈՒՐՔԱՆԱՅԵՐԸ, ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐ

ՊՈՒՍՈՅ ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ. — Օսմանցիներու Ֆարիհ Սուլթան Մեհեմետ թագաւորը Կ. Պոլիսը գրաւելէն ետքը, կ'ուզէր Հայաստանի մէջ գտնուած օտար իշխաններու ևս տիրել, այդ պատճառով Հայերուն բարեկամ եղաւ և իր խորհուրդը յայտնեց Պրուսայի Յովակիմ եպիսկոպոսին, որ աջակցեցաւ անոր խորհուրդն իրագործելու համար և Հայաստանի բոլոր առաջնորդներուն դրեր գրեց: Յաթիհ իր խոստումը գործադրեց. Յովակիմ եպիսկոպոսը Համայն Թուրքիոյ Հայոց Պատրիարք անուանեց, անոր աթոռը

Պոլիս հաստատեց, Յունաց պատրիարքին նման իրաւունք և արտօնութիւն տալով: Յովակիմ բացարձակ իշխանութեամբ ազգը կառավարեց: Անկէ ետքը ուրիշ պատրիարքներ նստեցան հեռոջեմէ և Պոլիսը Հայոց ազգային կեանքի կեդրոններէն մէկը դարձաւ: Պոլիսի Հայերուն թիւը չատցաւ: Մանաւանդ երբ Օսմանցիները իրիմի Կաֆա քաղաքը 1475ին գրաւեցին, բազմաթիւ Հայեր փոխադրուեցան Պոլիս: Ժէ. դարուն վերջերը Պոլսոյ Հայոց թիւը բարձրացաւ շուրջ 100,000ի:

ՉԷԼԷՊԻ, ԱՄԻՐԱ ԵՒ ՄԻԻԹԷՎԷԼԼԻ. — Թուրքիոյ Հայոց պատրիարքները մինչև ժ. Պարուն կէսերը բոլոր ազգին գործերը կը տնօրինէին քահանայները բոլոր ազգի նպատակով: Ամէնէն ժողովուրդը կը կոչուէին Ամիրա, Չեթեամբ: Այդ մեծամեծները կը կոչուէին Ամիրա, Չեթեամբ ևն.: Ամիրաները հարուստ սեղանաւորներ էին (սարաֆ): Ամբողջ քաղաքի մը կամ նահանգի մը տուրքերը կ'ապալով կ'առնէին իրենց վրայ: Անոնց ամէնէն ազդեցիկները կը կոչուէին Չեթեամբ: Հայոց եկեղեցիներուն հոգը յանձնուած էր մէյ մէկ ամիրայի, որոնք կը կոչուէին Միլիթիլի:

ԱՄԻՐԱՅԱԿԱՆ ՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՎԷՃԵՐ. — Ամիրաները բարձրաստիճան փաշաներու պաշտպանութիւնը վայելելով, իրենց կամքին համեմատ կը կառավարէին ազգին գործերը: Ամէնէն ազդեցիկ փաշային ամիրան կրնար իր խօսքը քակեցնել: Բայց երբ ամիրայի պաշտպանը եղող փաշան իր պաշտօնէն իյնար, այն ժամանակ ամիրային ոյժն ալ կ'իյնար և ուրիշ ամիրաներ կը զօրանային: Այսպէս ամիրաները իրենց կամքը կատարելու համար իրարու դէմ վէճեր կը հանէին, պատրիարքներ կը հրաժարեցնէին, կը նստեցնէին: Սովորութիւն էր որ պատրիարքները իրենց պաշտօնին վրայ հաստատուած ժամանակ

առւրք մը կուտային կառավարութեան: Այս բանէն օղբաւ քաղելով շատ մը փառամուլ եկեղեցականներ իրարու ձեռքէ կը յափշտակէին պատրիարքական գահը, միշտ աւելի վճարելով: Եւ երբ գահը կը բարձրանային, կը ջանային ժողովուրդը կեղեքել և



Պեգնեան Յարութիւն Ամիրա

ձանք առւրքեր գանձել: Ամիրաներու հետ կը միանային ուրիշ ամիրաներու հետ և պատճառ կ'ըլլային ստեղծելի վէճերու, աքոսիքի և մահուան: Բայց գրեթէ նաեւեցան նաև բարեպաշտ ու ազգասէր ամիրաներ ու պատրիարքներ, որոնք ամէն կերպով կըրցան օգտաներ ըլլալ իրենց ժողովուրդին, շինեցին եկեղեցիներ, դպրոցներ և այլն, ու հայրաբար խնամեցին իրենց հօտը: Այդպիսի ամիրաներէն մէկն էր Պեգնեան Յարութիւն Ամիրա, իսկ պատրիարքներէն մէկը Կոլոտ Յովնանէս Պատրիարք:

Ա Մ Փ Ո Ւ Փ Ի Ո Մ

Պոլսոյ առաջին պատրիարքը կ'ըլլայ Պրուսայի Յովակիմ եպիսկոպոսը: Պոլիսը շուտով կ'ըլլայ թուրքիոյ Հայութեան բարոյական կեդրոնը: Պոլիսի հայ հարուստները կը կոչուէին Ամիրա, Չէլէպի, Միւթէվէլի, Սարաֆ եւն: Անոնք ներքին վէճերով կը խռովեն ազգը եւ իրենց կամքը կ'ուզեն քալեցնել: Պատրիարքները կը խառնուին վէճերուն: Լաւ ամիրաներ ու պատրիարքներ ալ եղած են:

Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ

Հ Ա Յ Հ Ո Ւ Մ Է Ա Կ Ա Ն Ն Ե Ր

ՌԻՆԻԹՈՒՆՆԵՐ. — Յովնանէս ԻԲ. պապը 1316 թուականին երկու առաքելութիւն ղրկեց արևելք, քրիստոնէութիւն տարածելու համար: Հայաստանի և Պարսկաստանի մէջ քարոզելու պաշտօնը յանձնեց Գոմինիկեան միաբաններուն: Ասոնք եկան և սկսան իրենց դաւանութիւնը քարոզել: Ահա այդ միաբաններու քարոզութիւնները եղան պատճառ, որ թէ կիրակիայի և թէ բուն Հայաստանի մէջ անվերջ վէճեր ծագեցան: Այդ կրօնականներէն մէկուն միջոցաւ մէկ քանի Հայեր կաթողիկ եղան, մանաւանդ Յովնանէս Քոնստանտնուսը: Նա և ուրիշ մէկ երկու հայ եկեղեցականներ հետեւեցան անոր, կարծելով թէ հայ եկեղեցին բաժնուած է ճշմարիտ եկեղեցիէն, երբում ըրին հայ և կաթողիկ եկեղեցիները միացնել: Այդ պատճառով կոչուեցան Միաբար կամ Ունբոս: Ասոնք պատճառ եղան ստեղծելի վէճերու և մինչև իսկ Ռուբինեան իշխանութեան անկումը փու-

Մխիթար ստիպուեցաւ Հոսոմ երթալ ինքզինքն արդարացնելու համար և յաջողեցաւ: Բայց իր թըշնամ ինները անոսր մահէն ետքն ալ չարուհակեցին հալածել Մխիթարեանները: Մխիթարի մահէն ետքը միաբանութեան մէջ երկպառակութիւն ինկաւ ու կրօնաւորներու մէկ մասը 1773ին բաժնուեցաւ և հաստատուեցաւ Թրիեսոս քաղաքին մէջ, անկէ 1811ին վիեննա, ուր գոյութիւն ունին մինչև այսօր: Թէ վիեննաիկի և թէ վիեննայի միաբանութիւնները մինչև այսօր օգտակար կ'ըլլան մեր ազգի լուսաւորութեան համար:

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐ

ԲՈՂՈՔԱԿԱՆ ՄԻՍԻՈՆԱՐՆԵՐ. — Ժ. Բ. դարուն Անգլիայի և Ամերիկայի մէջ կային մէկ քանի քրիստոնէական ընկերութիւններ, որոնց նպատակն էր քրիստոնէութիւնը տարածել աշխարհի ամէն կողմը: Այդ ընկերութիւններէն մէկն էր Պուտը, որուն քարոզիչները եկան նաև Տաճկաստան. նախ քարոզեցին Երուսաղէմի, Պէյրութի և Զմիւռնիայի մէջ. ապա 1830ին հաստատուեցան նաև Պալտոյ թաղերուն սիւսի և Հայաստան: Առաջին անգամ Պալտոյ թաղերուն մէջ սկսան քարոզել հայ ազգատ դասին. անոնց օգնելով և ազգները ձրի կրթելով: Մեծերուն համար բացին նաև կիրակնօրեայ դպրոցներ: Հայերը սիրով ընդունեցին զանոնք, բայց քիչ ետքը սկսաւ կրօնական երկպառակութիւնը և հալածանքը: Միսիոնարները աշխարհաբար թարգմանցին ու սովեցին Աւետարանը, ապա Աստուածաշունչը, հրատարակեցին աշխարհաբար լրագիր և ուրիշ հոգևոր դիրքեր:

ՀԱՆՍՏԱՆՔԸ. — Երբ բողոքական քարոզիչներուն

հետևողները շատցան և սկսան վիճաբանութիւնները և կռիւները Յակոբոս պատրիարքը 1839ին արտուրել տուաւ շատ բողոքականներ ու միսիոնարներու բարեկամներ: Հալածանքը շարունակուեցաւ նաև յաջորդ պատրիարքներու օրով: Մատթոս պատրիարք ամէն սեռակ խստութիւններու դիմեց, բանադաշք ամէն սեռակ խստութիւններու դիմեց, բանադաշք ամէն սեռակ խստութիւններու դիմեց, բանադաշք ամէն սեռակ խստութիւններու դիմեց: Սակայն բողոքականներուն պաշտպան հանդիսացաւ Անգլիոյ դեսպանը:

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ. — Այս հալածանքները պատճառ եղան որ հայ բողոքականները բաժնուին հայ եկեղեցիէն: Անոնց բաղձանքը իրականացնելու աշխատողը եղաւ Անգլիոյ դեսպանը. 1850ին օսմ. կոտալարութիւնը հրամայեց որ հայ բողոքականներն Ազգապետ մ'ընտրեն: Այդ Ազգապետն եղաւ Ստեփան աղա Սերոբեան, որ բողոքականութիւնն ընդունած էր և Յակոբոս պատրարքի եղբայրն էր: Այսպէս բողոքականներն ալ անկախ համայնք մ'եղան:

Ուրախալի է որ այժմ դադրած են հին կրօնական եղբայրատուան վէճերը: Հայ կաթողիկն ու Հայ Բողոքականն ալ կատարեալ հայ են, թէև դաւանութեամբ տարբեր են:

ԻՐ. ԴԱՍ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԿՐԹԱԿԱՆ ՎԱՌԱՐԱՆՆԵՐ, ԵՒՐՈՊԱ. — 1839էն ետքը հայ ժողովուրդին առջև նոր ասպարէզներ բաց-

ուած էին: Հայերուն ամէնէն աւելի օգտակար եղան
կրթական հաստատութիւնները: Հայ տղաքները սկը-
սան զպրոց յաճախել. Սկիւտարի ձեմարանէն, Մու-
րատ Ռաֆայէլեան վարժարանէն և ուրիշ հայ զպրոց-
ներէ: Ելած աշակերտներուն թիւը հետզհետէ կը բազ-



Նիկողոս Պալեան

մանար: Ատոնց վրայ կ'աւելնային նաև օսմ. կառա-
վարութեան բացած զպրոցներու հայ աշակերտները:
Ատոնցմէ դուրս հայ պատանիներ սկսան յաճախել
Եւրոպայի բարձր դպրոցներէ. 1840—1848 բազմա-
թիւ աշակերտներ գացին Ֆրանսա, Իտալիա և Անգ-
լիա, ուր նոր բաներ տեսան և սորվեցան: Զարգա-
ցան և ուղեցին իրենց ազգն ալ զարգացնել:
ԱՌՍՁԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ. — Եւրո-

պայէն դարձող երիտասարդները մեծ գաղափար մը
ուէնէին. անոնք կը փափաքէին ազգը լուսաւորել և
րեք միջոցներով. ա) դպրոցները բարեկարգելով, բ) աշ-
խարհաբար տարածելով գրքաբարին տեղ և գ) սան-
վանադրուքիւն հաստատելով: Բայց իրենց այս նպա-
տակին հասնելու համար տեսաքին դժուարութեան կը
հանդիպէին. ամիրաները և տղէտ եկեղեցականները



Գրիգոր Օտեան

հակառակորդ էին իրենց: Ատոնց պատրիարքին ար-
տօնութեան զիրք չէին կրնար հրատարակել. նոյն
պէս բոլոր զպրոցներուն հոգը պատրիարքին ձեռքն
էր: Սակայն երիտասարդները իրենց հմտութեան և
զարգացման համար կրցան իրաւունք մը ձեռք ձգել:
1853ին Գերազոյն ժողովը ընտրեց ուսումնական
խորհուրդ մը, 14 անդամներէ բաղկացած և անոր յան-

ձնեց հայ դպրոցներուն վրայ հսկելու հոգը: Այդ Ուսումնական Խորհուրդին անդամներէն էին Նիկողոս Պալեան, Նահապետ Ռուսիկեան, Գրիգոր Օտեան, Սերոբէ վիչեան (Մերվիչէն), Կարապետ Իւրիկեան ևն: Ա.ՁԳ. ՍՍ. ՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ. — Այս երիտասարդները սկսան իրենց նպատակն իրականացնել, բայց լուրջ ընդդիմութեան բախեցան: Երիտասարդները չյուսահատեցան բնաւ: Անոնց մէջէն Տաքթ. Մերվիչէն, Տաքթ. Ռուսիկեան, Նիկողոս Պալեան և Գրիգոր Օտեան անպաշտօն կերպով սկսան խմբադրել Ազգային սահմանադրութեան ուրուագիծ մը: Այդ Ուրուագիծը կրկին կրկին յանձնախումբերու միջոցաւ քննընդունեցաւ և ներկայացուցեցաւ Ընդհանուր Ժողովին, որ 1860 Մայիս 24ին ընդունեց զայն ու ներկայացուց օսմ. կառավարութեան վաւերացնելու համար: Կառավարութիւնը անմիջապէս չվաւերացուց և կարելւորութիւն չտուաւ Հայոց ղիմումներուն. այն ատեն 1862 Օգոստոս 1ին հայ երիտասարդներ խումբով զայցին Պատրիարքարան ցոյց մը կատարելու, պատրիարքը դուրս հանեցին և Պատրիարքարանը զոցեցին: Թուրք ոստիկանապետը 300 զօրքով եկաւ բացաւ Պատրիարքարանը 50 զինուոր ձգեց: Ասկէ քանի մը ամիս ետքը Բ. Դուռ վաւերացուց Ա.ՁԳ. ՍՍ. ՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ 1863 Մարտ 7ին:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ջարթումի շրջան մը կ'սկսի 1840: սկան թուականին. եւրոպական ու պետական դպրոցներու մէջ հայ աշակերտներ կ'ուսանին, նոր գաղափարներ կ'ամբարնին, Անոնք կը բողոքան վերակենդանացնել Ազգը, եւրոպա սնած երիտասարդները մեծ նպատակ մ'ունէին. անոնք նախ ձեռք կը բերեն (1853ին) Ուսումնական Խորհուրդին անդամութիւնը և կ'սկսին գործի: Անոնք նախ առանձին, յետոյ պաշտօնապէս կը մշակեն կանոնագիր մը, որ յետոյ 1860ին վաւերացուելով կ'ըլլայ Ազգային


Սահմանադրութիւնը, որուն պետական վաւերացումն ալ վերջապէս կը կատարուի 1863ին:



Ի Գ. Դ Ա Ս

ՋԵԹՈՒՆԻ ՇԵՐՈՍԱԿԱՆ ԿՈՒԻՆԵՐԸ

Ջեթոնի Դիրֆն Ու ԲՆԱԿԻՉՆԵՐԸ. — Ջեթունի կիլիկիոյ ամէնէն ամուր, լեռնոտ և անառիկ քաղաքներէն մէկն էր: Իր չուրջը կային տասնի չափ մանր դիրդեր, ուր կը բնակէին Հայեր: Ջեթունի մօտ



Ջեթուն

նայնպէս անառիկ դիրքով հայկական քաղաք մըն էր Հանքն: Հին դարերէ իվերայս սեղերու Հայերը կ'ապրէին կէս անկախ կերպով: Առաջին անգամ Հայերը հոն գաղթած էին Եղեւսիայէն, Անիէն և ուրիշ տեղերէ: Ջեթունցիները քաջ և կորովի մարդեր էին:

Անոնք կը կառավարուէին չորս իշխաններով, որոնք իրենց հրամանին առկա ունէին օգնականներ կամ քեհեաներ: Զեթունցիները յաճախ պատերազմներ ունեցած են չրջակայ թիւրքմէն ցեղերուն հետ և միշտ յաղթելով սարսափ ձգած են անոնց մէջ: Օսմանեան տէրութիւնը ճանչնալով Զեթունցիներու քաջութիւնը և չկրնալով նուաճել գանոնք, մասնաւոր հրամանով մը ազատ կացուցած էր զինուորական տուրքէ և միայն 15000 դահեկան տարեկան տուրք մը որոշած էր:

ՆՈՒԱՃՈՒՄԻ ՓՈՐՁԵՐ. — Օսմանեան կառավարութիւնը 1780էն սկսեալ Զեթունցիները նուաճելու փորձեր ըրաւ: Շատ անգամ միջամուխ կ'ըլլար անոնց ներքին գործերուն, թիւրքմէն ցեղերուն կ'օգնէր Հայերուն դէմ, բայց դրեթէ միշտ Զեթունցիները կը յաղթէին և 15000էն գատ ուրիշ տուրք էին ուզէր ճանչնալ: Փամանակ անցնելէ ետքը Զեթունցիք ստիպուեցան տարեկան տոսրք վճարել 24 հազար դահեկան: Սակայն կառավարութիւնը միշտ կ'ուզէր աւելցնել այդ գումարը և Զեթունք պաշտօնեաներ զնել Զեթունի մէջ: Այդ պատճառով կռիւններ պակաս չէին: Խրիմի պատերազմէն ետքը երբ Ռուսաստանէն բազմաթիւ մահմետականներ թուրքիա կը գաղթէին, Մարաշի փաշան ուզեց այդ գաղթականներէն մէկ մասը բնակեցնել Զեթունի մէջ: Զեթունցիք այս անգամ ալ ընդդիմացան դէնքով և կուսակալը ետ կեցաւ իր ղեղաւորութիւնէն:

Զեթունի Ա. Մեծ ՊԱՏԵՐԱԶՄԸ. — Զեթունի գիւղերէն մէկուն և մօտի թուրք գիւղի բնակիչներուն միջև 1862ին վէճ մը ծագեցաւ: Ասկէ օգուտ քաղելով Մարաշի փաշան 40,000 անկանոն զօրքով յարձակեցաւ Զեթունցիներուն վրայ: Շատերն սպաննեց, Ալապաշ գիւղը քանդեց Ս. Փրկիչ վանքը կողոպ-

տեց և աւերեց, Յուլիս 28ին: Այս կոտորածին լուրը Պուլիս հասաւ Օգոստոս 1ին, Պատրիարքարանի գոցուած օրը: Այդը տեսնելով որ կառավարութիւնը իբրև ապստամբ կը վարուի Զեթունցիներուն հետ, Փարիզի Դաշնադրութիւնը ստորագրող վեց պետութիւններուն, մասնաւորաբար Ֆրանսայի Նաբոլէոն Գ. կայսեր ղիմեց: Միևս կողմէ Զեթունցիք Օգոստոս 2ին պատերազմ հրատարակեցին. թշնամ ինքրէն հազարաւորներ ինկան և մնացեալները սկսան խուճապի մասնուել: Այս յաղթութենէն ետքը և Նաբոլէոնի միջնորդութեամբ հաշտութիւն գոյացաւ Զեթունի և թուրք կառավարութեան միջև. տարեկան տուրքը որոշուեցաւ 25,000 դահեկան, ընդհանուր ներում հրատարակուեցաւ և առաջին անգամ թուրք գալովազամ մը դրուեցաւ Զեթունի մէջ, իսկ ներքին վարչութիւնը թողուեցաւ Զեթունցիներուն:

Զեթունի ԱՊՍՍԱՄԻՈՒԹԻՒՆԸ. — Զեթունի գոյմագամները և Մարաշի կուսակալները կամաց կամաց կ'աշխատէին Զեթունը ընկճել: Օսմ. կառավարութիւնը 1879ին Զեթունի մէջ կանգեց զօրանոց մը ու բազմաթիւ զօրքեր սկսաւ պահել: Սուլթան Համիա որովհետև կ'ուզէր բոլոր Հայերը ջնջել կամ սկարացնել, ուզեց Զեթունը ևս խոնարհեցնել: Զեթունի Հայերը չկրնալով տակալ Սուլթանի ճնշումներուն, լսելով նաև Հայերու ջարդը ապստամբեցան: Համիա Զեթունի վրայ զրկեց Բեմզի փաշան 110,000 զօրքով և հրամայեց բնաջնջել: Զեթունցիք յաղթեցին. զօրաբաժանց բնաջնջել: Զեթունցիք յաղթեցին. զօրանոցը գրաւելով 600 զօրք զերի բռնեցին և գրաւեցին 2 թեղանոթ: Բէմզի փաշայի սեղ զրկուեցաւ էսմեմ փաշա, որ նոյնպէս պարտուեցաւ: Պատերազմը տևեց 45 օր: Թուրքերէ մեռան 25,000 հոգի, իսկ Հայերէն 71 հոգի: հայ կուսողներու թիւը 6000 էր: Սուլթանի կողմէ յատուկ յանձնախումբ մը զրկուեցաւ Զեթուն:

իրողութիւնը քննելու համար: Այդ յանձնախումբի անդամ էր Յ. Նուրեան:

Զեթունցիներու քաջութեան համարու մինչև եւրոպա հասաւ ու վեց պետութիւններու հիւպատոսներու միջնորդութեամբ հաշտութիւն զոյացաւ, 1896 Յունվար 16ին: Այդ հաշտութեան համեմատ Զեթունցիներու կառավարիչը պիտի ըլլար քրիստոնեայ, ոստիկանութիւնը, պաշտօնները եւայլն Զեթունցիներէն: Այս վերջին պատերազմին մասնակցեցան Հնչակեան մէկ երկու հոգիներ:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Զեթուն կրիկիոյ ամուր քաղաքներէն մէկն էր, քաջ ընտանիքներով. որ ճինէն իվեր կը կառավարուէին 4 հայ իշխաններով. Օսմ. կառավանութիւնը սկիզբները ծանցած էր անոր կէս անկախութիւնը, բայց յետոյ ջանացած էր ընկճել. 1780էն սկսեալ նուաճումի փորձեր եղած են. ամէնէն կարհւորներն եղած են Ազիզ փաշայի կռիւները 1862ին, Ռէմզի եւ Էտհէմ փաշաներու արշաւանքները 1895ին: Ազիզ փաշա չէ կրցած 40,000 զինուորներով ընկճել Զեթունը. իսկ վերջին փաշաները չեն կրցած 110,000 զօրքերով խորտակել հպարտ ու քաջ Զեթունցիները:



Ի Գ. Դ Ա Ս

Հ Ա Յ Վ Ա Կ Ա Ն Խ Ն Դ Ի Ր Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Հայաստանի Հայերուն վիճակը շատ դառն էր: Թուրք ե քիւրա ատէրէյէյիները կը հարստահարէին զանոնք. Թուրք պաշտօնեաները անարդարութեամբ կը վարուէին Հայոց հետ: Այս պատճառով դաղթականու-

թիւնները պակաս չէին ըլլար: Խրիմեան Հայրիկի օրով 1870ին և 1872ին, Ազգ. Ժողովը առաջին անգամ ըլլալով, նկատի առաւ Հայաստանի հարստահարութիւններու խնդիրը և մասնաւոր յիշատակագիր ներկայացուեցաւ Բ. Դրան, այդ հարստահարութիւններուն առաջին առնելու համար: Բ. Դուռը խստացաւ քննիչներ զրկել և Հայերուն պահանջները տեղին վրայ քննելով՝ զոճացում տալ անոնց: Բայց գրեթէ արուած խոստումը խոստում մնաց միայն:

ՌՈՒՍՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ. — Այդ միջոցներուն, 1875ին, Հեռուկ-Պոսնայի բնակիչները ապրտամբեցան: Քիչ ետքը ապստամբեցան նաև Պուլկարները: Թուրք կառավարութիւնը, Պուլկարները զսպելու համար, սկսաւ կոտորել, ջարդել զանոնք: 1856ի Բարիդի Դաշնագրութիւնն ստորագրող 6 Տէրութիւնները ստիպուեցան բողոքել: Ապա վրայ հասան, Սերպիոյ, Գալատաղի պատերազմները Թուրքիան շէտ: Հայերը այս ապստամբութիւններուն և կռիւներու ժամանակ երբեք չչարժեցան, յուսալով որ օսմ. ատէրութիւնը ու եւրոպական ատէրութիւնները իրենց վիճակը ուշադրութեան պիտի առնեն: Սակայն խաբուեցան: 1877ին Պոլսոյ մէջ դեսպանախորհուրդ մը գումարուեցաւ: Դեսպանախորհուրդը պաշտօն ունէր եւրոպական Թուրքիոյ ապստամբ զաւառները բարեկարգելու համար ծրագիր մշակելու: Այդ միջոցներուն Հայոց Պատրիարքն էր Ներսէս վարժապետեան, որ ջանաց Հայաստանի խընդիրն ալ Դեսպանախորհուրդին մէջ մտցնել, բայց միշտ պատասխան կ'ընդունէր թէ՛ « Հայկական խընդիր չի կայ »: Երբ Սուլթան Համիտ չընդունեց այդ Դեսպանախորհուրդին մշակած ծրագիրը, 1877 ապրիլ 15 ին Ռուսիա պատերազմ հրատարակեց: Ռուս բանակը մէկ կողմէն մինչև Էրզրում հասաւ, միւս

կողմէն եկաւ յինչև Պալիս, Այսբեֆանոս :
ԱՅՍԹԵՖԱՆՈՅԻ ԴԱՇՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ. — Հայերը
տեսներով որ Օսմ. կառավարութենէն յոյս չկայ՝



Ներսէս պատրիարք վարժապետեան
զիմումներ կատարեցին Ռուսաց կայսեր և բանակին
հրամանատար Նիկոլա Մեծ Դուքսին, և խնդրեցին
որ Հայաստանի բարեկարգութիւնը ապահովուի : Երբ
Թուրքերը յաղթուելով սաիպուեցան հաշտուիլ, ըն-

դունեցին Ռուսիոյ պայմանները և կնքեցին Այսբե-
ֆանոյի Դաշնադրութիւնը : Ներսէս վարժապետեանի
հորէն Նարայէ կպիսկոպոսին և սուրիչներու ջանքե-
րու շնորհիւ Այսթէֆանոյի Դաշնադրութեան 16րդ
յոդուածը գրուեցաւ Հայոց համար : Այդ յոդուածը
կ'ըսէ .

«Նկատելով որ Ռուսական զօրաց Հայաստանի մէջ գը-
րաւած բայց Թուրքիոյ վերադարձնելիք տեղերէն մեկնիլը
կրնայ կռիւներու եւ նրկու տէրութեանց բարեկամական յա-
րաքերութիւններուն վնասել, Բ. դուռը պարտաւորութիւն
յանձն կ'առնէ Հայոց բնակած գաւառներուն մէջ տեղական
պէտքերուն պահանջաց բարւորումները առանց այլեւս յա-
պաղելու գործադրել եւ Գիւրտներուն ու Չերքեզներուն դէմ
անոնց ապահովութիւնը երաշխաւորել :»

ԿԻՊՐՈՍԻ ԴԱՇՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ (1818 Յունիս 4)
. — Անգլիա Հնդկաստանի տէր ըլլալով չէր ուզեր
որ Ռուսիա Հնդկաստանի մօտենայ՝ Թուրքիան գը-
րաւելով : Այդ պատճառով ուզեց Թուրքիան պաշա-
պանել Ռուսիոյ դէմ : Եւ որովհետեւ Այսթէֆանոյի
Դաշնադրութեամբ Թուրքիան չատ պգտիկցած էր
Անգլիա ուզեց Թուրքիան ազատել այդ ինկած վի-
ճակէն : Նախ Առւթան Համիտի հետ զաղտնի դա-
շինք մը կնքեց, սրաւ զօրութիւնով Անգլիա կիպրոս
կղզին զրաւեց և փոխադարձաբար խոստացաւ փոքր
Ասիոյ պաշտպանութիւնը իր վրայ առնել Ռուսիոյ
դէմ, պայմանաւ որ Թուրքիա իր երկիրը բարեկար-
գէ : Այս դաշինքը կոչուեցաւ Կիպրոսի Դաշնադրու-
թիւն : Ասկէ զատ Անգլիա պահանջեց Պերլինի մէջ
զումարել վեհաժողով մը, Այսթէֆանոյի դաշնադ-
րութիւնը քննելու համար :

ՅԻՐԴ ՅՕԴՈՒԱԾԸ . — Պերլինի վեհաժողովին
մէջ Հայոց դատը պաշտպանելու համար Ներսէս վար-
ժապետեան՝ Ազգին հաւանութեամբ՝ իբրև պատուի-
րակ զրկեց հորէն Նարայէ կպիսկոպոսը՝ Ռուսիա, իսկ
հերիմեան Հայրիկը՝ Եւրոպա : Հայրիկին կ'ընկերա-

նար նաև Մինաս Չերազ երիտասարդը իբրև թարգման : Յետոյ ղրկուեցաւ նաև Ստեփան Փափազեան ազգային երեսփոխանը : Առոնք ամէնքը միացան Պերլինի մէջ, ուր վեհաժողովին ներկայացուցին ծրագիր մը, որուն համեմատ Հայաստան Սուլթանին դերիշխանութեան տակ առանձին կառավարելով մը և ժողովներով պիտի կառավարուէր : Հայոց այս ծրագիրը չընդունուեցաւ : Օսմ. լիազօր պատուիրակները մերժեցին Հայերու խնդիրը և ըսին թէ «եթէ Հայաստանի ինքնօրինութիւն արուի, Հայերը Ռուսաց քաղաքականութեան կը հակին» : Ուստի Անգլիոյ լիազօրը սյժ առաւ Օսմ. լիազօրներուն և Այբստէֆանայի 16րդ յօդուածին տեղ Պերլինի դաշնագրութեան 61րդ յօդուածը գրուեցաւ : Այդ յօդուածը կ'ըսէ.

«Բ. Դուռը յանձն կ'առնէ անյապաղ իրականացնել այն բարեփոխումներն ու բարենորոգումները զորս տեղական պետքերը կը պահանջեն Հայոց բնակած նահանգներուն մէջ և երաշխաւորել անոնց ապահովութիւնը Գիւրտերուն եւ Չերքէզներուն դէմ : Բ. Դուռը այս նպատակին համար ձեռք առնուած միջոցները պարբերաբար պիտի հաղորդէ Տէրութեանց, որ պիտի հսկեն անոնց վրայ : »

61րդ յօդուածը Հայոց օգուտ մը չուներցաւ. ընդհակառակը հարստահարութիւնները սկսան աւելի բազմապատկուելի : Միայն սա եղաւ որ Հայոց դատը Ռուսիոյ ձեռքէն առնուելով Եւրոպայի վեց Տէրութիւններուն բարեկամեցողութեան յանձնուեցաւ :

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ազգ. Սահմանադրութիւնը կը վաւերացուի 1861 հոկտ. 15ին եւ առաջին սահմանադրական պատրիարքը կ'ըլլայ Պօղոս Եպիսկ. Թագթագեան : Սահմանադրութիւնը ունէր իր լաւ եւ թերի կողմերը : Խրիմեան Հայրիկ գործունեայ պատրիարք մը կ'ըլլայ : Անոր Հայաստանի հարստահարութեան խնդիրը Ազգային ժողովին առջեւ կ'հղին : Բ. Դուռը կր խոս-

տանայ, բայց չգործադրեր : Այդ միջոցներուն կը ծագին Հէրսէկ Պոսնայի եւ Պուլկարիոյ ապստամբութիւնները : Պուլկարներու ջարդը, Սերպիոյ եւ Գարատաղի պատերազմները, ամէնէն ետքը ռուսթրքական պատերազմը : Հայերը նախ չէզոք կը մնան, բայց կը տուժեն : Ապա կը ղրկեն Ռուսիոյ, որ Սան Ստեֆանոյի դաշնադրութեան 16րդ յօդուածը խմբագրել կուտայ : Անգլիա կը հակառակի Ռուսիոյ, նախ թուրքիոյ հետ կը կնքէ Կիպրոսի դաշինքը, ապա Պերլինի վեհաժողովին մէջ պատճառ կ'ըլլայ որ 16րդ յօդուածին տեղ 61րդ յօդուածը խմբագրուի Հայոց համար :



Ի Ե . Դ Ա Ս

ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆ ԵՒ ՍԱՍՈՒՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ԴԱԻՍՃԱՆՈՒԹԻՒՆ. — Պերլինի վեհաժողովէն ետք Ռուսիա Փոխեց իր քաղաքականութիւնը : Անգլիոյ հակառակ ըլլալով, սկսաւ հակառակել Անգլիոյ բոլոր փափաքներուն : Կիպրոսի դաշնադրութեամբ Անգլիա կը փափաքէր բարեկարգութիւններ մտցնել Հայաստանի մէջ, բայց Ռուսիա սկսաւ ընդգրկմանալ և զրգռել Սուլթան Համիտը որ իր ուզած կերպովը շարժի Հայերուն հետ : Սուլթանը այս տեսնելով որոշեց Հայաստանի մէջ աւելի նեղել Հայերս, ճնշել, նոյնիսկ ջարդել տալ : որ այլու ևս բոլորքող չի գանուի :

ԱՌԱՋԻՆ ՅԵՂԱՓՈՒՈՒՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Հայերը տեսնելով որ Հայաստանի մէջ բռնանութիւնները կը շատնան և Սուլթանը ամէն կերպով կը ճնշէ զիրենք, յուզուեցան և միշտ կը դիմէին Անգլիոյ և Եւրոպայի միւս տէրութիւններուն միևնոյն ատեն կը բողոքէին կառավարութեան : Սա-

կայն զերեւնք լսող չկար : Ուստի տեսնելով որ ապըստամբելով և բողոքելով ուրիշ ազգեր (Յոյները, Պուլկարները ևն.) ազատութիւն ձեռք կը բերեն , Հայերն ալ սկսան ինքնապաշտպանութեան դիմել : Միւս կողմէ Սուլթանը սկսաւ հալածել հայ ազգասէր անձերը , գրաքննութիւն հաստատեց , բանտարկեց ու աքսորեց շատերը : Բայց բազմաթիւ անձնուէր երիտասարդներ , ինչպէս Յուսէօ , Ժիրայր , Արաբօ , Մ. Փոքրուզալեան ևայլն սկսան շրջիլ Հայաստանի խորերը , կազմակերպութիւններ պատրաստեցին , կռիւի դաշտ իջան և արթնցուցին հայ ժողովուրդը . ստիպեցին որ ինքզինքը պաշտպանել սորվի : Ամէն կողմ կը թափան ընկերութիւններ հիմնեցին , զպրոցներու մէջ սկսաւ ազգային ոգի ներշնչել : 1885 ին Մկրտիչ Փոքրթուզալեան , փախչելով արատահման , Մարտիրոսի մէջ սկսաւ հրատարակել Արմենիա անուն յեղափոխական թերթը : Անոր դրօշակին տակ կազմուեցաւ Արմենական ընկերութիւնը : Ինչ ետքը Լոնտոնի մէջ կազմուեցաւ , Հայոց Հայրենասիրական Միութիւնը . իսկ 1887 ին ալ Ժընէվի մէջ սկսաւ հրատարակուիլ Հնչակ թերթը , որ Հնչակեան կուսակցութեան օրկանը եղաւ : Այդպիսի հայրենասնուէր միութիւններ ալ կազմուած էին Կովկասի մէջ , որոնցմէ մէկն էր Երիտասարդ Հայաստան : Այն և ուրիշ բազմաթիւ միութիւններ սկսած էին հայ ժողովուրդին դատը պաշտպանելու հետամտիլ :

ԿԱՐԵՆԻ ԵՒ ԳՈՒՄ ԳՆՔՈՒՆ ՅՈՅՅԵՐԸ.— Սուլթանը միշտ կը շարունակէր իր հալածանքի քաղաքականութիւնը : 1890 ին Յունիս 5 ին Կարինի կուսակալը խուզարկեց Հայոց եկեղեցին և Սանասարեան վարժարանը , թնդանօթ , ուսմբ եւայլն զտննել : Է յոյսով , բայց բան մը չգտաւ : Կարնեցիք յուզուեցան . բողոքեցին , շուկան գոցեցին , բայց կառավարական զօրքը թուրք ամբողջ սկսան յարձակիլ Հայերուն վրայ : Այս լուրը երբ Պոլիս հասաւ , Պոլսոյ ժողովուրդն ալ զրգուռեցաւ : Այդ

ժամանակ Հայոց պատրիարքն էր Խորէն Արքեպ . Սշըրեան : Հնչակեան կուսակցութեան առաջնորդութեամբ , հազարաւոր Հայեր Յուլիս 15 ին , դիմեցին Գում-Գաբուրի Մայր եկեղեցին , եւ ուզեցին Պատրիարքը հետ առնելով Բ . Դուռը երթալ եւ բողոքել եղածներուն համար ու բարեկարգութիւն պահանջել : Սակայն Սուլթանին զինուորները կէս ժամ բայէն ետ դարձուցին ցուցարար թափօրը : Այնուհետեւ Հայաստանի բոլոր անկիւնները սկսան քայքայուիլ և սոսկալի հալածանք ու հարստահարութիւններ :

ՍԱՍՈՒՆԻ ԱՌԱՋԻՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ 1894 . —

Չեթուսի նման լեռնային անմաշկելի վայր մըն է Սասունը , Մուշի հարաւային կողմը բազմաթիւ մասնւոր գիւղերով : Հինէն ի վեր ազատ ու անկախ մեծցած էին այն տեղի բնակիչները , որոնք հայ էին : Սասունի գլխաւոր գիւղերն են . Գալուրիկ , Շենքի , Կելիկուզան , Անտոբ ևայլն : Սուլթան Համիա չը հանդուրժելով անոնց ազատ կեանքին , ուզեց ձընչել , իր սպանող լուծին տակ անել զանոնք : Անոնց վրայ տուրք դրաւ , բայց չէր կրնար զանձել , որովհետեւ օսմ . պաշտօնեաները ծեծ ուտելով ետ կը դանային : Սասունի շրջակաները կը զանուին բազմաթիւ քիւրտ աշխրեքներ (ցեղ , ընտանիք) . անոնք խաշնարած են : Չմեռ ժամանակ իրենց հօտերը կ'արածեն ձուլամերկի , Սղերդի կողմերը , ուր համեմատաբար աւելի տաք կ'ըլլայ : Իսկ ամառ ժամանակ կը փնտոնեն հովասուն ու ջրաբլբի լեռներ : Սասունը այդ կողմէն յարմար վայր մըն է , այդ պատճառով ամէն տարի հոն կը դիմէին : Բայց Սասունցիք թոյլ չէին տար անոնց : 1893 ին Օսմ . կառավարութիւնը դրդուեց Քիւրտերը որ ամառը երթան Սասուն : Դաւարիկցիք և յեղափոխական երիտասարդներ « Դըւրիկցիք » ի առաջնորդութեամբ զիմադրեցին Քիւրտերուն ու վճռեցին : Այն ատեն Համիա վճռեց Սասունցիներուն ոչժը ջախջախել : Յաջորդ տարին

Քիւրաքերը նորէն յարձակեցան և սկսան յափշտակել Սասունցիներու ոչխարները, ձիերը ևն. : Սասունցիք փոխադարձաբար իրենք ալ սկսան Քիւրաքերուն ոչխարները յափշտակել, իրենց գողցուցածներն ալ ետ առնելով : Քիւրաքերը բողբոջեցին Բ. Դրան : Այս բանը պատրուակ բռնելով Համիա սրուչեց իր մտադրութիւնը զործադրել : Ղրկուեցան բազմաթիւ զինուորներ, որոնք միացան անկասնոն քիւրաքի նուազներու հետ, որոնց ամէնուն թիւը կը հասնէր 45000 ի : Սասունի մէջ կռուող հայ հրացանակիրներուն թիւն էր 700, որոնք զինուած էին նախնական շիշխաններով : Իսկ մնացեալ Հայերը զինուած էին կացինով, թուրով և այլն : Սասունցիներու առաջնորդն էր Մուրաւս (Համբարձում Պոյաճեան) Հնչակեան, իր 7 ընկերներով : Չայի կոիւր ամէնէն հրոչակաւորը եղաւ, ուր թշնամին թողուց 2200 դիակ, իսկ Հայերէն սպաննուեցան 71 հոգի : Սակայն Համիաի զինուորները, աւելի առաջ տանելով իրենց նպատակը, վերջապէս թնդանով քանդեցին Սասունը. Գալուստրիկի եկեղեցին այրեցին՝ 300 մարդ մէջը և սկսան կոտորել Հայերը : Սասունի այս ղէպքին աւերեցին 6 դպրոց, 15 եկեղեցի, 48 զիւղ, 1373 տուն :

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Հայոց պաշտպան Ռուսիան թշնամի կ'ըլլայ հայկական դատին, որովհետև Անգլիա ձեռք կ'ոգէ առնել զայն. Համիա կը բաջալերուի, կ'սկսի իր հալածանքի բազարականութեան դիմել. Միւս կողմէ Հայք կ'սկսի գիտակցիլ եւ ինքնա աշտպանութեան դիմել. Հետզհետէ կը կազմուին կրթական, յիզափոխական ընկերութիւններ, Վրայ կը հասնի կարինի ցոյցը, որուն կը յաջորդէ Գուս-Գարուի ցոյցը. Հըպարտ Սասունը անմասն չի մնար Համիաի հալածանքէն. Համիա կը գրգռէ Սասունի ապստամբութիւնը եւ ապա կը հրամայէ կործանել զայն. Ամբողջ Սասունը աւերակ կ'ըլլայ :

Ի Զ. Դ Ա Ս

**Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Կ Ո Տ Ո Ր Ա Մ Ն Ե Ր Ը Ե Ի
Յ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ա Կ Ա Ն Ց Ո Յ Յ Ե Ր**

ՄԱՅԻՍԵԱՆ ԾՐԱԳԻՐ . — Սասունի կոտորածին լուրը Եւրոպա հասնելով պետութիւնները Բ. Դրան դիմեցին և քննութիւն պահանջեցին : Քննիչ Յանձնախումբ մը զրկուեցաւ, որ 1895 Յունուար 24 էն մինչև Յուլիս 21, ամբողջ վեց ամիս քննեց և հաստատեց թէ՛ Հայերը ապստամբած չէին, այլ իրենց վրայ եղած յարձակման առեւն ինքզինքնին պաշտպանած էին : Միւս կողմէն Պոլսոյ մէջ Անգլիայ, Ռուսիոյ և Յորանսայի դեսպանները ժողով դուրսարելով Ծրագիր մը մշակեցին՝ Հայաստանի բարեկարգութեան համար : Համիաի ներկայացուցին Մայիս 11ին. այդ պատճառով կոչուեցաւ Մայիսեան Ծրագիր : Սուլթանը մեծ գոռարութեամբ և բարեփոխելով ստորագրեց ծրագիրը Հոկտ. 17 ին :


ՄԵԾ ԶԱՐԴԵՐ . — Սուլթան Համիա մէկ կողմէն կը բանակցէր եւրոպական դեսպաններու հետ Հայաստանը բարեկարգելու համար, միւս կողմէ առաջ կը տանէր իր ծրագիրը, որ էր՝ Հայերու ջնջումը : Հոկտ. 8ին Տրապիզոնի մէջ, 21ին Երզնկայի, 23ին Մարաշի մէջ ջարդեր տեղի ունեցան : Անկէ ետքը կարճի մէջ ջարդեր տեղի ունեցան : Պիքլիս, Ուրֆա, Բաբերդ, Գարազով Կիւմիւրջիւսնէ, Պիքլիս, Ուրֆա, Բաբերդ, Գարազով, Էրզրում, Տիարպիքի, Արաբկիր, Մալաթիա, Էկիմ, Խաթբերդ, Սվազ, Կիւրին, Այնթապ, Սարգուան, Ամասիա, Թոֆաթ, Եհնէ, Վան, Զիլէ, Կեսաբիա, Էվերէկ ևն. ևն. տեղի ունեցան սոսկալի ջարդեր ու դէպքեր, թալան յափշտակութիւն, բռնաբարութիւններ : Շատ տեղեր դիմադրեցին Հայերը, ինքնա-

պաշտպանութեան դիմեցին, բայց թուրք զինուոր-
ներն ու կառավարութիւնը խորտակեցին անոնց սյ-
ժերը յաճախ խարելով ու անոնց զէնքերը զրաւե-
լով: Տուներու եւ եկեղեցիներու մէջ ապաստա-
նած Հայերը այրեցին իրենց ապաստանարաններուն
մէջ: Այս ստորին գործին մէջ մեծ դեր խաղացին
Համիտի կազմակերպած քիւրա զինուորները, որոնք
կը կոչուէին Համիտի: Եւրոպացի հիւպատոսներու
և ճանապարհորդներու կարծիքով զոհերուն թիւը
300,000 ի հասաւ:

ՊԱՊԸ ԱԼԻԻ ՅՈՅՅԸ. — 1895 Սեպտեմբերին,
երբ տակաւին Հայկական ջարդերը յայտնապէս ըս-
կուած չէին, և Սուլթանը չէր սեղեր Մայիսեան Ծը-
րագիրը ստորագրել, Հնչակեան կուսակցութեան ա-
ռաջնորդութեամբ բազմաթիւ Հայեր Գուժ Գաբուէի
Մայր եկեղեցիէն դիմեցին Պապը Ալի, աղերսագիր
առաւ համար կառավարութեան և բողոքելու հա-
մար Հայաստանի մէջ զործուած հարստահարութիւն-
ներուն դէմ: Բ. Գրան առջև աղերսագիր ներկայա-
ցընող ժողովուրդը ցրուելու համար կառավարական
զօրքը յարձակեցաւ և սկսաւ ընդհարում մը: Այնու-
հետև սկսաւ Պոլիսի առաջին դէպքը, որուն յաջոր-
դեցին Հայաստանի կատարածները:

ՆԻՐՈՊԱՅԻ ՀԱՅՍՍԵՐՆԵՐԸ. — Հայերուն ջար-
դին լուրերը եւրոպա հասնելով յուզեցին ժողո-
վուրդները: Սկսան ցոյցեր ընել, ժողովներ սարքել
միթիոններ կազմակերպել՝ այսպանելու համար Մեծ
Մարդասպանին արարքները և պաշտպանելու համար
Հայոց դատը: Եղան բազմաթիւ մեծ անձնաւորու-
թիւններ, որոնք իրենց հայասիրութեամբ օգնեցին
հայկական դատին: Աստուցմէ էին ձեյմա Պրայս, որ
անգամ էր կոնսուլի «Անկլո — Հայկական Ընկերու-
թեան», Կլատսբոն, Անգլիոյ ազատական նախարա-

բապեալ: որ հրապարակով, Երեսիոխաններու և Լոր-
տերու ժողովներուն առջև ամբաստանեց Կարմիր
Սուլթանը: Իսկ Ֆրանսացի պետական մեծ մարդերէն
հայասէրներ եղան Բրեսանսէ, Անարօլ Ֆրանս, Վիքոր
Պեռար, Ժան Ժօնէո, Տրնի Քօշէն, Քլեմանսօ, Տ'էյբուր-



Կլատսբոն

նէլ տը Քօնստան, Բիէո Քիլաո, որ սկսաւ հրատարա-
կել նաև «Բրօ Արմենիա» ֆրանսերէն թերթը Հա-
յոց դատը պաշտպանելու համար: Ուրիշ հայասէր-
ներ ալ եղան նաև զերմանացիներէն, խալացիներ-
էն, ռուսերէն և այլն և այլն: Անոնք բոլորը սկսան
Եւրոպային ճանցնել հայ ժողովուրդը՝ իր լաւ կող-
մերով:

ՊԱՆՔ ՕԹՕՄԱՆԻ ՅՈՅՅԸ. — 1890 ին կազմուե-
ցաւ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը: Դաշնակ-
ցութեան առաջին մեծ ցոյցը եղաւ Օսմ. Պանքայի
գրաւումը: 1896 Օգոստ. 14 ին, 25 կարիճներ գը-

բաւեցին Օսմ. Պանքան : Անոնք կ'սպառնային օգը հանել չէնքը և գանձերը եթէ իրենց պահանջները չգործադրուին : Անոնք կը պահանջէին Հայաստանը՝ տանջանքին վերջ տալ , բարեկարգել Հայաստանը՝ եւրոպական հսկողութեան տակ , և ընդհանուր ներում հայ քաղաքական բանտարկեալներուն : Սուլթանը դող ելած՝ եւրոպացի դեպուտատներու միջնորդութեամբ ընդունեց անոնց պահանջները , և ընդունեց նաև որ Պանքայի ցոյցին մասնակցողները անարգել քաջութիւն չօգտնուէ ու հեռանան Պոլսէն , խոտանալով արդիւիւ ջարդերը : Բայց հազիւ մեկնած էին , Պալլաի խուժանը սկսաւ Հայերը կոտորել հասգիւղի մէջ և Պալլաի ամէն կողմը :

ԵՒՐՈՊԱՅԻ ԱՆՉՕՐՈՒԹԻՒՆԸ . — Այս բոլոր ջարդերը , եւրոպայի հայասէրներուն ջանքերը ստիպեցին որ Անգլիա միջամտէ և բարեկարգութիւն պահանջէ : Անգլիական նաւերը մինչև Տարտանէլ եկան , բայց Ռուսիա հակառակեցաւ : Ռուսիոյ միացան Գերմանիա և Ֆրանսա , որուն կառավարութիւնը հայաստեաց մարդոց ձեռքը կը գանուէր այն ատեն : Անգլիա ստիպուեցաւ սեղի տալ և Համիա ուրբախութեամբ սկսաւ շարունակել իր հայաջինջ քաղաքականութիւնը :

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ . — Հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան գործին մէջ յաճախ Հայաստանի մէջ գործող հայ յեղափոխական ընկերութիւններու ձիւղերը միացած կուռեցան : Այսպէս 1895 շուտ . 22 ին . 44 Դաշնակցականներ , եւ 16 Արմենականներ վան երթալով միասին կուռեցան : 1896ի վաղ ի ինքնապաշտպանութեան կռիւին միջոցին Կաւակցական , Հնչակեան և Արմենական միասին ղեկավարեցին գործը , 1902 ին , 1909 ին Ամերիկայի Պարսկաստանի եւ Կովկասի մէջ կարգ մը խնդիրներու համար համերաշխութիւն գոյացաւ Դաշնակցական եւ Հնչակեան մարմիններուն միջեւ :

ԽԱՆԱՍՈՐԻ ԿՈՒՒՐ (1897) ԵՒ ՍԱՍՈՒՆԻ Բ. ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆԸ . — Հ. Յ. Դաշնակցութիւնը Օսմ. Պանքայի ցոյցէն ետք կազմակերպեց Խանասորի Արեւմտեայ , 1897ին ջնջելու համար Շէրիֆ պէյի վրանարնակ աւարտուցողը . Յուլիս 25 ին 300 Քէսիներ յարձակեցան եւ փճացուցին ամբողջ ցեղը , 21 զոհ տալով : Այս արշաւանքը սարսափ ձգեց բոլոր քիւրա վոչկատուն աշիրէթներու մէջ . 1903էն 1904 տեղի ունեցաւ նաեւ Սասունի Բ. ապսամբուքիւնը , ղեկավարութեամբ Անդրանիկի Այս անգամ հայ ֆէտային օգնութեան հասնելով ըմ-



Զօրավար Անդրանիկ

բոտ ու ազատուեց Սասունին , ապստամբութիւնը մեծ ծաւալ ու սաստկութիւն ստացաւ : Ահագին թիւով կանոնաւոր ու անկանոն զինուորներ պաշարեցին ըմբոստները , որոնք

շատ անգամ քիչ հոգիով, ինչպէս 70 հոգիով. անթիւ զօրքեր կոտորեցին ու վռնեցին յարձակումները, եւրոպական Տէրութիւնները ստիպուեցան ներկայացուցիչներ զրկել Սասուն հաշտութեան բանակցութիւններ կատարելու համար Յեղափոխականներուն եւ Օսմ. կառավարութեան միջեւ: Սակայն Ռուսիոյ չկամութիւնը զարծեալ վտանգեց գործը: Կտրիճ ապստամբները ռազմամթերքի եւ սնունդի պակասութենէն ստիպուեցան տեղի տալ եւ չհասան իրենց նպատակին: Սուլթանը խոստումներ տուաւ միայն, բայց սկսուէր կրկին կոտորել:

ԵՂՆՏՆԻ ԴԷՊՐԷՆ. — Դաշնակցութիւնը չաւղելով սակայն յուսահատիլ, Սասունի ապստամբութեան յաջորդ տարին, 1905ին, կազմակերպեց Երևանի մահափորձը: Դժոխային մեքենայ մը ժամացուցաւ, հաստատուած կառքի մը մէջ, տարուեցաւ Երևանը Սելանլըքի արարողութեան՝ պահուն, բայց անակնկալ յապաղում մը փրկեց Կարմիր Սուլթանը:

ԺԷՕՆ ԹՈՒՐԻՅԵՐՈՒՆ ՀԵՏ ՄԻՈՒԹԻՒՆ. — Սուլթանի Համիտին հալածանքին ենթակայ էին նաև ազատ խորհող թուրք երիտասարդները, որոնք հինէն իվեր կաշաւած են ժեօն Թիւրքեր կամ երիտասարդ թուրքեր: Ասոնք ալ կ'ուզէին Համիտը ապալել: Ասոնց կեդրոնն էր Բարիզ: Բարիզի ժեօն Թուրքերը միանալով Սելանլի կազմուած Ազատութիւն թուրք գաղանի գոմիթէին հետ, կոչուեցան Օսմանլը Իրքիսատ վե Թերազը ձեմիլերի: Հայ յեղափոխականները ուղեցին միասին դորձելով միասին ապալել Համիտը, սուտի ժեօն Թուրքերու հետ գումարեցին Բարիզի գոմիթէն, 1907ին և որոշեցին ապալել բոլոր նապեարը և Սահմանադրութիւն հրատարակել: Այս նպատակով սկսան թուրք զինուորներուն մէջ քարոզել ազատութեան և ըմբոստութեան գաղափարը: Վերջապէս 1908ին Նիսիի և Էնվեր պէյերու ապստամբութիւնով, յուլիս 10ի գիշերը Սուլթանը Սահ-

մանադրութիւն հրատարակեց:

ՄԱՐՏ 31ի ԴԷՊՐԷՆ ԵՒ ԱՏԱՆԱՅԻ ՁԱՐԴԵՐԸ. — Սուլթանի Համիտ ուղեց նորէն ջնջել Սահմանադրութիւնը, սուտի զօրքը ապստամբեցաւ 1909 Մարտ 31ին բայց Արևմտեան Բանակը, Մահմուտ Շեվքի փայտի առաջնորդութեամբ, եկաւ Պոլիս և Համիտը գահընկեց ընելով նստեցուց Սուլթան Մեհմետ Բեշաւ Բ.: Մարտ 31ի դէպքին ատեն, Համիտի անկումի օրերուն իսկ, տեղի ունեցան նաև Ատանայ գաւառին ջարդերը, ուր զժբախտ Հայերէն սպանուեցան 20000 է աւելի:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Սասունի կոտորածէն ետք Տէրութիւնները կ'առաջարկեն Մախսեան ծաղիւր, գոր վերջապէս կ'ընդունի Սուլթանը, բայց միւս կողմէն. թելադրուած Ռուսիայէն, կը կազմակերպէ հայկական ջարդերը, սկսելով Պապը Ալիի ցոյցի օրէն: Եւրոպա կը յուզուի, մեր դատը շատեր կը պաշտպանեն, բայց ի գուր, 1890ին կազմուած Դաշնակցութիւնը կը կազմակերպէ 1896ի Պանքայի ցոյցը, որ կը դողացնէ Սուլթանը, բայց անօգուտ: Այնուհետեւ յեղափոխական կուսակցութիւնները միշտ կը գործեն, մերթ առանձին, մերթ միացած, 1897ին Դաշնակցութիւնը կը կազմակերպէ Խանասորի արշաւանքը, իսկ 19 4ին Սասունի Բ. ապստամբութիւնը, 1905ին Երևանի մահափորձը, 1907ին ժեօն Թուրքերու հետ կը գիտակցին, 1908ին Համիտ կ'ստիպուի Սահմանադրութիւն հրատարակել, բայց Մարտ 31ի դէպքը, Ատանայի կոտորածը կը սարքէ եւ գահընկեց կ'ըլլայ:



Ի Է, ԴԱՍ

ՌՈՒՍԱՀԱՅԵՐԸ ԵՒ ԹՐՔԱՀԱՅԵՐԸ ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

ՌՈՒՍԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ . — Մինչև 1881 թուականը , Ռուսաստանի Հայերը և ուսումնական Հայաստանի բնակիչները կը նկատուէին Ռուսիոյ հաւատարիմ և օգտակար , շէնցնող հպատակները : Բայց 1878էն Պեքլինի Դաշնագրութենէն , մանաւանդ 1881էն Ադեֆանդր Գ. կայսեր զանակալութեանէն ետքը Ռուսիոյ քաղաքականութիւնը փոխուեցաւ Հայերուն նկատմամբ : Ռուս արքունի ղեկավարները որոշած էին ռուսացնել բոլոր իրենց այլազան , այլալեզու և այլալեզուն հպատակները : Այդ ազգերէն մէկն ալ Հայերն էին :

ՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԱՌԱՋԻՆ ՓԱԿՈՒՄԸ 1885. — Հայերը ուսուցանելու համար ուսու կառավարութիւնը որոշած էր փակել Կովկասի Հայոց բոլոր դպրոցները և ստիպել հայ տղաք որ յաճախեն միայն ուսու վարժարանները , միմիայն ուսուերէն ուսանին : Ուստի 1885ին առաջին անգամ փակուեցաւ Հայոց 500 դպրոցները , 20, 000 աշակերտ փողոց թափեցան . աւստնց ուսուցիչներուն և ուսուցչուհիներուն թիւն էր 900 : Երբ դպրոցները կը փակէին բռնի կերպով , աշակերտները կը դուչէին . « Մի՛վտարէք մեզ , մենք կ'ուզենք ուսանիլ . . . ինչո՞ւ մեզ կ'արտաքսէք » . Կառավարութիւնը Մակար կաթողիկոսի խնդրանքին վրայ թէև հրամայեց վերաբանալ դպրոցներէն մակ մասը , պայմանով որ հայ եկեղեցականները միայն կառավարեն զանոնք : Այս տեղի ունեցաւ 1886ին :

ՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ Բ. ՓԱԿՈՒՄԸ (1894) ՀԱԼԱԾԱՆՔԸ . — Նրբմեան Հայրիկի կաթողիկոսութեան սկիզբները նոյնիսկ ուսու կառավարութիւնը վերստին փորձեց փակել հայ դպրոցները : Կառավարութիւնը որոշած էր նաև փակել բոլոր հայ ընկերութիւնները : Այն ժամանակ Կովկասի Հայերը ունէին չորս կարևոր կրթական ու բարեգործական ընկերութիւններ , առոնք էին . ա) Պազուի մէջ Հայոց Մարդասիրական ընկերութիւնը , հիմնուած 1863 ին , բ) Թիֆլիսի մէջ Հայոց հրատարակչական ընկերութիւնը և գ) Հայոց Բարեգործական ընկերութիւնը , երկուքն ալ հիմնուած 1880ին , դ) Կովկասի Հայ Բարեգործական ընկերութիւնը , հիմնուած 1881ին : Ռուս կառավարութիւնը 1889ին փակեց բոլոր այս ընկերութիւնները , բաց ի Հրատարակչական ընկերութիւնէն . այս վերջինն ալ լուծեց 1900ին : Աւստնցմէ զատ Ռուս կառավարութիւնը հաստատեց նաև խիստ զբաւեցնուիւն հրատարակչութիւններու վրայ , ստիպեց Ռուսերէն խօսիլ ու երգում ընել : Սկսաւ հալածել նաև Թուրքահայերուն գնող ընկերութիւններն ու խումբերը , ջարդերէն փախչող և Ռուսաստան ապաւինող Հայերը , բանտարկել հայ աչքի ինկող գործիչները , Հայաստանի օգնութեան գացող Ֆէտայիները աքսորել դէպի Սիպրիա :

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՆՈՒԱԾՆԵՐՈՒՆ ԳՐԱՌՈՒՄԸ . — Այս հայահալած քաղաքականութեան անդուծ ներկայացուցիչը եղաւ Կովկասի կառավարիչ Կալիցիւնը , որ 1903ին ուղեց աւելի առաջ երթալ : 1897ին արդէն մաս մը զբաւած էր հայ դպրոցներու կալուածները , որոնք հայ եկեղեցիներուն կը պատկանէին : Ուստի բարձրագոյն հրաման հանել տալով յայտարարեց 1903ին թէ պիտի զբաւէ բոլոր հայ եկեղեցական կալուածները : Այլևս ժողովուրդին համբերութիւնը . Ազգ. Պատմ. Միջվն Բ.

մախտընտրող տապալել Սուլթան Համիտը : Այդ նըպատակով Եւրոպայի մէջ գումարեցին համադումար ժողով մը , ուր ներկայ գտնուեցան : գրեթէ բոլոր հայ և թուրք քաղաքական կուսակցութիւններն : Այդ ժողովին մէջ որոշեցին միասին գործել : Քանի մը ամիսներ ետքը երկրին ամէն կողմերը յեղափոխութիւն հանեցին , ապստամբեցուցին օսմ . բանակը և պահանջեցին որ Սուլթանը դադրի միապետ ըլլալէ , և յայտարարէ Օսմ . Սահմանադրութիւնը : Սուլթանը ստիպուեցաւ սեղի տալ և հրովարտակով մը հաստատեց Օսմ . Սահմանադրութիւնը 1908 Յուլիս 19)24ին :

ՄԱՐՏ 31 Ի ԴԵՊԻԷԸ ԵՒ ԱԶՍԱՐԱՍԻ ԲԱՆԱԿԻ ՄՈՒՏՔԸ ՊՈԼԻՍ . — Օսմ . Սահմանադրութիւնը մեծ խանդավառութեամբ ընդունուեցաւ Հայոց կողմէ , թէ Պոլիս և թէ դաւառները : Թուրք և հայ եղբայրութեան յուզիչ սեփարաններ անթիւ էին : Սակայն երկրին յետադիմական տարրերը , Սուլթան Համիտի արբանեակները , սկսան կամաց կամաց զլուխ վերցնել . Սուլթանը ուզեց դաւադրութիւնով մը ջնջել Օսմ . Խորհրդարանը , և դարձեալ իբր միապետ երկիրը կառավարել : Օսմ . առաջին Խորհրդարանի հայ անդամներն էին Գրիգոր Զօհրապ , Յակոբ Պապիկեան , Վարդգես (Սերենկիւլեան) , Գեղամ Կարապետեան , Գաբրիէլ Փաստրմանեան , Ստեփան Սբարդալեան , Պետրոս Հալանեան , Մուրատ (Համբարձում Պօյաձեան) , Տօֆ . Մ . Տաղաւարեան , Վահան Փափազեան :

Մարտ 31ին պայթեցաւ յետադիմական շարժումը , որուն ղեկավարները առհասարակ հօնաներ ու պալատական անձեր էին : Սկսան Պոլսոյ փողոցները պատիլ և պահանջել որ ջնջուի Օսմ . Սահմանադրութիւնը , փակուի Երեսփ . Ժողովը : Նման շարժումներ սեղի ունեցան նաև դաւառները :

Մակեդոնական թուրք բանակը , Մահմուտ Շէվքէթ փաշայի ղեկավարութեամբ , լսելով դաւադրութեան ու յետադիմական շարժումը , քալեց Պոլսոյ վրայ , գրաւեց մայրաքաղաքը , Սուլթանը տապալեց , վերահաստատեց Սահմանադրութիւնն ու Երեսփ . Ժողովը : Այս ընդհանուր խռովութիւններու միջոցին . ամէնէն աւելի ծանր դէպքեր պատահեցան Կիլիկիոյ մէջ (Ատանայի և Հալէպի նահանգներուն մէջ) :

ՊԱԼԲԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԵՆԸ . — Օսմ . Սահմանադրութեան վերահաստատումէն ետքը , թուրքիա ստիպուեցաւ պատերազմ մղել նաև Իտալիոյ դէմ և կորսնցուց Ափրիկէի իր հողամասերն ու Եգէական ծովի բազմաթիւ կղզիները : Ապա 1912 ին պայթեցաւ Պալքանեան պատերազմը : Պուլկարիա , Սերպիա , Յունաստան , Ռումանիա և Գարատաղ միացած , յարձակում գործեցին Թուրքիոյ վրայ և ամբողջ Եւրոպական Թուրքիան գրաւեցին : Օսմ . կառավարութիւնը ստիպուեցաւ ընդունիլ Չաթալճայի դաշնագիրը : Սակայն քիչ ետքը Սերպիա , Յունաստան և Ռումանիա միացած դէմ ելան Պուլկարիոյ , իրենց միջև աւարը չկարենալով բաժնել : Այդ ատեն թուրք բանակը վերստին գրաւեց Ադրիանուպոլիսը : Պուլկարիա պարտուեցաւ : Պալքանեան պատերազմի միջոցին Մակեդոնիայէն , Թրակիայէն ու Եւրոպական Թուրքիոյ միւս մասերէն բազմաթիւ Իսլամներ թուրքեր սկսան զաղթել դէպի Արեւելեան նահանգները :

ՊՈԼՍՈՅ ՄԷՋ ԴԵՍՊԱՆԱԺՈՂՈՎ . — Այս միջոցներուն Պոլսոյ մէջ սեղի ունեցաւ (1914 Յնվ . 24 — Փետր . 5) ղեկավանած ժողով մը վեց մեծ պետութեանց և Թուրքիոյ միջև և կնքուեցաւ համաձայնագիր մը , որով Թուրքիա յանձն կ'առնէր Արեւելեան նահանգ

հները բարեկարգել և օժտել տեղական ինքնավար ղրութիւնով մը : Թ՛րքահայաստանը կը բաժնուէր երկու մեծ նահանգներու որոնց իւրաքանչիւրը պիտի կառավարուէր մէյմէկ եւրոպացի նահանգապետէ կամ մարզպանէ : Մարզերէն մէկին կեդրոնը պիտի ըլլար Վան, միւսին Էրզրում : Եւրոպացի երկու մարզպաններն ալ ընտրուեցան մին Հոլանտացի Պ. Վէսթէնէնկ, միւսը Նորվէկիացի Գնդապետ Պ. Հօֆ :

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Սուլթան Համիտի բռնակալ իշխանութեան ղէմ կը միաբանին գրեթէ բոլոր հայ եւ թուրք յեղափոխական կուսակցութիւնները եւ բանակը ապստամբեցնելով կը ստիպեն Սուլթանը որ հաստատէ Օսմ. Սահմանադրութիւնը 1908 Յուլիս 10ին : Սակայն 1909 Մարտ 31ին յետադիմական շարժում մը կ'ուզէ տապալել սահմանադրական կարգերը, փակել խորհրդարանը : Բայց Մահմուտ Շէվրէթ փաշայի բանակը կը քալէ Պոլիսի վրայ, զահրնկեց կ'ընէ Սուլթանը . Օսմ Սահմանադրութեան վերահաստատուելէն անմիջապէս ետք կը ծագի Ափրիկեան Տրիպոլիտոյ եւ Պալքանեան պատերազմները ուր Թուրքիա կը կորսնցնէ Ափրիկեան եւ Եւրոպական հողերը : Պոլսոյ մէջ տեղի կ'ունենայ դեսպանաժողով մը եւրոպական վեց մեծ պետութեանց՝ եւ Թուրքիոյ միջեւ կը կնքուի համաձայնագիր մը Արեւելեան Նահանգներու բարեկարգութեան հարցը : Երկու Եւրոպացի նահանգապետ կ'ընտրուի - Հոլանտացի Պ. Վէսթէնէնկ, եւ Նորվէկիացի Պ. Հօֆ որոնք գործի կը մեղմարկեն 1914 ին :



Ի Թ . Դ Ա Ս
Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԵՐԱՋՄԸ . — Հայաստանի երկու եւրոպացի մարզպանները հազիւ տեղերնին հասած էին, երբ 1914 Յունիս 28 ին տեղի կ'ունենար

Սէրայէվոսի ոճիրը : Աւստրիոյ այդ քաղաքին մէջ սպաննուեցաւ Աւստրիոյ գահաժառանգ իշխանը Աերպ յեղափոխականներու կողմէ : Ասոր վրայ Աւստրիա պատերազմ հրատարակեց Սերպիոյ դէմ, Ուսիա պաշտպան կանգնեցաւ : Գերմանիա Աւստրիոյ միացաւ, Ֆրանսա իր կարգին պատերազմի մտաւ, ապա հեռագնեաւ պատերազմի մասնակցեցան գրեթէ բոլոր Եւրոպայի պետութիւնները : Այս ընդհանուր խառնաշփոթութիւններուն միջոցին Թուրք կառավարութիւնը անմիջապէս ետ կանչեց Հօֆ և Վէսթէնէնկ պէյերը, հրովարտակով մը ջնջեց « քարթիթիւլասիտաններ » և 1914 Նոյ. 12ին մտաւ ընդհանուր պատերազմին մէջ :

Ո Ո Ւ Մ Ջ Ա Ր Ի Ն Հ Ր Ո Վ Ա Ր Տ Ա Կ Ը . — Թուրքիա երբ պատերազմի մտաւ, Ռուսիոյ Չարբ յայտարարուիւն մը հանեց ուղղուած բոլոր Հայերուն, որ էր .

« Հայե՛ր

« Հինգ դարու գերութեան եւ բռնապետութեան լուծէ մը ետք, որու տեւողութեան ընթացքին ձեզմէ այնքան հոգիներ ընկճուեցան եւ այնքան ուրիշներ զեւ ենթակայ են ամէնագզուելի նախատինքներու, վերջապէս հնչած է ազատութեան ժամը ձեզի համար :

« Ինչու ժողովուրդը իր անուանի հայ զաւակները մեծ հպարտութեամբ եւ պարծանքով կը յիշէ, և ազարէֆներու, Մելիքովներու պէս խիստ շատ զիւցաղներ իրենց սլաւ եղբայրներուն հետ միասին հայրենիքի փառքին ու մեծութեան սիրոյն կուռած են :

« Չեր դարաւոր հաւատարմութիւնը երաշխիք մըն է թէ այս հանդիսաւոր օրերու մէջ պիտի կատարէք ձեր պարտականութիւնը անդրդուելի հաւատքը ունենալով մեր արդար դատին եւ զէնքին վերջնական յաջողութեան համար :

« Հայե՛ր,

« Միացէ՛ք ձեր արեւակից եղբայրներուն, ձարական մականին տակ, վերջապէս պիտի վայելէք ազատութեան եւ

արդարութեան բարիքները :

ԹՈՒՐԲԻՌՅ ՀԱՅԵՐՈՒ ՈՒՂՂԱՄԻՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԲԸ . — Հակառակ Ռուսիոյ Չարին այս յայտարարութեան, Թրքահայերը պատերազմին սկիզբէն իսկ ցոյց տուին ուղղամիտ վերաբերմունք մը դէպ ի Օսմ. կայսրութիւնը : Ազգ. Պատրիարքարանը մասնաւոր շրջաբերական հեռագիր մը զրկեց զաւանդները : հետեւեալ բովանդակութեամբ :

« Երեք ամիսներէ ի վեր եւրոպական պետութեանց մէջ ծագած ընդհ. պատերազմէն մեր երկիրն ալ դժբախտաբար անմասն չմնաց, ու կայս. կառավարութիւնը ընդհ. զօրակոչով մը բանակը դէնքի տակ առաւ : Վերջին այս երեք ամիսներու մէջ զաւանդներու բոլոր անկիւններէն մեզ հասած հեռագիրներ ու նամակներ ցոյց տուին թէ մեր ժողովուրդը համակերպելով 32էն մինչև 45 տարեկաններու աննեցողներու զօրակոչին, պատերազմական գըրաւմանց և կառավարական այլ անօրինութիւններուն, սիրայօժար մասնակցեցաւ նաև բանակին կամ կառավարական դանազան պէտքերուն համար առաջարկուած հանգանակութեանց, այնպէս որ անոր մինչև այսօր ունեցած ընթացքը կը ցուցնէ թէ՛ հայ ազգը՝ իբրև անբաժան մէկ մասը Օսմ. հայրենիքին իր հաւատարմութիւնը ու հայրենասիրութիւնը ի հարկին արտայայտելու պատրաստ է ի զին ամէն գոհողութեանց » :

Այս խօսքերէն յետոյ այդ շրջաբերական հեռագրին մէջ կը յանձնարարուի Հայերուն ամէն գոհողութեանց ընդառաջ երթալ, նուիրատուութիւններ ընել, հիւանդանոցներ հաստատել, նիւթական ու բարոյական ամէն օժանդակութիւն ընծայել Օսմ. կառավարութեան : Այս շրջաբերականէն առաջ և յետոյ Թուրքիոյ Հայերը ցոյց տուին կատարեալ զգոյշ

ընթացք և նուիրաբերող ոգի, որովհետև հայ քաղաքական կուսակցութիւններն ալ ձայնակից զաւանուած են Ազգ. Պատրիարքարանի : Հակառակ բոլոր այդ գոհողութիւններուն թուրք կառավարութիւնը որ կը կառավարուէր իթիհատ թէրազը կուսակցութեան կողմէ և որուն ազդեցիկ անդամներն էին պատերազմ. նախարար Էնվէր, ներքին գործոց նախարար Թալէաթ և ծովային նախարար ձէմալ փաշաներն, որոշեցին բոլոր հայաբնակ նահանգներու և գիւղերու Հայերը բռնի տեղահան ընել և քշեցին դէպի Միջագետքի և Սուրիոյ անապատները, որոնց մեծագոյն մասը կորսուեցան և մեռան (1915—1916) :

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ընդհ. պատերազմը յանկարծական պայթումով բոլորովին տակնուվրայ դարձուց Արևելեան նահանգներու բարենորոգմանց հարցը, 2օֆ եւ վէսթլնէնկ պէյերը ետ կանչուեցան, Ռուսիոյ Չարը կող մը հանեց Հայոց ուղղուած, բայց Թուրքիոյ Հայերը ցոյց տուին ուղղամիտ ընթացք մը, թուրք կառավարութեան հանդէպ, Ընդհ. պատերազմի շրջանին թուրք կառավարութիւնը տեղահան ըրաւ Ասիական Թուրքիոյ եւ հայաբնակ գաւառներու բոլոր Հայերը զրկեց դէպի անապատները որոնց մեծագոյն մասը կորսուեցան եւ մեռան :



Լ . Դ Ա Ս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ՌՈՒՄ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՈՎԿԱՍ . — Պատերազմի ընթացքին Ռուսիոյ մէջ ծագեցաւ մեծ յեղափոխութիւն մը, որ քայքայեց ամբողջ ոռուսական պատերազմի ձևատները : Ռուսիոյ Չարը Նիքոլա

Բ, ապալեցաւ, երկիրը դարձաւ Հանրապետութիւն : Համայնավար յեղափոխականները կամ Պոլշեկիիները տէր եղան իշխանութեան և որոշեցին անջատ հաշտութիւն կնքել : Պրեստ Լիթովսկի մէջ դաշինք կնքեցին Գերմանիոյ, Աւստրիոյ, Պուլկարիոյ և Թուրքիոյ հետ : Այդ դաշնադրութեամբ Ռուսիա Թուրքերուն կը ձգէր Կարսը, Արտահանը և Պաթումը : Ռուսերուն յեղափոխութիւնն աւ Պրէսի Լիթովսկի դաշնադրութիւնը մեծ աակնուվրայութիւն առաջացուցին Կովկասի մէջ :


ԿՈՎԿԱՍԻ ԵՐԵՔ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՆԵՐԸ . —

Երբ ռուսական յեղափոխութիւնը ծագեցաւ և ռուս զինուորները թողուցին Կովկասի ձախտը ու մեկնեցան իրենց սուրները, Թիֆլիսի մէջ հաւաքուած ներկայացուցիչներու ժողովը (Սեյմ), ինք ձեռք առաւ ձախտի պաշտպանութիւնը : Սէյմին մէջ անդամներ ունէին Վրացիները, Ասրպէճանցիները և Հայերը : Այս երեք ազգերէն խառն դահլիճ մը երկրին դործերը կը վարէր : Թուրքերու հետ դաշինք կնքելու համար պատգամաւորները գացին Տրապիզոն, սակայն հաշտութիւն կարելի չըլլալով կնքել վերադարձան : Վրացիները և Ասրպէճանցիները բաժնուեցան : 1918 Մայիս 26ին ցրուեցաւ Սէյմը, և նոյն օրը Վրացիներու Ազգային խորհուրդը յայտարարեց Վրաստանի Անկախութիւնը : Վրացիներուն հետեւեցան Ասրպէճանցիները և յայտարարեցին ատրպէնս եր Անկախ : Այն ատեն Թիֆլիսի մէջ գումարուած Հայ Ազգային խորհուրդը, Մայիս 28 ին յայտարարեց ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ : Պաթումի մէջ Թուրքերու հետ բանակցութեան մտան Հայոց կողմէ Ա. Խատիսեան, Յ. Քաջազնունի և Մ. Պապաշանեան, և Յունիս 4 ին կնքեցին առաջին դաշնագիրը, որուն համեմատ Հայաստանը կը ձանչ-

ցուէր անկախ հանրապետութիւն : Օգոստոս 1ին Հայաստանի մայրաքաղաք Երեւանի մէջ բացուեցաւ Հայոց առաջին խորհրդարանը :

ԹՈՒՐԿԵՐՈՒ ԸՆԿՐԿՈՒՄԸ ԵՒ ՍԷՎՌԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ . — Այս դէպքերէն քիչ ետքը Պալիսի ձախտը ձեղքուեցաւ, Գերմանները պարտուեցան, բոլոր թրքական ռազմաձախտները խորտակուեցան և կնքուեցաւ Մուտրոսի մէջ զինադադարը : Թուրքերը պարտաւորուեցան բանալ Պոլսոյ զուռները, քաշուիլ Կարսէն Պաթումէն և Արտահանէն : Այդ բոլոր մարզերը՝ բացի Պաթումի շրջանէն և Արտահանի մէկ մասէն, արուեցաւ Հայ Հանրապետութեան :

Յաղթական պետութիւնները մըշակեցին դաշնագիր մը, զոր Թուրքերը ստորագրեցին Սեվրի մէջ : Այդ դաշինքով Հայաստան կ'ընդարձակուէր, իր մէջ կ'առնէր գրեթէ բոլոր թրքական Հայաստանը : Ամերիկա պիտի ստանձնէր Հայաստանի հողատարութիւնը : Սակայն Ամերիկայի նախագահ



Ամերիկայի նախագահ Ուիլսոն

Ուիլսընը հիւանդացաւ, անոր հակառակորդ կուսակցութիւնը յաղթանակեց, և մերժեցին միջամտել եւրոպական և ասիական դորժերուն: Յոյները հըրաման ստացան մանչիլ Իզմիր: Բայց իրենց ներքին վէճերով թշնամի դարձուցին եւրոպայի մեծ պետութիւնները:

Այդ միջոցներուն Անատուլի մէջ զօրացաւ ոյժ մը, որուն ղեկավար դարձաւ Մուսթաֆա Քեմալ փաշա: Թուրքերը դաշինք կնքեցին Պուլշէվիք Ռուսիոյ հետ: Կուր մղեցին Ֆրանսայի դէմ Կիլիկիոյ և Սուրիոյ մէջ, պատերազմ յայտարարեցին Հայ Հանրապետութեան դէմ և գրաւեցին Կարսը: Յաղթեցին նաև Յոյներուն և զանոնք վտարեցին Չմիւռնիայէն:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ. — Այդ միջոցներուն Ռուսիա և Թուրքիա, ուզելով իրարու հետ հաղորդակցութեան ղիւրութիւն ունենալ, քաջալերեցին Հայ Պուլշէվիքները, որ երկրին ղեկը ձեռք առնեն: 1920 Ապրիլին զրաւեցին Ատրպէճանը, Մալիսին Հայաստանի մէջ յեղափոխութիւն հանեցին տապալելու համար կառավարութիւնը և Պուլշէվիք դարձնելու համար: Թուրքերը Սեպտ. 13 ին պատերազմ յայտարարեցին Հայաստանի դէմ: Կարսի անկումէն ետքը, Դեկտ. 4 ին Հայաստանի կառավարութիւնը ձեռք առին Հայ Համայնավարները: Թուրքերը աէր եղան ամբողջ Ախուրեանի աջ եզերքին, Իգաիբի շրջանին ևն:

ՓԵՏՐՈՒՍՐԻ ՅԵՂԱՇՐՋՈՒՄԸ. — Հայ Պուլշէվիքները չափազանց արակոնական խստութեամբ սկսան վարուել Հայաստանի մէջ: Այդ պատճառով ծաղկեցաւ Փետրուարեան յեղաշրջումը: Պուլշէվիկառավարութիւնը տապալեցաւ և կազմուեցաւ Հայրենիքի Փրկութեան Կովիտի իշխանութիւնը: Այս կառավար-

րութիւնը տեւեց մինջև Ապրիլ 2, երբ հայկուս պուլշէիք ուժերու ճնշումի տակ ժողովուրդին մէկ մասը երևանէն քաջուեցան Չանդեզուր (Լեռնահայաստան): Ապա անկէ ալ անցան Պարսկաստան: Այդ օրէն Հայաստան դարձաւ կրկին Խորհրդային:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ռուս յեղափոխութեան պատճառով Կովկասի ճակատը վճռահարկ, կը կնքուի Պրէսթ Լիթովսկի դաշնագրութիւնը: Կովկասի մէջ կը կազմուի Սեյմը, (Խորհրդարանը). որ պահ մը կը վարէ Կովկասի կռիւները: Ապա կը բաժնուին Կովկասեան ազգերը եւ նախ Վրացիները (Մայիս 26), Ասրպէճանցիները, ամէնէն ետքը Հայերը (Մայիս 28) կը յայտարարեն իրենց Անկախութիւնը, Յունիս 4ին Հայաստան կը կնքէ առաջին դաշնագիրը՝ Պաթումի մէջ Թուրքերուն հետ, Ընդհ. Պատերազմը վերջանալէն ետք Թուրքերը կ'ընկրկին, Սեվռի դաշնագիրը կը կնքուի, որուն համեմատ Հայաստան կ'ընդարձակուի, Սակայն Ամերիկայի հրաժարումը՝ Յունաստանի ներքին խռովութիւնները, Անգլեֆրանսական համակրութիւնները, Պուլշէվիքներու եւ Թուրքերու համաձայնութիւնը, Մուսթաֆա Քեմալ փաշայի ղեկավարած ուժը պատճառ եղաւ որ Հայաստան կորսնցնէ իր շատ մը գաւառները Հայ Պուլշէվիքները երկիցս տիրացան երկրի կառավարութեան եւ այսօր կը վարեն զայն:



Լ Ա . Դ Ա Ս

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆԸ. — Այժմեան Խորհրդային Հայաստանը ունի 26 682 քառակուսի քմ. տարածութիւն: Ունի ութը գաւառներ որոնք են. 1) Երեւան մայրաքաղաքով 2) Լեւինական (ալեքսանդրապոլ) 3) Էջմիածին 4) Լոռի — փամպակի 5) Նոր Պալազիտ 6) Դիլիշան (Իշեւան) 7) Իաշալախազ և

8) Զանգեզուր: Գլխաւոր քաղաքներն են. Երեւան, Լեւինական, Էջմիածին, Նոր Պայազետ, Ղարաֆիլիսէ, Դիլիջան, Աշտարակ, Մեղրի, Ստեփանաւան, Գորիս ևն.:

ԿՍՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ. — Հայաստան ամէնէն առաջ 1922 Յնվ. 28 ին անդամն էր Անդրկովկասի Խորհրդակցութեան անդամներն են. Վրաստան եւ Ատրպէյնան: Այս երեք հանրապետութիւնները միացած են զինուորական արտաքին քաղաքականութեան, մաքսային, փոստ հեռագրական եւ հաղորդակցութեան տեսակէտներով: Այս խնդիրներէն դուրս սուրբ բոլոր հարցերու մէջ իւրաքանչիւրը անկախ է: 1922 Դեկտ. 30 էն լիտեալ Անդրկովկասի Խորհրդակցութեան հանրապետութիւններու Դաշնակցութիւնը միացած է Խորհրդային Ընկերով. Հանրապետութիւններու Դաշնակցութիւնը միացած է Խորհրդային Ընկերով. Հանրապետութիւններու Միութեան, որուն անդամներն են Ռուսաստան, Ռեքսան, Պելոուսիա, Կովկաս, Անդրկովկաս:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԵՐԳԱՂԹ. — Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը իր ներքին գործերուն մէջ բարձրովին անկախ է եւ 1922էն ի վեր կը գործէ խաղաղ պայմաններու մէջ: Մեծ զօրկազմուած է երկրի անստեղծութեան, զիւղատնտեսութեան ջրանցքներու շինութեան ու սոսորումներու կանոնաւորութեան. շինուած են ջրակալքարակայաններ եւ գործարաններ: Նոր թափ ստացած են կաշեգործութիւնը, չերամարումութիւնը, ծխախոտի, բամպակի մշակութիւնը, դիւնեգործութիւնը, մետաղագործութիւնը ևն.: Բազմաթիւ զարոյցներ բացուած են ամէն կողմ, յաջող պայքար ստեղծուած է անգրագիտութեան դէմ, նշանաւոր են արդէն Հայաստանի համալսարանը, երաժշտանոցը, թատրոնները: Օրէ օր կը բազմանան հաղորդակցութեան

միջոցները, խճուղիները, հեռախօսային ցանցերը: Շնորհիւ Հայաստանի կառավարութեան ջանքերուն եւ սփիւռքի Հայութեան ճիգերուն, բաւական թիւով հայեր գաղթած են Միջագետքէն, Յունաստանէն Պուլկարիայէն ևն. եւ հաստատուած են Մայր Հայրենիքին մէջ, երկրի շինարարութեան իրենց մասնակցութիւնը բերելով: Ամբողջ աշխարհի Հայութեան յոյսն ու աչքը դարձած է դէպի ԽՍՀՄ:

Ա Մ Փ Ո Փ ՈՒ Մ

Խորհրդային Հայաստանի տարածութիւնն է 26,682 քառ. քիլոմէթր, ունի ութ զաւաններ, Հայաստանի կառավարութիւնը մաս կը կազմէ Անդրկովկասի Խորհրդակցութեան շինարարութիւնը մաս կը կազմէ Անդրկովկասի Խորհրդակցութեան, որ անդամ է Խորհրդ. Հանրապետութիւններու Միութեան: Հայաստան իր խաղաղ բարգաւաճումին մէջ մեծ զարկ տուած է շինարարութեանց: մշակոյթի ու անասնաբան յառաջդիմութեան, Տեղի ունեցած են ներգաղթ եւ ամբողջ Սփիւռքի Հայութեան աչքը դարձած է դէպի ԽՍՀՄ:



25
W. G. W. Paul.

2401

2013

